



Ananiaji Širakounuoj Mnaçordkh baniç

Anania Širakaçi i lojs ac. K. P

Anania <Širakac'i>; Patkanean, K'erovbê

Goussen 3494





ԱՆՆԵՒՆՅՈՒՆ ԴՒՐԱԿՈՒՆԻՈՅ

ՄՆԱՑՈՐԳԻ ԲԱՆԻՅ

ի

Հայրապետութեան Տ. Տ. ԳԻՈՐԳԻԱՅ վեհափառ Կաթողիկոսի
ամենայն Հայոց



Ս. Պետերբուրգ.

ի սպարսնէ կայսերական ճեմարանէն գրգուռեանց

1877.

3494

По опредѣленію Факультета Восточныхъ Языковъ печатать дозволяется.

Деканъ Факультета *В. Григорьевъ.*



Հռչակաւորն ՚ի համարողական արուեստի և հմուտն ՚ի տոմարական գիտութեան Անանիայ որդի Յովհաննիսի Շիրակունոյ, եկաց ՚ի սկզբան է դարու, յաւուրս Մօրկայ և Աբրուէզ Խոսրովու: Յերկասիրութեանց սորա գոյզն ինչ եհաս առ մեզ և այն աղաւաղեալ և լի թերութեամբ: Օ, օրինակ տպագրիս գաղափարեալ ՚ի վանս Ս. Գ. ազարու, ստացաք ՚ի Հ. Գ. Վ. Աւելշանեանէն, մեծանուն գիտնականէն, որում շնորհապարտ եմք վասն անյապաղ կատարելոյ զինդիր մեր: Ի գլուխսն Ե. և Օ. որ յաղագս Կշոոց և Չափուց, թէ ՚ի բնագրին և թէ ՚ի մեկնութիւնս այլազգի անուանց, նախագասեցաք զտպագրեալն ՚ի Հ. Ա. լգերեանէ և այն սակաւ ինչ միայն համառոտեալ առնուլ ՚ի մերս տպագրութիւն: Զան եղաք անփոփոխ պահել զուղղագրութիւն, գուցէ և սխալանս գրչին օրինակողաց, դուն ուրեք զնոյնանշանս դժուարահասանելի բառից զրոշմելով ՚ի փակաղիթս և ՚ի լուսանցս իջից: Այլում ժամանակի և այլոց քան զմեզ հմտագունից թողլով զպարզաբանութիւն և զլուսաբանութիւն հեղինակիս, թերևս և այլ ընտրելագոյն օրինակք ելցեն յերևան, զնշխարս երկասիրութեանց մատենագրիս ՚ի լոյս ընծայեմք ՚ի գիտութիւն մեր և օտար ազգի բանասիրաց:

[The text on this page is extremely faint and illegible due to the quality of the scan. It appears to be a dense block of text in a historical script, possibly Latin or German, spanning approximately 20 lines.]

ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՎԱՆԳԻ ՄՆԱՅՈՐԴԻՔ ԲԱՆԻՑ՝

Ա.

Անանիայի Շիրակվանցոյ երիցս երանեալ վարդապետին վասն որպիսութեան կենացն:

Աս Անանիա Շիրակվանցի, որ բովանդակեցի զղպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց և հմուտ եղեալ աստուածաշունչ զրոց, և օր ըստ օրէ լուսաւորէի զաչս մտաց իմոց ըստ բանի սաղմոսերգողին: Աւ յամենայնի լսէի զերանութիւն իմաստնոցն և որք իմաստութեան են ՚ի խնդիր, որպէս ՚ի Սողոմոնէ հրամայեալ թէ՛ ստացիր զգիտութիւն և զիմաստութիւն: Աւ յաւելարգել զտգիտութիւն, խաւար կոչելով զծնողն¹⁾: Վու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ: Աւ ես զարհուրեալ յայս սպառնալեաց, և երանութեան կամէի ժամանել, փափաքեցայ իմաստութեան: Աւ յոյժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչինչ յարմարի բան իմաստասիրութեան առանց թուոյ. կարծելով զսա մայր ամենայն իմաստից: Աւ ՚ի Հայս ոչ գտի մարդ որ գիտակ էր իմաստասիրութեան և ոչ զիրք արուեստից գտի յաշխարհիս: Ապա դիմեցի յաշխարհն Յունաց և հասի ՚ի Թէոդուպոլիս, և գտի անդ այր մի բանաւոր, հմուտ գրոց եկեղեցականաց, որ կոչէր Աղիազարոս անուն: Աս պամեաց ինձ՝ թէ զոյ այր մի համարող յաշխարհին Չորրորդ Հայոց, Քրիստոսատուր անուն նորա: Աւ չոգայ արարի իմ առ նա աւուրս

¹⁾ ՚ի տպ. ծնունդն:

զամենայ: Եւ տեսի զի ոչ ունէր զբովանդակ արուեստն, այլ
աստի և անտի ծայրաքաղ: Եւ անտի զնացի ՚ի Արստանդնուպո-
լիս: Եւ պատահեցան ինձ ՚ի ծանօթից իմոց, որք անդ էին: Եւ
ասացին ինձ՝ է՛ր յանձն առեր այնքան ճանապարհ աշխատիլ:
Եւ Տիւքիկոս վարդապետն Ռիզանդիոյ հուպ է առ մեզ ՚ի ծովե-
զերն Պոնտոսի, որ կոչի Տրապիզոն: Եւ ի մաստուծեամբ և զի-
տակ Հայերէն գպրութեան և երևելի թագաւորաց: Եւ ասացի
ես, ուստի՞ զիտէք զուք զայս: Եւ նոքա ասեն՝ տեսաք բազում
ճանապարհորդս եկեալ առ նա, վասն հօր զիտութեան նորա:
Եւլ այժմ նաւակից եղև մեզ Փիլազը սարկաւազն հայրապետին
Արստանդնուպոլսոյ, և բազում մանկունս ամէր առ նա յաշա-
կերտութիւն: Օչ այս լուեալ փառաւորեցի զԱստուած, որ զիա-
փաք ծառային իւրոյ լցոյց: Որպէս և ասէ թէ՛ հայցեցէք և
գտջիք: Եւ երթեալ իմ գտի զնա ՚ի վիպարան սրբոյն Եւզինեա:
Եւ պատմեցի զգնալն իմ առ նա: Եւ նա ընկալաւ զիս ուրախու-
թեամբ և ասէ, գոհանամ զԱստուծոյ որ առաքեաց զքեզ ՚ի ինդիր
իմաստից, առնել զարուեստս զայս ՚ի վիճակ սրբոյն Վրիգորի, և
առաւել ուրախ եմ, զի յինէն աշակերտի աշխարհն այն, զի ես ՚ի
մանկութեան իմում շատ կացի ՚ի Հայս, և տգիտութիւն էր ՚ի
նմա: Եւ վարդապետն Տիւքիկոս, որ գնացի առ նա, սիրեաց զիս
որպէս զորդի իւր և պարապեաց յիս զամենայն խորհուրդս իւր:
Եւ ետ ինձ Տէր շնորհս, և ուսայ լիով զարնետա համարողու-
թեան: Մինչ զի նախանձեալ ընդ իս աշակերտակցացն որ ՚ի
դրանն արքունի: Եւ կեցի առ նա ամս ը, և ուսեալ հմուտ եղէ
զրոց բազմաց, որք չէին թարգմանեալ ՚ի մեր լեզուս: Օչ ի կայր
առ նա անչափ զրեանք, զազունիք և յայտնիք, (եկեղեցականք) և
արտաքինք, արուեստականք և պատմագիրք, բժշկականք և ժա-
մանակագիրք: Եւ թէ մի մի անուանիցեմ, քանզի չիք ինչ գիրք
որ առ նմա ոչ գտանէր: Եւ թարգմանութեան այսպիսի ունէր
շնորհս ՚ի հոգւոյն սրբոյ: Իբրև կամէր թարգմանել զյունարէն
գրեալսն ՚ի Հայ, ոչ գեղերումն առնէր որպէս զայլ թարգմանիչսն.
հայերէն ընթեռնոյր լեզու՝ իբրև զհայերէն գրեալսն: Եւ պա-
տմեաց թէ՛ որպէս եղէ հմուտ Հայ լեզուի և այս իմաստութեանս:
Եսաց թէ՛ ես ՚ի Տրապիզոն քաղաքի մանկութեամբ կացեալ ՚ի

գուռն Յովհաննու զօրավարին զինուորեալ ՚ի Հայս և բազում
ժամանակս կացեալ մինչև ՚ի Մօրիկ թագաւորն և ուսայ լեզու և
զպրուծիւն: Իսկ ՚ի յարձակման զօրացն Վարսից ՚ի վերայ Յու-
նաց, վիրաւորեալ ՚ի պատերազմի, փախստեայ ՂՆտիոք, և
ամենայն ինչք առան յաւարի: Յայնժամ խնդրեցի ՂՆտուծոյ
զբժշկութիւն վիրացս, և ուխտեցի ասելով. եթէ շնորհեսցես
ինձ կեանս, ոչ գանձեցից դանձս անցաւորս, այլ հետ ընթացայց
գիտութեան գանձուց, որպէս ասէ. ընկալարուք զխրատ և մի
զարծաթ. զգիտութիւն առաւել քան զոսկի: Եւ պարզեաց
ՂՆտուած զխնդրուածս իմ. գնացի ողջացեալ ՚ի քաղաքն Լըու-
սաղէմ, և անտի ՂՂբքսանդրիայ, և անտի ՚ի Հնովմ, և կացեալ
ժամանակս, դարձայ ՚ի Կոստանդնուպօլիս, և գտի վարդապետ
Լթենա իմաստասիրաց քաղաքին, այր երևելի և կացի առ նա
յուսման ամս ոչ սակաւ: Եւ կատարեալ իմաստութեամբ դարձայ
՚ի տեղիս: Եւ սկսայ վարդապետել և ուսուցանել: Եւ յետ սակա-
ւանց վախճանեցաւ վարդապետն. և ոչ զոք գտեալ համագունակ
յաշակերտացն հրամանաւ թագաւորին և իշխանացն առաքեցին
հրաւիրակս, զի գնացեալ նստցի յաթոռն: Եւ նա ոչ առ յանձն
ասելով. թէ՛ ես ուխտեալ եմ երկնաւոր թագաւորին ոչ հեռանալ
՚ի տեղւոջէս: Եւ այնուհետև գային առ նա անտի յուսումն յա-
մենայն աշխարհաց առ ծովածաւալ գիտութիւն:

Եւ ես տրուպս ՚ի Հայաստանեաց ուսայ ՚ի նմանէ զհզօր արու-
եստս զայս, որ թագաւորաց է ցանկալի և բերի յաշխարհն մեր,
առանց ուրուք լինելով ձեռնտու, միայն ջանիւ օգնականութեամբ
բըն ՂՆտուծոյ և աղօթիւք սուրբ Լուսաւորչին. թէպէտ և ոչ ոք
եղև շնորհակալ իմոց աշխատութեանս. և ոչ սիրեն Հայքս իմաստ
կամ գիտութիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք: Օ՛ր իբրև եկի ՚ի
Հայս, բազումք եկին առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ ոչ
մնացին կատարման արուեստիս. թողին զիս և մեկուսացան, և սկսան
ուսուցանել զոր ոչն գիտէին, և ոչ էին հասու: Կեղծաւորք և սնա-
փառք, ցուցանել կերպարանս գիտութեան և կոչիլ ՚ի մարդկանէ
ուարբի: Եւ ասեն ՚ի վերայ իմ պարսաւանս, որք յինքենէն յե-
րիւրեալք: Եւ ես ոչ թէ զի ունէի չարութիւն իբրև զնոսս, ՚ի
վարդապետել և յուսուցանել. բայց զմտաւ ածեմ զտէրունական

բանն, որ ասէ. իմ է վրէժինդրութիւն, և ես հատուցից: Ազարձեալ թէ՛ արկ զոսկին իմ ՚ի սեղանաւորս, և ես եկեալ տոկոսիւք պահանջեմ: Ապա ոչ արգելից յումեքէ որք կամէին ուսանել: Աւ զայս անմահ թողում ձեզ, վարդապետք ուսումնասիրաց և փափաքողաց, մի արգելէք, և Քրիստոս, որ ձրի շնորհատու է, առնուք զհատուցումն, և Քրիստոսի փառք պիտմ. . .

Բ.

Անանիայի Շիրակացւոյ Համարողի ասացեալ ՚ի Յայտնութիւն Տեառն և Փրկչին մերոյ.

Բազում աշխատութիւն դործառութեանս մերոյ վասն սրբոյ տօնից Աստուծոյ, էր յոր հասաքս, և զոր ճառել արժանաւոր եղեաք. նախ զտօնն Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է սկիզբն տօնից և տարեկանաց մերոց, և գլուխ կացուրդաց, և ամենայնից ՚ի Քրիստոս յիշատակաց: Տօն սրբոյ Ծննդեան Քրիստոսի, բժ առուրբ յառաջ քան զտօն Մկրտութեանն, ոչ կարգեցաւ ՚ի սրբոց առաքելոցն, և ոչ ՚ի նոցուն փոխանորդացն, որպէս և յայտնի է ի կանոնաց սրբոց առաքելոցն: Քանզի գրեալ է ՚ի վեցերորդ գլուխ կանոնացն այսպէս. եթէ՛ կարգեցին առաքելքն և եզին հատաստութեամբ, թէ եղիցի տօն Ծննդեանն և Յայտնութեանն Տեառն և Փրկչին մերոյ գլուխ և առաջնորդ տօնից Ակեղեցւոց, որ օր իմ է տեբեթ¹⁾ ամսոյ, որ է զ յա նուարի ըստ Հռովմայեցւոց:

Իսկ յետ բազում ամաց նոցա կանոնադրութեանն գտաւ տօնս այս, որպէս ասեն ոմանք, յաշակերտաց հերձուածոյն Աբրինթոսի, և ՚ի Յունաց ընկալեալ եղև որպէս արդարև ՚ի տօնասիրաց և ՚ի ջերմագունից բարեպաշտութեան, և ՚ի նոցանէ ընդ աշխարհ ամենայն սփռեալ տարածեցաւ: Իսկ յառուրս սրբոյն Արստանդիանոսի, ՚ի սուրբ ժողովին Նիկիայ ոչ եղև ընկալեալ տօնս այս ՚ի սրբոց հարցն. այլ ըստ նոյն կանոնի սրբոց առա-

*հետոյս յայտն
տօնն աստ ճանաչու*

1) תבט.

քելացն սահմանեցին տօնել: Եւ յայտ է ՚ի Թղթոյ երանելոյն Սակարա հայրապետին Երուսաղեմի, զոր ՚ի Հայաստանեացս զրեաց աշխարհ յաղագս խրատու սրբոյ Սկրտութեանն. քան զի նա մի էր ՚ի սրբոց յԺԷ հարանց որք ՚ի Նիկիա. և զրեալէ այսպէս ՚ի վեցերորդ գլխի հրամանի խրատուութեանն. բայց կարգաւորութիւն Սկրտութեան սրբոյ աւագանին, և փոյթ յօժարութեանն չէ տօնիցն, յորում առաւել ևս փափագեն մեզ ազգ փութացուցանել ՚ի մրտութիւն զընծայեալսն Աստուծոյ, և կատարել զօրինակ մեծ փրկական խորհրդեանն, որ ՚ի սուրբ և յերևելի աւուրս կատարեցաւ: Եւ զայս մեծաւ փափագանօք փութան կատարել ՚ի սուրբ տեղիս Քրիստոսի. զոր պարտ է և ամենայն քրիստոնէից երկիւղածաց Քրիստոսի կատարել ՚ի նոսա զկոչումն Սկրտութեանն ՚ի սուրբ յայտնութեան Ծննդեան Տեառն, և փրկական Օսակի կենարար չարչարանացն Քրիստոսի և ՚ի շնորհալից Պենտեկոստէիցն, յորում աստուածային էջք Հոգւոյն կենդանաւորի ՚ի մեզ ծաւալեցան: Օ որ պարտ է զիւրաքանչիւր տօնիցն պատճառ. Ծննդեան և Սկրտութեան ծանուցանել. զի և դուք ՚ի նոյն փութացեալք կատարիցէք. քանզի լուսաւոր ծննդեանն Քրիստոսի և մեր մեղսաքաւիչ ծնունդ սրբոյ աւագանին ՚ի նմին փրկական աւուրն կատարեցաւ. զի ՚ի նմին աւուր առ յանձն մկրտիլ յաղագս առ մեզն զիջանելոյ: Օ ի ոչ եթէ ինքն կարօտ ինչ էր սրբութեանն, այլ զմեզ կամեցաւ սրբել ՚ի մեղացն պղծութենէ. որ մեծաձայն կոչմամբ ազաղակէ ասելով. եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ. զի ըստ նմին օրինակի ծնեալք ընդ նմա, և մկրտեալք ընդ նմին եղիցուք յաւուր ծննդեանն քրիստոսի: Իսկ ՚ի կենսաբեր յարութեանն գատկին ՚ի ձեռն մեռուցանելոյ զմեզս մեր ՚ի ջուրս աւագանին՝ նմանողք լինիմք մեռելութեան մահուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և երեքիկն ընկղմամբն թաղել ՚ի ջուրս սրբոյ աւագանին, զերեքօրեայ թաղումն Տեառն մերոյ նշանակեմք յանձինս մկրտելոցն, զոր և աստուածայինն առաքեալ յայտնապէս ցուցանէ, ասելով. թէ թաղեալք ընդ նմին մկրտութեամբն, նմանողք եղիցուք նմանութեան մահու նորա. զի և նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ՚ի կեանսն յաւի.

տենականս : Իսկ յաւուրս շնորհապարգև սրբարար Պենտեկոստին զուսապայծառ ազգումն Հոգւոյն կենդանարարի, որ ՚ի տեսակս հրեղէն լեզուաց իջեալ յառաքեալսն, պարգևելով նոցա ձեռս ՚ի վերայ մկրտելոցն դնելով, բնդունելով պարգևս ՚ի Հոգւոյն շնորհաց : Ըստ նմին օրինակի և մեք ՚ի նմին աւուր ձեռս ՚ի վերայ մկրտելոցն դնելով, նոյն հոգի պարգևի. զորոյ զօրինակն զգուշութեամբ անխափան կատարեմք, զի կատարեալք լիցուք :
Օ այս Մակարիս :

Օ այս վկայէ և Մակարայ աստուածաբանն Քրիզոր յաղագս յերիս տօնս առնելոյ զմկրտութիւնս ՚ի ճառի Մկրտութեան, բամբասելով զհեղգացեալսն ՚ի մկրտութիւնս, ասէ այսպէս : Օ այս ինչ և զայս բաղբաղիս, և պատճառես մեզաց պատճառս. ասես, անսամ Յայտնութեանն Տեառն. Յարութեանն Տեառն, որ է ինձ պատուականագոյն. Պենտեկոստին անսամ. ընդ Քրիստոսի լուսաւորել լաւագոյնէ. ընդ Քրիստոսի յառնել Յարութեան աւուրն. զՀոգւոյն տօնել զերեւումն : Եւ ապա զինչ. եկեսցէ վախճան յաւուր յորում ոչ գիտիցես, և ՚ի ժամանակի յորում ոչ կարծիցես. ամենայն քեզ ժամանակ մկրտելոյ. վասնզի և ամենայն վախճանի :

Իսկ զինի սորա յաջորդէ զաթոռ Հայրապետութեանն Լորուսաղեմի սուրբն Կիւրեղ, և զԹագաւորութիւնն ՚ի սրբոյն Կոնստանդիանոսէ պայազատէր Կոնստանդոս նորին որդի հանդերձ եղբարբքն : Օ սա ասեն հաւանել հերձուածոյն Լորիոսի. բայց ոչ հակառակ ճշմարտութեանն ինչ մաքառէր, այլ ՚ի կամն զերկուսեան թողեալ կողմանս, որ ոք զինչ և հաճէր՝ ունէր, թէ զուղղափառութիւնս, թէ՛ զչարափառութիւնս : Յաւուրս սորա ընկալեալ եղև տօնս այս ՚ի դրան արքունի. և յամենայն տեղիս որ ոք և կամէր տօնել, համարձակութեամբ տօնէին. բայց ՚ի մայրաքաղաքացն չորից Հայրապետացն որ ունէին զաթոռ սրբոց աւետարանչացն : Քանզի առ սովաւ դեռ չէր յափշտակեալ զաթոռ սրբոյն Յովհաննու Արիեսոսէ Կոստանդնուպօլսի. և յայտ է ՚ի կանոնադրութենէ ընթերցուածոց սրբոյն Կիւրղի. քանզի գրեալ է այսպէս. եթէ ՚ի ինձ ամոյն գեկտեմբերի է տօն Ղաւթի և Յակոբու, զոր յայլ քաղաքս ծնունդն Քրիստոսի առնեն. ասեն

վասն այսր Յոյնք այսպէս. եթէ վասն զի հայրապետն ամենայն
 ուխտիւն և բազմութեամբ ժողովրդականաւն ՚ի Մեթղէէմ գալով
 տօնէ, և սակաւք ՚ի քահանայից, որք ՚ի քաղաքին մնան՝ զտօն
 Ղաւթի և Յակոբու կատարեն. իբրթէ լոկ քաղաքին իցեն ըն-
 թերցուածքն. և վասն այսր զրեաց ասեն թէ յայլ քաղաքս, որ-
 պէս թէ զՄեթղէէմէ ակնարկելով: Եւ զայս ոչ ոք երբէք ՚ի լաւ
 իմացողացն յանձն առնու, զի թէ այդպէս ունիմք, հիմ՝ զկանոն
 Կանգեան ՚ի վեց յանուարի կարգեաց նոյն ինքն Աիւրեղ: Քանզի
 զրեալ է ՚ի սկզբան կանոնին այսպէս. թէ տօն սրբոյ Յայտնութեան
 կատարի ՚ի յանուարի, որ վեց է ամոյն. ժողովին ՚ի հովուանոցն,
 և զայս ինչ կանոն կատարեն. և ապա ՚ի Մեթղէէմ և ՚ի յայրին:
 Եւ զայս յայտնապէս ցուցանէ ՚ի միում աւուր տօնել զերկոսին. և ով՝
 ժպրհեսցի ասել պարսաւանս ինչ երանելոյն Աիւրղի, կամ ՚ի
 նմանէ կարգեցելոցն. և ով՝ որպէս նա առ Քրիստոսի, և առ ում
 այնպիսի երևեալ նշան, և յումէ՝ այնչափ բիւրք լուսաւորեալք.
 կարծեմ թէ և ոչ ՚ի սրբոյն Պաւղոսէ: Քանզի յաւուր երևման
 լուսեղէն խաչին՝ անթիւք բիւրք բիւրուց հաւատացին ՚ի Հրէից
 և ՚ի Հեթանոսաց. քանզի ցԱրմասանդոս որդի Արտասանդիանոսի
 արդելեալ էին Հրէայքն իջանել Արուսաղէմ. և ՚ի նմանէ հա-
 մարձակեալք ժողովեցան բազում Հրէայք, և բնակեցան Արու-
 սաղէմ. այլ և որք ՚ի Տիրերեայ և յայլ քաղաքս Հրէայք էին ՚ի
 տօն անդր էին ժողովեալք. այլ և բազումք ՚ի հեթանոսաց վասն
 ամբոխոյ ժողովեալք, առ ՚ի վաճառ դիմեալ էին, որոց տեսեալ
 զաստուածային երևումն, հաւատացեալք ՚ի Քրիստոս, ամենեքին
 դիմեցին ՚ի մկրտիլ, որոց ոչ բաւեցին աւազանք և ոչ ջրամբարք
 կիսատեւանցն. մինչև հրամայեալ երանելոյն զբազանիսն մեծ սրբել
 զոր զեմեստսին (զիմեստիան, Δημόσιος?) կոչէին, և անդ ևս առնել
 զփրկական մկրտութիւն: Եւ յա երրորդ նշան լեալ Արուսաղէմ
 յաւուրս սուրբ Պենտեկոստէին: Բայց ես կարծեմ զսա վեհագոյն
 քան զառաջինն, որպէս ամենեցուն յայտնի է, էջք սրբոյ Հոգւոյն
 յառաքեալսն ՚ի մէջ բազմութեան ժողովելոց Հրէից և այլոց
 սղգաց բազմաց, որք ՚ի Պործս առաքելոցն յանուանէ սրատմին, և
 յայնժամ առաքելոցն միայն պարզեցաւ Հոգին: Իսկ ՚ի յայմ
 բազմութեան ժողովրդեան ՚ի ձեռն սուրբ մկրտութեանն և քան

կոս
 ՚ի
 ոցա
 ւոյն
 ս ՚ի
 ակն
 ւք:
 ազս
 ամ
 այս
 սես,
 ր է
 տոսի
 աւ
 ցցէ
 մ ոչ
 նայն
 րու
 Արմ
 էրծ
 բայց
 զեր
 ուղ
 նկա
 ոք
 քա
 տա
 թոս
 է ՚ի
 եալ
 ի և
 սեն

զերկրորդն ևս առաւել բարձրագոյն, զոր Յովսէպոսն պատմէ,
եթէ յաւուրս Պենտեկոստէիցն զըրդիւն և սարսափիւն նախ
զքահանայիւքն պատէր, և ապա զբազմութեամբ ժողովելոցն, ապա
և բարբառ յանկարծակի անդուստ ՚ի ներքին տաճարէն լսելի
լինէր զայս օրինակ բանից, եթէ՛ զնամք աստի, զնամք: Իսկ ՚ի
յայսմ ոչ զնան զօրութիւնք Տեառն ՚ի ստորնայնոյս, այլ ՚ի վեր-
նոյն աստ զալ յայտնապէս ցուցաւ, և ծածկաբար պարգևեցաւ,
մինչև ցՊոնտանդեայ թագաւոր երանելին Վիւրեղ յօժարեաց
գրել թուղթ աղերսանաց և կոչել զնա բարեպաշտ և տեղեակ
աստուածայնոյն, իբր թէ ողոքանօք զնորայն կարծէր շահել
զփրկութիւն, առաջի զնելով զաստուածային եղեալ նշանի, և
զբազմութիւն զարձելոցն, թէ զմէ՛ և ոչ զուրնդ նոսա: Արդ եթէ
զսա Յունաց հաճոյ թուեցաւ քամայել, ժամ է նոցա և զաւետա-
րանն անպատուեալ, վասն ոչ ընդունելոյ զտօն Ծննդեանն, զի սա
և նա ՚ի միում աւուր ցուցանեն և զԾնունդն և զՊիրտութիւնն
Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Քանզի գրեալ է Ղուկայ յաւետա-
րանին ՚ի խորհրդեան մկրտութեանն այսպէս, թէ և ինքն Յիսուս
էր ամաց իբրև երեսնից սկսեալ, ահա յայտնապէս ցուցանէ թէ
՚ի նոյն աւուր ծննդեանն մկրտեցաւ, և սկիզբն արար երեսնամուտն
կատարեալ հասակի և վարդապետութեան: Ասեն և զայս Յոյնք,
եթէ ժք օր սկիզբն մարթի լինել տարւոյն, և ոչ մէջ, և կամ կատար,
եթէ այգպէս իմանամք, և զեօթանասուն աւուրց մարթի ասել եթէ
ոչ մէջ է տարւոյ կամ կատար: Իսկ վասն առաքելական կանոնին
այսպէս ասեն Յոյնք, եթէ ոչ էր նոցա պարապումն ստուգիւ-
քննել զաւուրս տօնից, քանզի գործ նոցա աւետարանելն էր և ՚ի
հեթանոսականացն զատուցանել տօնից: Արդեօք հաճոյ թուիցի
ուսմք այսպիսի բան ՚ի վերայ առաքելոցն լսել, թէ արդարև այն-
չափ անփոյթ արարին զկարգաւորութենէ տօնից, ընդէր՝ ապա
և ընդ արևելա ուսուցին մեզ երկրպագել: Հիմ՞ և զիւրակէ
սօնախմբել, պատուել և զատարկանալ, և զչորեքշաբաթի և
զուրբաթ պահել, զի թեթևագոյնք այսոքիկ են քան զտօն Ծննդ-
եան և Պիրտութեանն: Բայց տայեաք և յայսմ ևս նոցա թոյլ,
միայն թէ այլովքն գային ՚ի հաւանութիւն: Քանզի ասեն վասն
սրբոց Հարցն որք ՚ի Նիկիա եթէ ծածկեաց ՚ի նոցանէ Աստուած

զայս. զի ոչ զամենայն շնորհ մի ումեք տայ, եթէ ոչ էր ճառեալ
առ նոքօք. այն. այլ զհտացին և եպերելով ասացին եթէ զոր յայլ
քաղաքս ծնունդ կարծեն առնել. բայց ես հաւանիմ որով Հոյնքն
պարծին. երանելեացն ասեմ Բարսղի և Պրիգորի Անձիանձու.
զիտեմ զնոսա սուրբս: Ճշմարիտս, հոգևորս և հետևողս առաքե-
լոցն: Եւ եթէ էր նոցա հրաման ինչ յաղագս պար, ընդունելի
զի և Պաւղոս հրամայէ, եթէ երկրորդին յայտնեսցէ, առաջինն
լուեսցէ: Բայց ես ոչինչ տեսանեմ զնոցա հրաման յաղագս պար
տօնի, բայց որ զերկոցուն տօնիցն եղեալ է սրբոյն Աիւրղի զըն-
թերցուածն և զսաղմոսս, ոչ իմանամ զայն յերկուս բաժանել
այլ թիւ միում աւուր զերկոցունցն խորհրդոցն լիով ունի զկարգ
և պայծառացուցանել զտօնն: Իսկ որ սրբոյն Պրիգորի բանիւ
կարծեն զատուցանել զտօնս, ոչ ինչ հրաման զնորայն կարեն ցու-
ցանել վասն պար. այլ վկայութիւնս իմն առնուն ՚ի նորա ասա-
ցուածից. և ըստ իւրեանց կամացն ձևացուցանեն. ասեն, եթէ ՚ի
ճառի ծննդեան պսակէս ասէ. Արդ փոքր ինչ յետոյ տեսցես
զՅիսուս սրբեալ Հորդանանաւ. և ասեն թէ՛ յաւուրս ծննդեան
ասաց զայս ճառ. և փոքր ինչ յետոյ՝ զերկոտասան օր ակնարկէ
որ յառաջ քան զՍկրտութիւնն: Արասցուք առ այս պատաս-
խանի: Ես պսակէս իմանամ եթէ անդէն յաղագս նոյն խօսիցն
ասաց՝ փոքր ինչ յետոյ, զոր ասէն, իսկ եթէ զայթակղիս մար-
մնանալովն և նուաստանալովն, և արդ փոքր ինչ յետոյ տեսցես
զՅիսուս սրբեալ զՀորդանան իւրով մկրտութեամբ, և ոչ նու-
աստացուցեալ այլ ձոխացուցեալ զմարմինն ցելլով զերկինս և աս-
տուածավայելչաբար ՚ի Հօրէ և ՚ի Հօգւոյն վկայելով: Ապա եթէ
պսակէս իմանաս, իմն և յետ յարութեանն եկեալ ՚ի մկրտութիւն.
զի առաջի նոյն բանիս զչարչարանաց և զյարութենէ ճառեալ
ասէ, և զնովիմբ ածեալ ՚ի նոյն յարեալ ասէ. արդ փոքր ինչ
յետոյ: Բայց եթէ մաքրեսցես զմիտս զիւրով իմանալ ՚ի նոյն իսկ
ճառէ, եթէ ՚ի միում աւուր զերկոսին սահմանեաց. քանզի ասէ ՚ի
միւսում տեղ ՚ի նմին ճառի պսակէս. բայց այժմ Աստուծոյ յայտ-
նութեանս տօն է. քանզի երևեցաւ Աստուած մարդ ծննդեամբ:
Ահա զուգեաց զերկոսին: Ասեն և զայս Հոյնք, եթէ երկոցունց
տօնիցն կոչի յայտնութիւն, և Օննդեանն և Սկրտութեանն. արդ

այս ամենեցուն յայտնի է, եթէ ՚ի վեց յանուարի կոչի յայտնութիւն և ոչ եթէ ՚ի ին գեկտեմբերի. ոչ ՚ի Յունաց և ոչ յայլազգեաց, և ոչ լսեալ ուրուք երբէք երկուս յայտնութիւնս, այլ մի. ապա թէ յայտնութիւն ասէ, և զծննդենէ ճառէ, յայտ է թէ ՚ի միում աւուր ցուցանէ :

Վարձեալ և ՚ի Սկրտութեանն ճառէ առնուն Յոյնք իւրեանց ՚ի վկայութիւն զբանս զայս. Արդ զծննդեան զվայելչականս տունեցաք : Աւ զնովիմբ ածեալ ասէ. իսկ այժմ գործքս այլ քրիստոսի և այլ խորհուրդ : Այլ ես հաւանիմ. այլ է գործ և այլ է խորհուրդ. բայց ոչ յայլում աւուր. զի և առաջինն բան ինձ վկայէ, զծննդեանս զվայելչականս տունեցաք ասէ, և ոչ զծննդեանն. զի եթէ երկոտասան աւուրք վերջն, ապա զծննեանն պարտ էր ասել, և ոչ զծննդեանս :

Վարձեալ եթէ ոչ էր ՚ի միում աւուր, ընդէր՝ և յիշէր զօրծննդեանն. և ոչ լոկ զխորհուրդն ասէր, որպէս և զայլ տնտեսութեանն և զչարչարանաց : Բայց դու զնուազեցուցիչսն ասես, և զբարձրացուցանողքն զանց առնես որպէս և նոյն ինքն Վրիգոր ասէ : Արդ անկէ դիտեաց ինձ և զայն բան որ ՚ի ճառի մկրտութեանն ասէ այսպէս. երիս ծնունդս մեզ գիտէ բանս, որ ՚ի մարմնոյ է, և ՚ի մկրտութենէ և յարութենէ, և զնովիմբ ածեալ ասէ, զայտոսիկ զծնունդս զամենեսեան պատուեալ իմ : Քրիստոս երևի, զմեծ փչամբն առաջնով և կենդանականաւ. և զմիւսն մարմնանալովն և մկրտութեամբն, որով ինքն մկրտեցաւ. իսկ զմիւսն յարութեամբն զոր ինքն սկսաւ. որպէս եղևն անդրանիկ ՚ի բազում եղբարս նոյնպէս և անդրանիկ լինել ՚ի մեռելոց արժանաւոր արար : Արդ յազազս երկուց ծննդոց առաջնոյն ասեմ և վերջնոյն իմաստասիրել ոչ է մերձակայ ժամս. բայց վասն միջնոյս և որ այժմ մեզ է հարկաւոր, որոյ և անուանակից է լուսաւորութեանս օր : Ահա զուզեաց զերկոսին, տեսցեն որք միտս ունին. մին ծնունդ ասաց զմարմնանալն, և զմկրտիլն ՚ի միում աւուր, յոր և անուանի իսկ, ասէ, լուսաւորութեանս օր : Բայց մեք տեսցուք, որ և Օւքարիայի պապանձամբն հնարին Յոյնք զվեցամնեայ աւուրս յղութեան Աղիսաբեթի, որով մարթիմք իմանալ զօր աւետարանութեանն Վաբրիէլի : Բայց ոչպէս ասեն Յոյնք եթէ ՚ի

նոյն աւուր յորում պապանձեցաւ Օւքարիա: Ի նմին աւուր մերձեցաւ Ի կին իւր, և յղացեալ Ի նմին իսկ աւուր, ուստի թուեն աւուրս հարիւր ութսուն: որ դիպեցուցանէ Ի քսան և հինգ մարտի զոր աւետարանութեանն Պարբիէլի. և անտի թուեն աւուրս երկերիւր եօթանասուն և վեց զաւուրս յղութեան սրբոյ Աստուածածնին. ըստ տասնամեայ աւուրց անդրանկածնութեանն, որ դիպեցուցանէ զծնունդն Ի քսան և հինգ դեկտեմբերի: Աղա չեմ քաջ միտ դիր: և քննեսցուք զտեղիս զայս: Մախ զբնագիրն և ապա զաւետարանն. քանզի ասէ բնագիրն այսպէս. եթէ տօնք իմ նուիրեալքն սուրբ կոչեսցին ձեզ. երիս ժամանակս Ի տարւոջն տօնեսցիք. ամենայն արու ձեր յանդիման լիցին ինձ, և մատուցիք պատարագս Տեառն. և յառաջ մատուցեալ ասէ. յամենանն եօթներորդի որ օր մի է: կոչեսցեալ սուրբ լիցի ձեզ, զամենայն գործ մի գործիցէք Ի նմա. և որ օր տասն է նորին ամսոյ եօթներորդի՝ նուիրեալ սուրբ լիցի ձեզ: Առնարհեցուցէք զանձինս ձեր յիններորդէ օրէ ամսոյն յերեկորեայ. և ամենայն ոք որ ոչ խոնարհեսցի, սատակեսցի անձն այն Ի ժողովրդենէ իւրմէ: Աւ օրն տասներորդ նուիրեալ սուրբ լիցի ձեզ. զի օր քաւութեան է նա ձեզ. զամենայն գործ Ի նմա մի գործիցէք. շաբաթ շաբաթուց է հանգիստ. մատուցիք պատարագ Տեառն քաւելով վասն ձեր. և որ օր հնգետասան է նորին եօթներորդի ամսոյ, տօն տաղաւարա հարաց կոչեսցեալ սուրբ լիցի քեզ, զամենայն գործ սպասաւորութեան մի գործիցէք Ի նմա. Ի խորանս բնակեսցիք շաբաթուց Ի հանգիստ. մատուցէք պատարագս Տեառն զեօթն օր. և օրն եօթներորդ սուրբ կոչեսցի. շաբաթ հանգիստ. զամենայն գործ սպասաւորութեան մի գործիցէք Ի նմա: Օ այս բնագիրն:

Արդ պապանցումն Օւքարիայի ճշմարիտ Ի տասն թշրին¹⁾ ամսոյ է. զի նա է ամիս եօթներորդ. և այն է օր քաւութեանն, յորում մտանէր քահանայապետն Ի սրբութիւն սրբութեանցն մի անգամ Ի տարւոջն. զոր և Պաւղոս վկայէ: Բայց Ի նմին աւուր մերձե՛նալ Օւքարիայի առ կինն անպատշաճ էր. զի նա էր քահանայապետ տարւոյն. և մեծ տօն տաղաւարահարացն առաջի

¹⁾ ԴՊՏԻ.

կայր, և ամենայն Խարայէլ անդ ժողովեալ էր, զեօթն օր տօնելոց էին զտօն տաղաւարահարացն, և անմարթ էր քահանայապետին թողուլ զժողովուրդն և երթալ ՚ի տուն իւր, զի բացեայ և ոչ Արուսաղէմ ունէր զբնակութիւն իւր, և վկայ ինձ սուրբ աւետարանն է. քանզի գրեալ է այսպէս. Եւ ժողովուրդն ակն ունէր Օւփարիայի, և զարմանային ընդ յամէլ նորա ՚ի տաճարին, և իբրև ել՝ ոչ կարէր խօսել ընդ նոսա, և իմացան թէ տեսիլ ետես ՚ի տաճարին, և նա նշանացի խօսէր ընդ նոսա և կայր պապան ձեալ: Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, զնաց ՚ի տուն իւր, և յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Աղիսարեթ կին նորա: Եւ զայտնապէս ցուցանէ թէ յետ կատարման աւուրցն տօնականաց եղև մերձենալ Օւփարիայի առ կին իւր: Եւ վասն առաւել հաստատութեան բանիս երկիցս կրկնէ եթէ՛ կատարեալ զաւուրս պաշտամանն, և դարձեալ թէ՛ յետ աւուրցն այնոցիկ, և ով ոք ոչ զիտէ որք միտս ունին, եթէ՛ մինչ ժողովուրդեանն հրամայէր սրբել և պատուել ոչ միայն զտօնն, այլ և յաղագս տօնին զամսամուտն, և զյառաջիկայ աւուրն զերեկոյ: Եւ պա զիսորդ ՚ի մէջ երկուց գլխաւոր տօնիցն քահանայապետն թողոյր զժողովուրդն, և ՚ի տուն երթեալ մերձենայր ՚ի կինն, և կամ ՚ի նոյն աւուր տօնին: Եւ արդ մի լիցի մեզ հակառակել և վիճարանել ՚ի ճարտարութիւն արուեստիս պանծալով, այլ ճշմարտութեանն հաւանեսցուք և աստուածայնոց գրոց, որպէս և յայտնի իսկ եղև ՚ի տանն թշրին ամսոյ մերձաւորութիւն Օւփարիայի, և յուրթիւն Աղիսարեթի, և թուեալ զաւուրս վեց ամսոյն հարիւր ութսուն օր, ցուցանէ ՚ի վեշտասան նիսան¹⁾ ամսոյ որ լինի վեց ապրիլի ըստ Հռովմայեցւոցն, ուր եղեն աւետիք սրբոյ Կուսին, և թուեալ տասնամեայ աւուրս անդրանկածնի, կատարի երկերիւր եօթանասուն և վեց օր, ի քսան և մի տերեթ ամսոյ որ է վեց յանուարի ըստ Հռովմայեցւոց: Յայսմ կացցուք հաստատուն անխախտելի, և քաւ և մի լիցի մեզ յերկուս բաժանել, ալ ՚ի միում աւուր արասցուք զՇնունդն և զՄկրտութիւնն, և զերկոցունցն որք պահելով զկարգս, հետևեսցուք սրբոց ասաքելոցն և երանելեաց հարցն

1) יָסִיג.

որ ՚ի Նիկիայ, և մերոց վարդապետացն : Քանզի ոչ եթէ չեհաս
 ՚ի նոսա, և վասն այնր չընկալան, այլ յառաջ քան զբազում ժա-
 մանակս և մերս եկն յաշխարհ, և ընկալեալ եղև որպէս յանգէտ
 եղելոց ճշմարտութեանն, և հարուստ ամն ձգեալ մինչև ցերանե-
 լին Յոհան կաթողիկոսն որ ազգաւ Մանդակունի էր, և ապա
 նորա ՚ի խնդիր եղեալ ճշմարտութեանն, և քննեալ և հասու-
 լեալ թողուլ հրամայէ, յետ որոյ և մեք հետևեսցուք և Յունաց
 զայս արասցուք պատասխանի, եթէ մեք աշակերտք եմք սրբոց
 հարցն ձերոց որք ՚ի Նիկիայ, և զոր ուսաք՝ հաստատուն ունիմք
 և ոչ թիւրեսցուք, դուք եթէ ոչ զձերոց հարցն գնացէք զձա-
 նապարհ, թուի թէ առ ձեզ կրեցան Հրէիցն կիրք, որպէս նոքա
 զՇամրտացիսն ուսուցին, և Շամրտացիքն զոր ուսանն՝ պահե-
 ցին, և դուք նոցա նմանիք, մեր ոչինչ վնաս է :

Բայց մեք հաստատագոյն ևս քան զՇամրտացիսն և առաւել
 բարձրագոյնք և աստուածայինք, և առ ձեզ այլ ոչինչ ունիմք
 պատասխանիս, զի ոչ հրամայէք գործ ճշմարտութեան, այլ միշտ
 իշխանութեան, բռնութեան և ճարտարութեան : Գիտեմ սակաւս
 ՚ի Յունաց որք զայդ տօնէին մինչև ՚ի Յուստ(ինի)անոս թագաւոր,
 և ՚ի նմանէ հարկաւորեալք ամենեքեան ընկալան, Արուսաղէմ,
 Հռովմ, Աղեքսանդր և ամենայն աշխարհ : Բայց մեզ մի լիցի ՚ի
 մարդկայնոցս երկնչիլ յասէ, առաւել քան յաստուածայնոցն, և
 եթէ հաճոյ թուեսցի ձեզ, զՅովբայն բարբառեցայց, եթէ մոլո-
 րեալ ինչ իցեմ՝ արարէք զիս խելամուտ, բայց նա ուրեմն խոտան
 են բանք ճշմարտի, սակայն ոչ թիւրեսցուք ՚ի ձանապարհէ
 հարցն :

Արդ այսուհետև յայտ արասցուք զանցնիւր ազգացն, եթէ
 յորում ամեան, կամ քանի աւուրցն լինի սուրբ Յայտնութիւնն :

- Ե. Յայտնութիւն ըստ Աբրայեցւոցն Տերեթ (ܐܒܪܗܐ) ամսոյ, որ օր
 իմ է միշտ :
- Բ. Յայտնութիւն ըստ Ասորոց Քանուն ամսոյ, որ օր զ է միշտ :
- Գ. Յայտնութիւն ըստ Աբարացւոց Արսոն (?) (ասսամ, ܐܪܨܐ)
 ամսոյ՝ որ օր իմ է միշտ :

- Գ. Յայտնութիւն ըստ Լթիովպացւոց Թերաս (Tir) ամսոյ, որ օր Ժն է միշտ :
- Ե. Յայտնութիւն ըստ Լգիպտացւոց Տուբի¹⁾ (Tybi) ամսոյ, որ օր Ժն է միշտ :
- Զ. Յայտնութիւն ըստ Մակեդոնացւոց (?) Մակաորիոն (μακκαθηριών) ամսոյ, որ օր Խն է միշտ :
- Է. Յայտնութիւն ըստ Յունաց Լւդինէոս (Αύδυνατος) ամսոյ, որ օր Դ է միշտ :
- Ը. Յայտնութիւն ըստ Հռովմայեցւոց Յանուարի (Januarius) ամսոյ, որ օր Դ է միշտ :
- Թ. Յայտնութիւն ըստ Հայոց փոփոխամբ է ըստ չորից չորից ամաց. և եթէ զիմրդ գիտելի է, և կամ ընդէր՝ ոչ առկայացեալ ըստ այլոց ազգաց, յիւրում տեղոջ, պատմեցից ըստ կարգի տոմարին : Բայց բազումք ասեն եթէ օր սրբոյ Յայտնութեանն ընդէր՝ ոչ յայտնեցաւ, քան յորում աւուր զիպի, և տօնեմք, ես ասացից : Լւանդութիւն ունիմք ՚ի սրբոց հարցն. վասն զի ՚ի քսաներորդ աւուր ամսոյն պատահեցաւ, ՚ի նոյն աւուր և տօնեմք, որոյ պատճառ է այս. զի տօն սրբոյ Յայտնութեանս ոչ է հրէից, այլ քրիստոնէից միայն. և վասն զի ոչ ունէր պէտս զատուցանելոյ յուսեքէ, ոչ հաստատեցաւ յեղանակի, և ոչ օր նշանակեցաւ, այլ ՚ի վերայ քանի՞ստնութեան ամսոյն ուրանոր հանդիպեցաւն՝ հաստատեցաւ : Բայց ասացին ոմանք վասն աւուր սրբոյ Յայտնութեանն եթէ յուրբաթու հանդիպեցաւ. վասն զի յուրբաթու եղև լինելութիւն առաջին մարդոյն, և ոմանք՝ ՚ի շաբաթու : Բայց ես հաւանեալ եմ որբոյն Պողիկարպոսի. զի նա աշակերտ էր Յովհաննու աւետարանչի, և ահանջալուր ամենայն պատմութեանց Փրկչին. և նա ասէ ՚ի միաշարաթոջ զիպեալ ծննդեանն : Լւ վայել էր իսկ յայնմ աւուր

1) և ՚ի մետասաներորդի նորին Տուբի՝ յայտնութեան Տեառն կատարի տօն : Խոր. պատմ. Գ. 62.

յորում և սկիզբն եղև արարածոց, և ամենայն փրկչականացն այսօր նշանակեցաւ եթէ եմուտ յաշխարհ ծննդեամբ, և զիւսուծիւն ամբողջ պահելով: Եւ եթէ Յարութիւնն, և վիժին կնքով մնալ, և եթէ յառաջ քան զայն մուտն յարուսողէմ յաւուրն արմաւենեաց, և եթէ յետոյ էջք Հոգւոյն յառաքեալսն: Իսկ զօր Մկրտութեանն յետ երեսուն ամի ՚ի նոյն քանիօնութիւն ամսոյն ասաց հանդիպել յաւուր չորեքշաբաթոջ: Եւ ՚ի խորհուրդ և օրինակ ասէ զլինելութիւն արեգական յաւուրն չորրորդի: Ի չորրորդ զաւակէն Խորայելի ծնաւ Փրկիչն ըստ առաքելոյն թէ՛ յազգէն Յուդայ ծագեաց Տէր մեր: Եւ վասն զի ՚ի միում աւուր ամսոյն զերկուսեան տօնեմք, անմարթ էր զօրն յայտնել, վասն զի յայլ և այլ օր դիպան, այլ ունիմք զքանիօնութիւն ամսոյն, և շաբաթօրեայ մաքրութեամբ պահովք պարկեշտանամք յառաջագոյն, և տօնեմք յոր աւուր և պատահէ, և եօթն օր զկնի, զի ոչ ժամանակի և ընդ աւուրց իշխանութեամբ փակի Աստուած, ըստ տէրունեան ձայնին թէ՛ Տէր է որդի մարդոյ և շաբաթու:

Գ.

Ենանիայի Շիրակայեւոյ Համարողի ասացեալ ՚ի Օտովին Տեառն:

Օտօն սրբոյ Օտովիս ուսաք ՚ի Մովսիսէ և յելիցն Խորայելի Ազիպոտսէ, քանզի գրեալ է այսպէս. Խօսեցաւ տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի յերկրին եզիպտացւոց, և ասէ. Ամիսս այս եզիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եզիցի ձեզ յամիսս տարւոյ (եւք. Ժբ): Եւ յառաջ մատուցեալ ասէ. Ի տասներորդում աւուր ամսեանս այսօրիկ առցեն իւրաքանչիւր ոչխար ըստ տունս, ապա թէ ոչ ըստ տանց տոհմից, յազազս աղքատութեանն հանկանակեալ: Եւ զնովիմբ ածեալ ասէ. Եւ եզիցի պահեալ մինչև ցտանն և չորս ամսոյս այսօրիկ, և զենցեն ընդ երեկս և շաղախեսցեն զբարաւորն և զերկուսեան սեամնն յարենէն, որ եղև պահպանական անգրանկացն առ ՚ի սատակէն: Ըրդ թէպէտ և ստուեր

հանդերձելոյն, որպէս և աստուածայինն առաքեալ համարի, և օրինակ Քրիստոսի. զի և եմուտ իսկ Քրիստոս ՚ի տասներորդում աւուր ամեանն առաջնոյ Արուսաղէմ յաւուրն արմաւենեաց. և պահեցաւ մինչև ցջորս և տասն օր ամսոյն. յորում երեկոյին ետ իսկ զկենդանարար մարմինն սրբոց առաքելոցն ՚ի կերակուր, և կատարեաց զխորհուրդն որ յաղագս այնր: Բայց ոչ է առաջիկայ մեզ մեկնութեան, այլ պատմութեան Օտտի, թէ ուստի և կամ յումմէ, ասացից:

Օտուրբ տօն զատկիս հաստատեաց Տէր ՚ի վերայ լուսնի: Լուր բանին որ ասէ, թէ՛ ցջորեքտասներորդ աւուր ամսոյս՝ յաղագս լուսնալիւրն լինելոյ, որպէս և Փիլոսն ասէ. Քանզի ամիսս զլուսնականն համարի աւուրս, զառաջինն սկիզբն լուման լուսնի. վասնզի ոչ յառաջ քան զՄովսէս ամիսք կային երբայեցւոց. և ոչ յայնժամ ՚ի նորոյ ինչ հաստատեցաւ որ չէրն. այլ որպէս ասացաք զի լուսնականին ասէ ամիս: Տես զբանն. ոչ ասաց. Լմիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց ՚ի նորոյ որ չէրն, այլ թէ ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին լիցի յամիսս տարւոյ: Յայտ է թէ զաւուրս լուսնի ասէ ամիս, քանզի լուսնական ամիսք էին. բայց տարի չև ևս է անդարեալ երբայեցւոցն, վասնզի քաղզէականաւն վարէին տարւով և ամսովք. և ոչ վարկպարագի զորպէտ լրումն սահմանեաց. այլ որ ՚ի սկզբան արարչութեանն լուսինն էր, զնոյն զայն սահմանեաց: Քանզի յաւուր արարչութեանն լուսինն չորեքտասնօրեայ էր. զի թէպէտ մի օր էր լինելոյ լուսնին, սակայն լիութիւն բոլորութեանն որպէս չորեքտասան օր երևէր, զի անմարթ էր թերի և կիսակատար լինել լուսնի յաւուր լինելութեան իւրոյ. վասն զի ամենայն արարածք լի և կատարեալ ստեղծան. որպէս բանջարքն ոչ զեռարոյսք, այլ հասեալք, և ծառք կատարեալք և պտղալիցք, և մարդն երեսնամեայ հասակաւ, թէպէտ և միոյ աւուր կենդանի: Բայտ նմին օրինակի և լուսին չորեքտասանօրեայ լիութեամբ լուսոյն կատարեալ. զնոյն և համարեցան վարդապետք Աբրայեցւոցն, յաւուր լինելութեան չորեքտասանօրեայ արարեալ զլուսին. զի ՚ի վերայ նորա հաստատեցան ամիսք, և ՚ի վերայ նորա եղեն զիտելի, որպէս և տարի յարեղակնէ: Քանզի ասեն վարդապետք Աբրայեցւոցն եթէ ՚ի չորրորդ աւուր ստեղծան

արեգակն և լուսին. վասն այնորիկ հասարակաւորութիւն տուն ջեան և գիշերոյ զնէն զօրն զայն ասելով. եթէ յերկնամիջակին իսկ էր ստեղծուինն. և ՚ի վեցերորդ աւուրն ասեն լիեալ զմարդն. և յօրէն իսկ յառաջ ՚ի թիւ արկեալ զամիսս համարի ասեն. և զերկոտասանամնեայ կատարեալ զթիւ տարեկանին՝ ունի և հինգ օր աւելիս; որ յառաջ քան զստեղծանել մարդոյն եղև: Արդ յայտ է թէ զտարի յարեգակնէ գիտացաք, և զամիսս ՚ի լուսնոյ. որպէս և աստուածային բարբառն վկայէ, յասելն եթէ՛ եղիցին ՚ի նշանս, և ՚ի ժամանակս և յաւուրս, և ՚ի տարիս: Աւ զնովիմբ ածեալ ասէ. Աւ արար աստուած զերկուս լուսաւորսն մեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տունջեան, և զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ, և զաստեղս: Աւ եգ զնոսա ՚ի հաստատութեան երկնից լուսատու լինել յերկիր, և իշխել տունջեան և գիշերոյ և մեկնել ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին: Արդ վասն չափու մեծութեանն, և դրից հաստատութեանն, և իշխանութեանցն, և որոշմանցն և այլոց աստեղաց կարգի հանգամանացն ասելն առ պիմարգեղցի մինչև բովանդակեցից զտորհուրդ սրբոյ Օտակիս, և զտոմար ամենայն ազգաց. և ապա պատմեցից ևս թէ զինչ՝ վասն այսր արտաքինքն, և զինչ՝ եկեղեցականքն:

Իայց մեք երթիցուք անդրէն ՚ի հրամանն Տեառն որ առ Մովսէսն ասէ. Ամիսս այս. այս ասելով զվազնջուցն եցոյց լինելութիւն. եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ: Օգլուխ լրմանցն լուսնի ցուցանէ յիւրում ընթացից բոլորակին: Գարձեալ, ոչխար առեալ ՚ի տասն աւուր ամսոյն: Տասնեակս այս ունի ժամս մի, որով մարթիմք խմանալ զտունջանականն և զարեգակնայինն, և զծագողականն, զի օրինակ քրիստոսի է. և պահեալ զչորեքտասան. յայտ է թէ լրմանն հրամայէ անսալ. քանզի և ոչ լոկ զենումն է օրինակ Քրիստոսի, այլ և ինքն իսկ լուսին: որպէս ամենայն սրբոց հարցն հաճոյ թուեցաւ ասել: Յորոց և իմ պսակաւորն Քրիստոսի, խոստովանողն և Հայաստանեացս Հայրն սուրբն Պրիգոր ասելովն, եթէ երկրորդ լուսաւորն իշխանական գիշերոյ զայ բերէ յանձին զօրինակ միածնի որդւոյն Աստուծոյ. պատի, թաղի, գուշակ թաղելոյ յարութեան մեռելոց: Աւ անուանի տօն զատկիս յերբայեցւոցն՝ փասկա ըստ նոցա

ձայնին, որ Թարգմանի անց¹⁾, և եղև իսկ յԱզգիպատացոց ՚ի Քանանացոց յաշխարհն:

Օ այս և երանելի Վրիգոր աստուածաբանն այսպէս ասէ. Ոմանք կարծեցին զանուևս զայս փրկութեան չարչարանաց լեալ և ապա հելլենացի արարեալ զձայնն (πάσχα?) զփիւրն ՚ի պե փոխեցին, և զկենն ՚ի քէ, պասքա զօր Փրկչին անուանեցին, ըստ բանին Մովսիսի, որ յերկրորդում օրինացն ասէ այսպէս. զեօթն օր բաղարջ կերիցես ընդ նմա, զի հաց չարչարանաց է: Ըսեն վարդապետք Լաբրայեցոցն, թէ երիս տօնս զատիկի արար Մովսէս յանապատին, և ապա ՚ի հակառակել ժողովրդեանն, ամենայն պատուիրանք աստուածայինք, և կարգք լքեալ դադարեցին մինչև յօրն անցանելոյ որդւոցն Խարայելի ընդ Յորդանան ՚ի տասներորդ օր ամսոյն առաջնոյ. ոչ զամսոյն կոչէ տասն, այլ զլուսնին, քանզի ամսոյն առաջնոյ որ անուանեալն կոչի նիսան (Իժն)՝ ութ և տասն էր, և լուսնի տասն: Ըստ տասնեակ մեծի Խորհրդոյն յորում առին զոչխարն, և օրինակ Մկրտութեանն՝ անցն ընդ Յորդանան, և զալուստն Քրիստոսի յարուսագէմ յաւուրն արմաւենեաց: Լու արար Յեսու ՚ի իբ օր ամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ՚ի չորեքտասան, ըստ աւուրցն լուսնի, և առնէ նորոգումն կարգացն եղծելոց յանապատին, և առնէ իբրև ՚ի նորոյ սկիզբն կարգաց և օրինաց, որպէս և Մովսէս յեւանելն յԱզգիպատոսէ, քանզի և զանցանելն զՅորդանան զետով՝ ելս կոչէ յԱզգիպատոսէ: Որպէս և ՚ի ժամանական կանոնի նախապատում հանգիսին մերոյ ճառեցաք:

Ըսի տօնել և յաւուրս Եզեկիայի յայլոց ոմանց. բայց վասն զի ոչ յառաջնում ամսեանն, այլ յերկրորդումն, և ոչ ըստ օրինացն, ոչ անդարեցաւ, քանզի խառնակ եղև և անսուրբ: Լու դադարէ տօնն մինչև յուրթ և ՚ի տասն ամս Յովսեպ Թագաւորի անդանօր տօնեալ, և անդէն դադարեալ լինի մինչև յաւուրս Օրաբարելի և զշինած տաճարին: Ըպա և յետոյ Եզրաս նու

¹⁾ ՈՍԹ անցանել. ՈՍԹ գառն կամ տօն պասեքի: Յունականն *πάσχα* է նմանութիւն արամականին *ܦܫܬܐ*, տե՛ս՝ զբառար. Վեգենիուսի:

բողեալ կարգեաց զինն և տասներեակ լուսնի ազգին եբբայեցւոց, և անխափան տօնեցաւ մինչև ցիսաչելութիւն Փրկչին. յորում զիպաւ ՚ի չորեքտասաներորդումն նիսան լրումն լուսնի յաւուր հինգշաբաթոջ ըստ օրինակի յելիցն յԱգիպտոսէ: Օ՛ի և մեք փրկեցաք պատուական արեամբն. և արդարև ելաք ՚ի ստորայնոցս ՚ի բարձրագոյնսն, ուտելով զմարմին ճշմարիտ դառինն Աստուծոյ: Յետ որոյ և սուրբ առաքեալքն յամենայն ամի երթալով յԱրուսաղէմ, յիշատակեալ կատարէին զօր չարչարանաց Փրկչին, և տօնէին զօր յարութեանն. և աստուածային նշանազործութեամբն զբազումս դարձուցանէին առ Քրիստոս և մկրտէին մինչև յամն երկրորդ Վեսալ(աս)իանոսի, յորում եղև հուսկ յետին աւերումն տաճարին, և պարշարումն և կոտորումն և զերութիւն Արուսաղէմի. յորում ՚ի սրբոյ Հոգւոյն հրամայեալ ոչ ումէք ՚ի քրիստոնէից լինել անդ յայնմ տօնի յաղագս ապրելոյ ՚ի չարեացն եկելոց ՚ի վերայ Արուսաղէմի, և արտաքոյ ժողովեալ ՚ի տեղիս տեղիս տօնեցին զտօն սրբոյ զատկին:

Յետ որոյ Արիստիդէս Մերրի փիլիսոփայ Աթենացի ընկեր կողրատեայ առաքելոյն ունկնդիր՝ արար զինն և տասներեակն լուսնի Հոովմայեցւոց, և այսպէս նմանեցուցեալ ասաց եթէ, առաջին օրն ապրիլի է սկիզբն արարչութեան, և վասն զի ՚ի չորրորդ աւուր ստեղծաւ լուսին, ՚ի չորրորդ աւուրն ապրիլի եդ չորեքտասան լուսնի, և կարգեաց նա զլուխ բոլորի. վասն զի ՚ի նմին աւուր հանդիպի ըստ եբբայեցւոց չորեքտասան նիսան, լրումն և անվերագրութիւն: Յետ որոյ Վեոնտիս հայր Որևգենի արար զիննևտասներեակն լուսնի Ագիպտացւոց և Աթովպացւոց: Յետ որոյ Որևգենէս որդի նորուն արար զիննևտասներեակ լուսնի Արաբացւոց և Մակեդոնացւոց, ըստ նմանութեան ձևոյ, յԱբբայեցւոց անդր հայեցեալ: Յետ որոյ Անատոլիս եպիսկոպոս լաւգիկեցւոց եկեղեցւոյն արար զիննևտասներեակն լուսնի: Յունաց հայելով:

Արդ թէպէտ և այս ամենեքեան նախդոյն կարգեցան, սակայն ոչ ընդհանուր աշխարհ ուսան վասն նեղութեան հալածանացն որ ՚ի վերայ քրիստոնէից, այլ տօնէին զոյգ ընդ Հրէիցն, տօն խառնակ և անսուրբ. մինչև յաւուրս երանելոյն կոստան.

զիանոսի և ցաւորք ժողովն Նիկիայ: Լա սպա սասցաւ ՚ի թա-
զաւորէն, մի ևս այնուհետև առնել ասն խառնակ ընդ տիրասպան
ազգին Հրէից. տուեալ հրաման ՚ի մէջ առնուլ զիննևտասներ-
բեակն լուսնի զատկաց, որք կարգեալ էին ՚ի վերոյ ճառեալ
արանցդ. առնուլ և աշակերտս՝ յամենայն ազգաց քրիստոնէից,
և ուսուցանել զնոսս տոմար, և զտուցանել զքրիստոնէականս ՚ի
հրէականէն. և թէպէտ և ըստ հրամանի թագաւորին դործն
կատարէր. այլ ոչ անտարակուսելի օրինօք: Յետ որոյ և յաւուրս
կոստանդեայ, որդւոյ կոստանդիանոսի, Լնդրէաս, եղբայր Մագ-
նոսի եպիսկոպոսի, կարգեաց տոմար երկերիւր ամաց. սակայն և
այն ոչ անտարակուսելի: Լպա ՚ի սպառել Լնդրէասեան տոմարին
ամացն երկերիւրոց յաւուրս Յուստի(նի)անոսի թագաւորի, եղև
բազում խնդիր հմտազոյն իմաստասիրաց. վասն ոչ բերելոյ ճշգրտիւ
զկարգ իննևտասն բոլորակին, որ իննսուն և հինգ ամով բովան-
դակէր զեղանակ շրջագայութեան ՚ի նոյն. յոլովից թուեցաւ
դժոխին. զի բազում ամօք ըստ աւուրց բոլորակին, չտողէ զկնի
բեսեքիստոնն (Βίσεξτος, bissextus, նահանջ). վասն որոյ եղեալ
քննութիւն Մղեքսանդրիայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաս-
տասիրութեանց, գտաւ անտարակուսելի օրինակ շէր ամաց շրջա-
բերութեանն, որ ստուգիւ ցուցանէ զաւուրս չորեքտասան պա-
սեքին: Ըրդ ոչ եթէ նորաձևելովս ինչ աղարտեցին զվազնջուցն
դրոշմեալ կանոնն. այլ ճշգրտիւ զնոյն չորեքտասան յիննևտասն
յիննևտասն թուոյ դրոշմեցին յարմարական ոճով. զի անտրտում
և անստուերագիր տպաւորեալ եղիցի դրութիւնն: Լա է կարգող
այսոցիկ գլուխ իմաստասիրաց՝ աղեքսանդրացին Էաս. ունելով
իւր ընկեր զհրէայն Փենեհեզ որ ՚ի Տիբերիդայ, զՎարբրիէլ
Մսորուոց, և զՅոհան Մրաբացուոց, և զԱբդիէ Մթովպայ,
զՍերգի ՚ի Մակեդոնացուոց, զԼուդօգի ՚ի Յունաց, զՎիգան ՚ի
Հռովմայեցուոց: Ունելով ընդ իւր և այլ ընկերս Էաս, ՚ի նոյն
Լգիպտացուոց, զորոց անուանս ոչ յիշատակեցաք ՚ի պատմու-
թեանս. բայց ընդ ամենայն ասի լինել արս երեսուն և վեց: ¹⁾

¹⁾ Տես ՚ի մատենին՝ Recherches sur la Chronologie armé-
nienne, par Ed. Dulaurier, Paris, 1859, յեր. 58. զբանս անա-

Աստանոր ասէ եղեալ զԿրոն վարդապետ դրանն արքունի ՚ի
քաղաքին Կոստանդնուպօլսի, որ ազգականութեամբ օտար և ոչ
քաղաքացի, զոր ոմանք և աղէքսանդրացի իսկ զոլ ասացին:
Օսա զչարեալ ասէ ընդ ժողովս իմաստասիրացն որ յԱղէքսան-
դրիա, իբր քամահանս իւր վարկանել զոչ անդր կոչեցեալ: Հա-
կառակ ճշմարտութեանն մաքառի, խոտէ զկարգեալն ՚ի նո-
ցանէ: Կոյնպէս և զառաջնոց եղեալսն գոգցես իբրև տգէտս
զնոսա համարեալ, առնէ ժամանակագրութիւն նորաձայն, հա-
կառակ աստուածային գրոց, և ամենայն ժամանակագրաց, նոյնպէս
և տոմար. և փոխէ զիննևտասներբրեակն լուսնի ՚ի վեցէն ապրիլի,
և փոխանակ կարգէ Հինգ ապրիլի, և դնէ զնա բլուխ բոլորի. և
առնէ իւր օրինակ գտասն փարմութի (Pharmuthi) ըստ Եգիպտա-
ցւոց, որ ՚ի մէնջ պարմափիւրն ձայնի. և դնէ զնա գլուխ բոլորի՝
լրումն և անվերագրութիւն, հակառակ առաջնոցն: Որպէս և
նոքա յեբրայեցին հայելով ձևացուցին. սորա նոյնպէս զեգիպտա-
ցին արարեալ օրինակ, իբր թէ ցուցանել իմաստասիրացն Աղէքս-
անդրի եթէ յոյժ տգէտ էք. որ և ոչ ձերոյ ազգիդ հմուտ էք,
զիւրդ այլոց ազգաց կարգեցէք տումար: Եւ զհոյժմացեցւոցն
այսպէս կարգեաց եզ զՀինգ ապրիլի՝ գլուխ բոլորակի. և կար-
գեաց նմա վերագիր ը. վասն զի երեքտասանօրեայ ասաց զլուսին
յաւուր ստեղծման իւրոյ. զուգելով զուր թ և զՀինգ, այսինքն
զվերագիրն և զլրումն ՚ի խորհուրդ նմա համարեցաւ: Այլ և
երեքտասան շրջառութիւն թուոցն լուսնականաց՝ զարեգակնայ-
նեօքն խորհուրդ նմին համարեցաւ. և արկանելով ՚ի վերայ վե-
րագրին ժա. ժա. թիւ, մինչև ցկատարումն իննևտասներբրեկին, և

նուն հեղինակին որ ասէ. Իսկ այր ոմն ՚ի ճշմարտագունից ուսում
նասիրաց՝ յեգիպտական մայրաքաղաքէն Աղէքսանդրիայ՝ Կաս-
անուն, ձայն արկեալ: առ ինքն հաւաքէ զարս կորովամիտս,
զԱդրա ՚ի Գամրաց, զՓենեհեզ ՚ի Հրէաստանէ, զՅոհան յԱրա-
բիոյ, զԱերզ ՚ի Մակեդոնիոյ, զԳիզան ՚ի Մարտոց, զՅորել
յԱթովպիոյ և այլ լի արամբք հաւատարմօք, խորհին գտանել
զդարձ արեգական և զլուսնին ՚ի միումամի. և այլն . . . տես՝ ևս
՚ի պատմ. կիրակ. վեներտ. 1865. եր, 24.

բօլորին. և ապա երկոտասան թիւ արկանէ զվերադրովն ըստ կարգի կատարման իննևտասներեկի. և ՚ի վերայ լրմանն արկանէ քսան թիւ. և առնու ՚ի բաց՝ երկոտասան և մետասան ցկատարածն իննևտասներեկին և բօլորին. և ապա առնու ՚ի բաց ժք. ժք. վասն կատարման իննևտասներեկին և խաղացուցանէ անուացեալ ծանուցեալ ՚ի ճարտարութիւն արուեստին պանծալով. աղարտեալ խոտէ զառաջնոցն դիրս. և բռնութեամբ հրամանի թագաւորին ընդ ամենայն աշխարհն զիւրն հաստատեաց: Բայց մեզ քաւ և մի լիցի հաւանել ժամանակադրութեանն Իրոնի շփոթելոյ, և հաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց. և մի ընդունել զթիւ տոմարի նորա զխարդականս, և լիցուք ընդ նզովիւք սուրբ հարցն: Քանզի գրեալ է այսպէս. Ենիծեալ որ առնէ զատիկ ընդ տիրասպան ազգին շրէից. և կամ ընդ Շամրտացոց, և կամ ընդ Պաւղիանոսաց: Ենիծեալ որ առնէ զատիկ յերեքտասան լուսնի: Երդ Իրոն թէպէտ և բիւր անգամ կարծէ ճարտարանայ, սակայն ոչ զերծանի ՚ի նզովիցս յայցանէ. զի որ ՚ի միոյն փախչի, և ՚ի միւսն շաղախի՝ նման է այնմ որ սակաւ աղօթէ և բազումս հայհոյէ: Քանզի իբրև դիպի ՚ի շաբաթու հինգ ապրիլի ըստ Իրոնական թուոյն, համարին զնա լրումն. և ՚ի վեց ապրիլի առնեն զզատիկն, որ դիպի ՚ի վեշտասան նիսան, և տօնեն զոյգ ընդ շրէից, ստունկանեալ հարցն նզովից: Քանզի ոչ երբէք տօնեալ է շրէից ՚ի հնգետասան նիսան զտօն զատիկի. այլ միշտ տօնեն ՚ի վեշտասան նիսան, նոքա և շամրտացիք. քանզի շամրտացիք հաստատագոյն քան զնոսա ունին. թէպէտև ՚ի նոցանէ են ուսեալք: Եւլ և Պաւղիանոսք ՚ի նմին աւուր տօնեն, և զինչ օր և դիպի լրմանն, կիւրակէ անուանեն, որպէս և շրէայք շաբաթ անուանեն, թէպէտ և չիցէ շաբաթ:

Բայց մեզ քաւ լիցի տօնել ընդ նոսա և կրել նզովս. քանզի ամենայն ջան սրբոց հարցն վասն ՚ի նոցանէ զատուցանելոյ էր. յոր և շայաստանեացս առաւել ճշմարտապէս անուանի զատիկ Տեառն. այսինքն զատուցեալ յամենայն հեթանոսականաց և հրէականաց տօնից, սրբեալ և լեալ տօնիցս Տեառն տօն, և ժողովոց ժողով: Որպէս և Պրիզոր աստուածաբանի հաճոյ թուեցաւ ասել. վասն այնորիկ և հրամայեցին մեզ հարքն՝ մի տօնել ՚ի լրմունս

Երբ այեցեալոցն՝ այլ յինչ աւուրց շաբաթուն զիպեսցի չորեքտասան լուսնի, պահել զշաբաթն զի երթիցէ հասցէ ՚ի կիւրակէն Յաբութիւնն Տեառն, և լցցէ զտորհուրդն, և ՚ի շաբաթու չարչարանացն պահեսցէ: Ասան այնորիկ և պասքա կոչեցին, որ թարգմանի չարչարանք, և եթէ կիւրակէ զիպեսցի օրն չորեքտասաներորդին լուսնոյ, անցանէ զի մի տօնեսցուք ընդ շրէից, այլ երթիցէ հասցէ ՚ի միւս շաբաթն. և ոչ ինչ զանդաղելի երկմտելի է առնել զվեց օրն աւելի, այլ պահել քանզի յուսացեալ վստահէ եթէ ՚ի շաբաթուն ընու զտորհուրդ չարչարանացն, և ՚ի կիւրակէն զյարութեանն: Այլ եթէ զիպեսցի չորեքտասան օրն լուսնի ՚ի շաբաթուն, անցանէ աւուրք միով, զի մի տօնեսցի ընդ շրէին. և փոխանակեսցէ ՚ի կիւրակէ սուտ ընդ ճշմարիտ կիւրակէին. որպէս և պողիանոսքն ժպրհին առնել, այլ զի կացցէ շաբաթն շաբաթ. և ոչ որպէս հրէայքն առնեն՝ շաբաթ փոխանակեալ զօղօնի, և կամ որպէս պողիանոսքն զկիւրակէն: Այլ եկեղեցի Աստուծոյ ոչ փոխանակէ կիւրակէ ընդ կիւրակէի, և ոչ շաբաթ ընդ շաբաթու. այլ յետ ճշմարիտ շաբաթուն եկեսցէ օր մեծ Յարութեանն: Արդ մի պատրեսցուք ճարտարութեամբ արուեստին Իրօնի. զի եթէ քննեսցուք, ոչինչ ՚ի նմայն գտանի ճշմարիտ. թողում ասել զընդ նզովիւքն լինել. այլ և ըստ արուեստին իսկ զործ ձևացումն ըստ մտահաճութեան իւրոյ, և ոչ ըստ ճշմարտութեան. քանզի ՚ի ժամանակագրութեան իւրում ըջ ասէ ՚ի ծննդեանն Փրկչին. և օրինակ առնու զչափս տապանին վկայութիւն, ՚ի հինգ կանգնոյ և ՚ի կիսոյ լեալ. և այս զինչ՝ նմանութիւն իցէ արկեղ և ժամանակաց. և կամ զինչ՝ նմանութիւն իցէ երեք տասանօրեայ զլուսին ասել յաւուր ստեղծման իւրոյ, մինչ ամենայն արարածք կտարեալ և լի ստեղծան. ընդէր՝ լուսինդ լինէր թերի և կիսակտար: Քանզի գիտեմք կատարեալ զբանջարս ստեղծեալ, և կատարեալ զանասունս. զի առ ժամայն իբրև լինիցին՝ գտցի առաջի նացա հունձք պատրաստականք առ ՚ի դարման կերակրոյ նոցա. որպէս զի և որ այժմս ծնանին, ՚ի նախախնամութենէն Աստուծոյ գտանի կաթն ՚ի ստինս մարց իւրեանց պատրաստական. որպէս և ՚ի սկզբանցն ծառքն կատարեալք և պողալիցք առ ՚ի կերակուր մարդոցն. որպէս և աստուածային բարբառն վկայէ

յասելն թէ՛ բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ, և զծառ պտղաբեր, որոյ սերմն իւր ՚ի նմին: Արդ եթէ ամենայն արարածք լիուի ստեղծան, ապա և ոչ լուսինն թերի և կիսակատար, այլ անիւ բոլորակութեանն լիութեամբ լուսոյ կատարեալ: Բայց Իրոն ոչ ճշմարտութեամբ խօսեցաւ. և բանք նորա ոչ են հաւատարիմք. և զինչ՝ վկայութիւն իցէ զուզումն լրման և վերադրի՝ երեքտասանօրեայ լիութեան լուսնի. զի այլ ևս մետասան լրմուռք և իւրեանց վերադիրքն ոչինչ խորհուրդ լինելութեան ումք բերեն: Եւ զինչ՝ նմանութիւն իցէ թիւ երեքտասան շրջառութեան լուսնականաց զարեգակնանեօքն աւուրցն լինելութեան. վասն զի և ոչ երեսնեակ, և ոչ վաթսնեակ թիւք լուսնի՝ խորհուրդ լինելութեան ումք բերեն: Արդ ՚ի մէջ երկուց վատթարաց պատեհազոյն զԱրմոզենի ասացեալն համարին քան զԻրոնի. թէպէտ և ՚ի ճշմարտութենէ երկրքեան վրիպեալք: Եւ ասէ Արմոզինէս այսպէս, թէ միօրեայ ստեղծաւ լուսին, վասն զի մի օր իսկ էր լինելութեանն. և զոյգ ընդ արեգական ստեղծաւ ՚ի միումտեղ ՚ի միջոց երկնին ՚ի ծագման կողմանէ, որպէս և այժմ՝ յորժամ երթաց զիպի լուսին արեգական՝ առաջին օր անուանի լուսնի: Արդ թէպէտ և սխալէ և սա, սակայն նմանազոյն պատեհեցուցեալ քան զԻրոնին: Բայց մեք յերկոցունցդ զատ լիցուք. իսկ Իրոն իբր այնչափ ճարտար քան զամենեսեան զինքն վարկաւ. ընդէր՝ և ընկալաւ իսկ զՏինգհարիւրակն կարգեալ ՚ի Աշասայ. հիմ ինքն ոչ եգիտ այլ օրինակ. նա ուրեմն ոչ ոք կարէ գնել այլ հիմն քան զչ, եդեալ ՚ի Աշասայ: Արդ որոյ գործ շինածի ՚ի վերայ հիմանս այսորիկ շինի, նիւթ ծախողական վերջնեան փորձեսցի տաժանելեան և երկայնագունիւն, որ ոչինչ համարի զճարտարութիւն արտաքոյ ճշմարտութեան: Եւ զինչ՝ պարտ է մեզ զԻրոնին պատմել, և կամ ընդգիմանալ նմա. այլ գնորայն ՚ի նորայնս թողցուք աշակերտս և հաւանեալս. և մեք տօնեսցուք մի աշխարհապէս, այլ աստուածաբար, մի երկրաւորօրէն, այլ գերաշխարհիկ. մի զհանդերձելոյ ստուերականն, այլ զճշմարիտն, և որ ինչ յաղագս մերն, մանաւանդ որ Տեառնն է, հետեւել սրբոց հարցն, զի մի լիցուք ընդ նզովիւք նոցա. մի տօնեսցուք յերկոտասաներորդու մանեան՝ յառաջ քան զհասարակել տունջեան և զիշերոյ, այլ

յամեսանն առաջնում տօնեսցուք. քանզի յամեսանն առաջնում
չարչարեցաւ Քրիստոս զկնի հասարակելոյ տունջեան և գիշերոյ.
որպէս և ՚ի սկզբանցն ստեղծաւ մարդն առաջին զկնի հասարա-
կելոյ տունջեան և գիշերոյ. նոյնպն և զկնի հասարակելոյ տուն-
ջեան և գիշերոյ յամեսանն առաջնում ել յԱզիպտոսէ. փրկեցաւ
՚ի Փարաւոնէ. ազատեցաւ ՚ի դաւոյն գործոյ. ՚ի նմին աւուր և
մեք փրկեցաք յաներևոյթ բռնաւորէն. և ՚ի դառն գործաւորաց
նորին զօրաց. և ազատեցաք ՚ի կաւոյն մեղաց չարչարանօք Փրկչին.
և մի տօնեսցուք ընդ տիրասպան ազգին հրէից. զի մի լիցուք
հաղորդ մեղաց նոցա. և կրիչ նղովից. և մի տօնեսցուք յերեքտա-
սան լուսնի. զի մի ընդ տգէտս և ընդ օրինազանցս համարեսցուք.
և արտաքոյ փակելոցն եղիցուք. լսելով զոչ գիտեմն զձեզ. և մի
փոխեսցուք զասմանս հարցն. և մի ընկալցուք զչորեքտասան
լուսնի ՚ի հինգ ապրիլի. այլ զկարգեալ ՚ի սրբոց հարցն. և մի
զիցուք այլ լրումն գլուխ բոլորի. բայց զհրամայեալն ՚ի Տեառնէ
զչորեքտասան նիսան. և զայլոց ազգաց որ նմայն հանդիպին. Բայց
Լասանք որ զ՞ նիսան կարգեցին գլուխ բոլորի և ոչ ազարտեցին
զառաջինն. բայց զի տոմարն Մարգարէասեան երկերիւր ամայն
յերիսն նիսան սպառեցաւ. և սկիզբն հինգհարիւրեկին յերեք
նիսան եղև. վասն այնորիկ եզ ՚ի գլուխ բոլորի. ոչ ՚ի սկզբանէ
ելիցն և խաչելութեան. այլ նմին իսկ հինգհարիւրեակ բոլորին.
բայց խոստովանեցին գլուխ բոլորի զչորեքտասան նիսան. զհրա-
մայեալն ՚ի Տեառնէ. որում և մեք հետեսեսցուք:

Եւ արգ զինչ՝ ևս պակաս իցէ այսուհետև. թէ ոչ յայտնել
կարգաւորութեամբ զտոմար իւրաքանչիւր ազգաց. սկիզբն արա-
րեալ առաջի կարգել զտոմար ազգին Լաբրայեցւոց. զի նա իսկ է
գլուխ և օրինակ ամենայն ազգաց: Եւրդ քանզի տուչութիւն
եկեղեցւոյ ուսուցանէ պահել ամի ամի զօր բազարջակերացն. և
յորժամ չորեքտասան լուսնի ՚ի չորս աւելեացն մինչև ՚ի քսան և
ութերորդն այսինքն ապրիլի պահեմք և առնեմք զատիկ: Իսկ
եթէ չորս աւելեացն է. անգրէն յազար (778) ամիս կոյս կատարիցի
երկոտասան թիւք լուսնոյ. միւս ևս այլ ամիս յաւելումք ՚ի վերայ
երկոտասան ամայն. որ անուանեալ կոչի նհանջեալ. զի յայն ամս
քանզի պակաս գտանի թիւք ընթացից լուսնի քան զթիւս արե-

գական, այս այսպէս կազմեցաւ, զի նհանջեալ ամօք լիցի, որպէս զի երթիցէ հասցէ թիւ ընթացից լուսնի թուոյ ընթացից արեգական. զի եթէ այսպէս ոչ լինէր, զիպէին երբէք երբէք երկու զատիկք ՚ի միում ամի. այլ նհանջեալ ամիսքն ձգեսցեն ածցեն զմեզ: Օ՛ի միշտ յետ հասարակելոյ տունջեան և զիշերոյ արասցուք զզատիկն. քանզի նոքօք հասանեմք յամիսն առաջին. և զայն պարտ և պատշաճ է յաւելլով ՚ի հարկէ. քանզի զօրինակ և զնմանութիւն յառաջնում ամսեանն հրամայէր առնել ՚ի հնումն: Օ՛ի չէ իշխանութիւն եկեղեցւոյ յերկոտասաներորդում ամսեանն առնել զզատիկն. որպէս և աստուածայինն առաքեալ ասէ թէ՛ առաջինքն անցին, և ամենայն ինչ վերստին նորոգեցաւ Քրիստոսի: Եւ արդ այսուհետև ամի ամի զնոյն տրտմութիւն զոր զգեցան առաքեալքն, պահօք զզեցցուք և մեք. և ՚ի յարութեան միաձնին ուրախ լիցուք, հաղորդելով մարմնոյ և արեան ճշմարիտ գաւիճն, որ է հացն երկնաւոր: Եւ վասն այսորիկ ՚ի հարկէ ամի ամի առնէ եկեղեցի զզատիկ բաղարջակերացն. զի հաստատեալ կացցէ յիշատակ չարչարանաց Փրկչին. և քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ շինականք. և վարդապետութիւն Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ զաշխարհ ամենայն: Վասն այնորիկ հինգհարիւր երեսուն և երկուց ամաց միանգամայն համարեաց ըստ թուոյ Աղեքսանդրացւոյն ՚ի պիլ՛ ամէն մինչև յամն ոչկ. այնոցիկ որոց կացցեն յաշխարհի, կազմեցի ես Անանիա որդի Յովհաննիսի Դիրակայնոյ և դրոշմեցի առանձինն զքնաւ մի մի ամ շլի՛, ի՛նչ կանոն, որովք զամենայն համարն բովանդակեցի շլի՛ կարգ. և զատի մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի:

Ե.

ԱՆԱՆԻՆՅԻ ՇԻՐԱԿՈՒՆԵՒՈՅ ՀԱՄԱՐՈՂԻ

ՅԱՂԱԿՈՒ ԿՇՈՒՈՑ ԵՒ ՉԵՓՈՒՑ

ի. յաղագս կշոոց

Կշիո ք Պարեհատաց (κόκκος, granum) կոչի Ասարիոն (άσσάριον, assarius). Իսկ ըստ Հելլենականին՝ Ղեպտոն (λεπτόν) կոչի. բայց ըստ Աբրայեցւոց՝ նուազութիւն կոչի, որ է անաւր. և ըստ Հայուն կոչի Վանկ (داتک).

Կշիո ք Պարեհատաց, ըստ պարսկական լեզուի կոչի Փշիո (پشیز, پشيز):

Կշիո ք Պարեհատաց լինի միոյ կերատի (κεράτιον) կշիո :

Կշիո ք կերատաց կոչի Սինդ (կամ Սիդ) (سنگ — pondus; سیکى — tertia pars. Vull.):

Կշիո ք կերատաց լինի Գրամար (γραμμάριον) մի :

Կշիո ք կերատաց լինի Տրմէս (ترمش, ترمش) մի :

Կշիո ք կերատաց լինի Սիմէս (Semis) մի :

Կշիո իք կերատաց լինի Վասէկան (دگانی) մի : Այլ մանր բաժանեալ զՎասէկան, լինի Սիմէս ք, Տրմէս ք, Գրամար ք, Սինդ ք, կերատ իք, Փշիո լք, Վանկ խք և Պարեհատ զք : Կշիո Սիմէսի և Գրամարի կոչի ըստ Աբրայեցւոցն Սատեր (stater, στατήρ?), և ըստ Հելլենականին՝ Որզոս (ὀβολός), և Ազիպտացւոց՝ Քաղիոս (χαλκός). վասնզի Աղեքսանդրացիք զարծաթն քաղկիմա (χάλκινα, պղնձիք) կոչեն : Այլ ըստ հասարակաց խօսից կոչի Գրաքմէ (δραχμή), որ է ք մասն Ունկոյ (Uncia, Ὀγκία) կամ Նուկոյ : Իսկ ըստ Հոռվանցւոց՝ կա-

պետոն (Capitum exactio) կոչի, զի կապու (տ) (caput) գլուխ
ասի. վասն զի Աւգոստոս կայսր եղ Տարիս ըստ գլխոյ՝
Վրաքմէ մի :

Կշիւ Վասեկանի և Սիմէսի կոչի ըստ Եբրայեցւոց Սիկզ (שִׁקְצָ),
և ըստ Հելլենականին՝ Մետ (μέτρον?), և ըստ Հռովմայե-
ցւոցն՝ Մեղիարիս (Milliarius). և ըստ Հայոց՝ Փորչէ, որ է զ
մասն Ունկոյն և ունի լի կերտաց կշիւ :

Կշիւ զ Վասեկանի լինի Ունկի (Նուկի) մի : Եւ մանր բաժա-
նելով Ունկին լինի՝ Վասեկան զի, Սիկզ զի, Սատեր ը՛, Սիմէս
ժք, Տրմէս ժք, Գրամար ինչ, Սինգ լի, կերտա ծինչ, Փշիւ
ձղք, Գանկ մ ձք, Գարեհատ շճի :

Կշիւ ժք Ունկոյ կոչի Լիտր (λίτρα), և Թարգմանի ըստ Հռով-
մայեցւոց՝ Տարթուրիւն (libra). բայց անուանի յամենայն լե-
զուաց՝ Լիտր : Եւ մանր բաժանեալ զԼիտրն՝ ունի Ունկի ժք,
Սիկզ խք, Վասեկան Տք, Սատեր զի, Սիմէս ձինչ, Տրմէս
մձի, Գրամար մձք, Սինգ նլք, կերտա 1728, Փշիւ 2304,
Գանկ 3456 և Գարեհատ 6912 :

Մնասն (μνᾶ, μνᾶς) ըստ Իտալացւոց խիչ Ունկեաց կշիւ է, որ
լինի զ Լիտր և ը՛ Ունկի. և ըստ եբրայեցւոց Մնասն ար-
ծաթի (?) Թարգմանի. և ըստ եբրայեցւոց ք լիտր և կէս (?) :

Նոմիսմայ (νόμισμα, numisma; νομῆμος, nummus) ըստ Հռովմայեց-
ւոց Վասեկան անուանի. զի Նոմիսմայ (Նումա ըստ Լպիլիա-
նու, Numa, Νομῆμα; Numa Pompilius) անուն էր Թագաւորի,
և ըստ իւրում անուանն Նոմիսմայ անուանեաց :

Կենդինարն (κεντηνάριον, centinarius) ձ լիտր է, և անուանեցաւ
ըստ Հռովմայեցւոց լեզուին. զի կենդու (մ) (centum) ձ լսի.
և է կենդինարն լմ դասեկան : Եւ մանր բաժանելով զկեն-
դինարն, լինի Ունկի ոմ, Սիկզ սոյ, Սատեր քն, Սիմէս
14,400, Տրմէս 21,600, Գրամար 28,800, Սինգ 43,200,
կերտա 172,800, Փշիւ 230,400, Գանկ 345,600, և Գա-
րեհատ 691,200 :

Վրամ (مرد) ըստ պարսկական լեզուին անուանեցաւ և յարծաթ

ոչ (յարծաթոջ?) տպաւորեցաւ, որ է ̄ ̄ մասն¹⁾ Լ տեր. և Սատեր ̄ ̄ Գրամաց կշիռ. և Պայոււասիկն ̄ ̄ լիտր է, որ է ̄ ̄ Սատեր, որ լինի ̄ ̄ Գրամի կշիռ և թիւ :

Տաղանդն (τάλαντον) ծիէ լիտր է. Օ սա թուողք մոնադ (μονάς) կոչեն : Լու մանր բաժանելով զՏաղանդն. լինի՝ Ունկի ոչ, Սիկղ ց, Սատեր ժբն, Սիմէս ժբն, Տրմէս իէն, Գրամար լիւ, Սինդ ծիւ, կերատ 216,000, Փշիւ 288,000, Գանկ 432,000, Գարեհատ 864,000 : Լու լինի Տաղանդն Գահեկան ք :

Քանքար է ճլիւ լիտր : Լու մանր բաժանել զՔանքարն, լինի՝ Գահեկան 9936, Սիմէս 19,872, Տրմէս 29,808, Գրամար 39,744, Սինդ 59,616, կերատ 238,464, Փշիւ 317,952, Գանկ 476,928, Գարեհատ 953,856 : Լու հաւաքեալ զամենայն մասունս Քանքարի, լինի Գահեկան 9936²⁾ :

1) Հատուածս այս լի է վրիպակօք և ըստ կարծեաց Հ. Լու գերեանի միջանկեալ թուի լինել և ոչ Շ իրակացւոյն. տես կշռոց և՛ յեր. 26. Մէք զայս ձև օրինակի տամք բնագրին.

Գրամն է յձի մասն լտեր (այն է ժիւ դարեհատ). և Սատեր է ̄ ̄ դրամաց կշիռ. և պայուասիկն ̄ ̄ լիտր է, այն է (960, կամ մերձաւորապէս) ̄ ̄ Սատեր, որ լինի (3840, կամ մերձաւորապէս) ̄ ̄ դրամակշիռ : Յաղագս պայուասիկի, տես ՚ի Պատմ. Մերէսոսի, գլ. ԼԵ. զի անդէն ՚ի նոցանէ միոյ միոյ ամի առնուին յիւ պայուասիկ (ի ձեռագիր օրինակին մեր՛ պայուասիկ) դրամ :

2) Դ մերում օրինակի մերձաւորաբար դնին թիւքս. Քանքարն լինի Գահեկան բիւր, Սիմէս ք (ցի բիւր), Տրմէս ̄ ̄, Գրամար ̄ ̄, Սինդ ̄ ̄, կերատ ի̄ ̄, Փշիւ լիւ, Գարեհատ զի : Հաւաքեալ ամենայն մասունք Քանքարի լինի Գահեկան ̄ ̄ (բիւր) : Ըստանօր աւարտէ օրինակս զբան կշռոց :

Մին յօրինակաց Հ. Լու գերեանի յաւելլու զյետագայ բանսգ : Ունկի, որ է Ունծայ. կերատ, որ է կուտ. Սատեր, որ է ժիւ կուտ. Լ իտրայ, որ է Լ աղարիկոն, հիւ Մթխալ. Գրամն ժիւ կուտ է. Մթխալն իիւ կուտ է. Գահեկանն մի ոսկի է. որոյ կշիռն յամենայն աղինս մի և նոյն է. և թէ ուրեք գտանիցի պակաս, արտաքոյ քանակի ոսկւոյն է. զոր և գաղտ անուղղայք արարեալ

բ. յաղագս Չափուց :

Չափ առաջնորդ չափուց Քսեստ (ξέστης, sextus). և այսպէս ամենայն լեզուք անուանեն. բայց ըստ աշխարհաց աշխարհաց այլ և այլ չափ է : Ըստ Աղեքսանդրացւոց և Իտալացւոց և Պոնտացւոց թ լտերաց կշռորդ է. ըստ Կաստրացւոց իբ՛ Ունկեաց կշռորդ. իսկ ՚ի Նիկոմիդիա ի՛ Ունկեաց կշռորդ է : Բայց ըստ Հելլենականին Քսեստն սակաւ ինչ պակաս է ՚ի ՚ի լտերաց կշռորդէ :

Կոսիւղ (κοτύλη) կոչի Քսեստին կէսն :
Տրիւզոն (τροβλίον) սիււառակ է բոլորակ և խոր. նոյն և Պարոպսիգոս (παροψίς, παροψίδος) կոչի. և ունի կէս Քսեստի :
Բեսին (βειχίον?) է բոլորակ ապակեղէն. ունի կէս լիտր. և կոչի ըստ Հայոց՝ Ելիշ :
Պիմենիաց (?) ապակեղէն պարզ. ղ մասն Քսեստի :

են : Նուկին ղ Վասեկան է. Ի իտրն ժբ՛ Նուկի է, որ լինի Տբ՛ դասեկան. Սատերն լը մասն է Նուկոյն. և Վասեկանն ՚ի ղ մասունս բաժանեալ, և մի մասն պակասեալ, ղ մասունս լինի Սատեր մի. և Սիկղ չորրորդ մասն է Ունկոյ, որ է Վասեկանի կիսոյ չափով : Կենդինարն ծ՛ Ի իտր է, որ է էն՛մ դասեկան. Տաղանդն ճի՛ե Ի իտր է, որ լինի թն՛ Վասեկան : Վրեցաւ կշռոց անուանքն, չափքն, քանիքն, թիւքն, մասունքն, որպիսութիւնքն, հանգամանքն : Փառք արարչին Աստուծոյ : Յայլում օրինակի դտանի յաւելուած ինչ առանձին վերնագրով, այսպէս. Արպիսութիւնք կշռոց՝ որք յիշին ՚ի Սուրբ գիրս, պարզ մեկնութեամբ ստուգեալ : Սիկղն և Երկդրամեանն ՚ի Վիդրաքմայն լը դրամ են. և թ՛ Վրամն ի՛ Վանկն է. և Վանկն լը Վարեհատ է. և ժ՛ Վանկն Վրամ մի է. ի՛ Վանկն լը Վրամ որ է Սիկղ մի. ի՛ե Սիկղն Մ՛նաս մի է. Մ՛նասն ծ՛ Վրամ է. վաթսուն Մ՛նասն Քանքար մի է. և Տաղանդն նոյն է. Սատերն ղ Վրամ է :

Իսկ զՏետեալ հատուածն, զչափուց, բնագիրն և մեկնութիւնս անուանց ամբողջապէս ՚ի հեղինակութենէ Հ. Ազեբեանին առնումք :

Պեղէկս (?) կամ Պեղիէս (?) կրկին ապակի է, և ունի նոյն չափ զ մասն Քսեստի :

Չափ չորից Քսեստաց կոչի կապսակ (καψάκης). զոր Հայն Սրուակ ասէ :

Չափ զ Քսեստի ըստ Լբրայեցւոց կոչի Քուզայ (χούς). որ է ժք մասն Եւրղուի :

Չափ ժն Քսեստի կոչի կարոս (κάβος, կապիձ), որ է կէս Մողոյ :

Չափ ժն Քսեստի կոչի Եպորիւմայ (ἀπόρρυσμα) ըստ Թերայեցւոց լիզուի, և է նոյն չափ կէս Մողոյ :

Չափ իք Քսեստաց լինի Մող (μόδιος) մի որ կոչի խոստովանումն ըստ իք Գլխաւորաց և ըստ իք գրոց կտակարանաց, և ըստ իք գրոց պրուբենից Լբրայեցւոց. զոր կոչեն չափ Սրբու թեան :

Չափ իք Քսեստաց լինի Գրիւ (κρήνη), որ է նոյն չափ Մողոյ :

Չափ իք Քսեստաց կոչի Սարիթայ (σαβίθιά), որ է նոյն չափ Մողոյ :

Չափ ժ Քսեստի լինի Մար (μάρις) մի. և ըստ Հելլենականին Սատոն (σάτον) կոչի. զոր կոչեն չափ Հնձանի :

Չափ չք Քսեստաց լինի Եւրղու մի. և ըստ Հելլենականին Եւրտարոս (ἄρτάβη) կոչի: Բայց եղաւ յԼգիպտացւոց Ումոթ (?), որ է Բարեժողով (?). և Լբրայեցիք վարին նովին չափով յԼգիպտացւոց առեալ :

Չափ նձ Քսեստի լինի Քոս մի. և կոչի Լբրայեցւոցն և Եսուրւոցն ՚ի Հայոց առեալ. և է ՚ն Մողոյ չափ: Եւ Քոսն ըստ Հելլենականին կորոս (κορός) լի. և է նոյն չափ ՚ն Մողոյ, որ ունի նձ Քսեստ :

Կիւաթոս (χύθος) չափ է գինւոյ արկանելոյ յապակիս. և կոչի ըստ Ետտիկեցւոց լեզուի Ենդլիտերիոն (ἐνδλητήριον). գինեւ չան է երկայնադաստակ, որպէս զՃաշակ, վասն ՚ի խորութենէ կարասոյն զգինի չանելոյ :

Կաղամադեկովթ (μετεκώθ) և Մասմարովթ (μασμαρώθ) ՚ի գրոց երբայականաց ոչ է թարգմանեալ. արդ ուր գտանիցես զայս անուանս : Գիտասջիր, եթէ Կաղամադեկովթ ըմպելի ասի. և Մասմարովթն ճաշակ, որով զգինին չանեն :

Չ.

Յազազս ընթացից արեգական և համարոյ Չափուց ըստ կրկին օրինակաց Շիրակացւոյն¹⁾:

Կթէ կամիցիս գիտել, թէ այսօր արեգակն քանի հոլովումն առնու՝ և կամ քանի ասպարէզ ընթանայ, կալ զժամս առուրն, երեսնապատկեան, և այնչափ հոլովումն առնու. կալ զհոլովմունան, հինգհարիւրապատկեան, և այնչափ ասպարէզ ընթանայ:

Ասպարէզն է ըստ Օգիւստինոսեան Քայլ ճէ, և քայլն զ

¹⁾ Տես ՚ի գիրս Աշոոց և Չափուց զծանօթ. հեղինակին. եր. 37.

Աստանօր յաւելումք զբան անյայտ զրջին յերկրորդ հատորէ Յիշատակարանին Աէն Մառտէնի յեր. 379. Տարին ժբ ամիս է և ե օր, ծբ շաբաթ և ւ օր. ամիսն չ օր է. շաբաթն է օրն է. օրն ինչ ժամ է ընդ տիւն և ընդ զիշերն. և ժամն չ մասն է: Ամիսն չի ժամ է, և ինչ ժամն չի մասն է. Տարին փչկ ժամ է, և ժի բիւր մասն և բիւր բձ. ժւն է (?). և մասն չ ասպարէզ է, և ասպարէզն վտաւան հեռացութիւն է: Թաւալումն արեգական չ ասպարէզ է, և ասպարէզն չ նետաձիգ է. նետաձիգն ճծ քայլ է. քայլն զ ոտն է. ոտն ժզ մատն է: Մղոնն է ասպարէզ է: Կալ զժամ առուրն երեսունապատկեան, այնչափ հոլովումն առնու արեգակն: Կալ զհոլովումն հինգհարիւրապատկեան, այնչափ ասպարէզ ընթանայ: Յորժամ օրն ժբ ժամ լինի, յի հոլով առնու և ճղու ասպարէզ ընթանայ: Մեկ ժամն չ մասն է, մասն մեկ հոլով է. մեկ հոլովն եճ ասպարէզ է. ասպարէզն չ կանգուն է. քայլն ժի բուռն է. մեկ կանգունն է բուռն է. մեկ քայլն է ներբան է. մեկ ներբանն ժի զարեհատ է. մեկ Մղոնն է ասպարէզ է. մեկ մղոնն ինչ իրասիս է: Խրասիս իբ քայլ է և ինչ կանգուն է. մեկ մղոնն ոճ քայլ է և ոճ կանգուն. ժ ասպարէզն ոճ քայլ է. ի ասպարէզն վ քայլ է. ի ասպարէզն յ քայլ է. ճ ասպարէզն լու կանգուն է. չ ասպարէզն հեռ մղոն է. մեկ հոլովումն ճբ մղոն է. լայնութիւն արեգականն չ ասպարէզ է և ճծն կանգուն:

Ոսն, և Ոսն ժղ Սասն : Եւ Մղրնն է ասպարէզ : Իսկ ըստ Պարսից Ըսպարիսին ձխգ քայլ որպէս լինել գետնաչափութեամբ Մղրնն ու քայլ : Եւ Խրատին գ Մղրն. քայց օղաչափութեամբ երկրաչափութիւն Սասն ե՛ձ ասպարէզ ՚ի լայն և յերկայն՝ չորեք կուսի միաչափ :

Տաղանդն կշռոյ անուն է, որ է ձիւ լիտր. և ձիւ լիտրն ինն ու Ըսարիոն (Assarius) ըստ համարոյ : Եւ Լբրայեցիք զՏաղանդն քանքար կոչեն : Եւ Մնաս և Մոնաղ նոյն է (?) : Կենդինարն ձ լիտր է. և լիտրն հիւ Վահեկան. և Գրամով յորժամ կշռես ձ դրամ : Ունկին զհասեկանի կշռորդ է. և ժիւ Ունկին լիտր մի : Ունկին դարձեալ թ Սատեր է : Մին Սատերն սակաւ ինչ պակասէ ՚ի զդրամէ, որ է կէս Ունկոյ : Ծ Ունկին բձ Սիկո է, որով կշռէին զՏերս Ըրիսողոմայ, որ է հասեկան գձ : Սատերն կէս Ունկոյ է, որ է զդրամի կշռորդ : Գրաքմէն (Δραχμή) թ Գրամակշիռ է : Գիգրաքմայն (Διδραχμή) զ Գրամակշիռ է : Գիգրաքմայն և Սատերն մի է : Սիկոն թ դրամ. Սրբութեան Սիկոն ի Գանգ : Ըրգիւրոնն (Άργυρον) արծաթի Գահեկանի անուն է, զոր էառ Յուդայ ՚ի քահանայիցն : Գենարն (δηνάριον, denarius, دينار) Գահեկանի անուն է. և Գահեկանն ինչ կերատ. և կերատն կորիզ եղջրուենոյ (خروب), որ է չորից գարւոց կշռորդ. և ինչ կերատն լինի զի գարեհատ : Գրամն զ հանգ է. և հանդն ժիւ գարի : Մոնաթն ինն ու Ըսարիոն է. ըստ Հելլենականին Ղեփտոն կոչի, որ է անօս, որ է հանգ. զոր Քրիստոս հինգ ձագի վաճառ ասաց. և ըստ Լբրայեցոց Ըսարիոն նուագութիւն կոչի : Ըստ ժամանակին Գահեկանն կ Ըսարիոն էր. և Գահեկանն էր արծաթի : Ըշխարհագիր ըստ Հոովմայեցոց՝ Կապիտոյն, որ է գլխոյ. զի Կապա (կապուտ, caput) գլուխ է : Մնասն ըստ Խաալացոցն խե Ունկեաց կշռորդ է. և ըստ Լբրայեցոցն թ լտեր և կիտոյ. և ըստ Լբրայեցոց արծաթ թարգմանի : Սիմէս կէս Գահեկանի է : Տրմէս երրորդ մասն Գահեկանի :

Քսեստ ըստ ամենայն լեզուաց կոչի. քայց ըստ գաւառի գաւառի այլ և այլ չափ է : Ըստ Ըղեքսանդրացոցն թ լտերաց կշռորդ է. և ըստ Խաալացոց և Կաստրացոց ի ունկեաց : Սայխան

խեցեղէն է չափ իբ՝ քսեստաց : Կորոս ըստ Հելլենացւոցն, և
Եբրայեցւոցն քու, որ է ԸՄող: Կարոս կէս Մողոյ: Եւրտար որ
ասի Եւրզու, չորրորդ մասն Մողոյ, որէ հի՛ քսեստ: Մար, ըստ
Հելլենացւոցն Սատոն, ծ՝ քսեստ, և է չափ Հնճանի: Գոմոր
(γομόρ), որ է Եւրզու ըստ Հելլենացւոցն՝ ժէ Մողոյ չափ: Գրիւք
ի՛, որ է մի Մող, որ է չափ Արբութեան, իսկ Հելլենացւոցն ի՛
Չափ (τρία μέτρα) ասէ: Եւր իւղոյն որ յաւետարանին՝ Բեսին
է, բոլոր ապակեղէն, ունէր կէս լիտր: Կափասակ այրւոյն՝ զոր Հայն
Սրուակ ասէ, ի՛ քսեստաց չափ, որպէս Սափորն մանանային:

Է.

ԵՆԵՆԻՍՅԻ ՇԻՐԵԿՈՒՆԻՈՅ:

iii. յաղագս Երկնի:

Երգ որովհետև ՚ի մտաւորն եկաք բան՝ հարկաւոր է թէ և
յանմարմինն ելցուք տեսակ, ապաքէն ուստի արժան է՝ սկսանելի
է: Իսկ անսկսանելին ասի յանսկիզբն ումեքէ, ապա ուրեմն ան-
սկիզբնն անասաց և անճառելի մնայ, սակայն իմանալովն իմանի,
իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն իմանի: Իսկ միտքն զիտարդ կա-
րիցեն հասու լինել ասելոյն, եթէ ոչ ունիցին յանկուծիւն ՚ի
նմին իմանալոյն: Իսկ զոր ունին յանկուծիւն զնորա բերէ
զճշմարտութիւնն, արդ եթէ ինքն իմանալին կամեսցի՝ նորուն
յանկակցի մտացն, եկեսցէ ճառելին, ոչ զորպիսութիւնն վիտելով:
այլ զէութիւն զոյութեանն իմանալով: Քանզի որ իմանալին է՝ և
անեղ է, իսկ որ անեղ է՝ նոյն և անարար է, իսկ որ անարար է՝
նոյն և անտեղի է, իսկ որ անտեղի է՝ ինքն է տեղի ամենեցուն:
Եւ որ անարարն¹⁾ է, արարիչ է բոլորեցուն, ասացուք զնա և
անեղանելի, ապա յայտ է թէ եղեալքս ՚ի նմանէ առին սկիզբն
լինելոյ, իսկ յումմէ սկիզբն առին՝ նա գեր ՚ի վերոյ մնաց քան

¹⁾ յոր, անարն է.

զսկսեալսն : Այսպէս բարի փիլիսոփայքն մի աստուածութիւն խոստովանելով հրէաբար՝ ասացին եթէ տեսութիւն նորա ոչ մտաւք նկատի կամ բանիւ բովանդակի, և նա է սկիզբն և արարիչ ամենայնի. և եղեալքս ՚ի նմանէ՝ են թուով չորս՝ հուր և հողմ, հող և ջուր. և զհողի՝ աստուածային փշումն ասացին, և ոչ նիւթական արարած, թէպէտ և արար Աստուած, և զիտելի է նմա միայն որ արարն զնա. այլ երկինք և երկիր, և որ ՚ի նոսա, այս ՚ի նիւթից կազմեցան հրամանաւ արարչին որ արարն զնա : Այլ ունի խառնուած միաբանութեան առ միմեանս հաղորդութեան. և բնութիւն հրոյ՝ ջերմ և ցամաք, օդոյ՝ ջերմ և խոնաւ, ջրոյ՝ խոնաւ և ցուրդ, հողոյ՝ ցուրդ և ցամաք : Այլ ՚ի հաղորդելն ընդ միմեանս առնուն և ՚ի բնութենէ միմեանց : Արդ սոցա արարիչն յառաջագոյն նա խաինամութեամբ տեղի ոչ պատրաստէր, քանզի մարմին գործէր. իսկ մարմնոյ՝ զիրք հաստատութեան պիտոյ էր. իսկ հաստատութեան նախ ևս որ զտեղի ունիցի, և այլն ամենայն ընդ նովաւ պատկանիցին : Արդ ահա հասաք ՚ի կէտն ոչ զուզնաքեայ, այլ ՚ի մեծն և յահագին յերկինն վերին, որում Յոյնք եթեր կարգացին, և Քաղղէացիք հուր թաղկեալ ասացին, որում և բազումք յեկեղեցւոյ հաւանեցան : Թէպէտ և չարաց փիլիսոփայիցն ոչ թուեցաւ հաճոյ, բայց մեզ աւելորդ է զնոցայն ճառել, Լքեալ թողցուք զխոտեալսն, և դարձցուք անդրէն ՚ի կէտն ահաւոր, որում Յոյնք եթեր կարգացին, և Քաղղէացիք հուր թաղկեալ ասացին. և է նա մարմին անչարչարելի, հուր պարզ ոչ յու մեքէ, և ոչ ոք ՚ի նմանէ. ինքն յինքենէ, ինքն առանձինն, մարմին անհատ, անտեղիտալի, անկորանալի, անխորշ, անփոփ, անգոգ. պատ առեալ զամենայնիւ, փակեալ զգոյսս ընդ իւրև, տարածեցաւ, կալաւ բոլորն բոլորակ երկնից թաղուն սերտութեամբ, զտարերս ընդ իւրեաւ. և բաւական եղև մեծատարած շրջան նորա որ պատեաց զամենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա, բոլորակ զնդաձև, զոր տարածեալ ձև յաւիտեան կոչեն նոքա, շրջագոյ անդադար երազութեամբ, անչափելի և անթուելի, միայն իմանալի, ոչ ամենեցուն, այլ միայն որք զիմանալիս իմանան, ոչ որպէս կամին, այլ որպէս ՚ի գոյացութեան շրջագոյութեան, զոր և պրկումն անուանեն : Այլ ՚ի ներքոյ պրկմանն ըստ նմին ձևացեալ

կայ հաստատութիւնդ, զոր կոչեմք երկին. և ասեն զդմանէ թէ ջուր է և օդ, ոչ պաղեալ, և ոչ թանձրութեամբ խտացեալ, այլ ջուր է ճշմարիտ որպէս զաստիա լոյծ բնութեամբ: Եւ օդոյն փչեալ ուռուցեալ գոգացեալ որպէս զպղպջակ, որ փչեալ բոլորովին օդով ՚ի խոնաւութենէ անձրեաց, և առնուն կերպարանս ըստ օրինակի դմբեթաց: Կոյնգունակ և հաստատութիւնդ փչեալ է օդով, բոլորեալ պատ առեալ զերկրաւ. և օդ թանձր և թաղուն, և ամենայնիւ բնութիւն ցուրտ առաւել ՚ի ներքս մտեալ մէջ նորա շուրջ զերկրաւ պատեալ ունի ՚ի ներքոյ պրկմանն արգելեալ սաստկութիւն հողմոյն վերոյ և ներքոյ, և ՚ի մէջ առ փակեաց զմեծ մարմինս զայս զերկիրս: Քանզի ըստ ձեռյ բուն երկնի և սա բաղկացաւ, կատարեալ զձեն առեալ: Եւ սա շրջագայ անդադար ՚ի նմանէ հարկաւորեալ և ձև բոլոր շրջագային բաժանի յերկուս կիսագունսս, զի իցէ մին ՚ի վերոյ, և միւսն հայեցոյ ՚ի ներքոյ. և հայեցուած երկուց կիսագնտիցն հանդիպութեամբ կշիռ ուղիղ ՚ի վերին և ՚ի ներքին տրամագիծն: Կոյնպէս ըստ նմանութեան բուն երկնի ջուրն և օդն ձևացան: Օպայտսիկ և արտաքինքն ասացին. և ես հաւանիմ նոցա. մի վասն շուրջ գալոյ երկնից, զի և աստուածային գիրք վկայեն, որպէս Յովբայն ասաց տէր. *Գիտիցես՞ զշրջանն երկնից:* Եւ դարձեալ վասն երկու երկինս լինելոյ, որում նոյնպէս աստուածային գիրք վկայեն, որպէս յիսկզբանն յայտնապէս ցուցանէ երկու լինել. զոր կոչեն արտաքինքն երկին և բուն երկին: Բայց վասն նիւթոյ հաստատութեանդ միւս երկնի ջուր և օդ լինելոյ՝ բազումք յեկեղեցոյ վկայեն նոցա, որպէս հայաստանեայցս վարդապետ Սուրբն Գրիգորիոս ասէ ջրեղէն զհաստատութիւնդ երկնից: Երանելին Բարսեղ ՚ի վեցօրեայն ասէ, եթէ զվերին վայրս օդոյն հանդերձ խոնաւութեամբ ջրոյն երկինս կոչեաց, ըստ այնմ, թէ թռչունք երկնից: Եւր թռչունք յերկրէ ելեալք և կերակրեալք, և ՚ի սմա մեռեալք՝ զիարդ իցեն երկնից, եթէ ոչ զվերանալն յօդն կոչէ: Եւ դարձեալ ասէ նոյն ինքն Բարսեղ, եթէ յորժամ օրհնէր Մովսէս զազգն Յովսեփու, ասէր՝ ՚ի ցօղոյ երկնից, և դարձեալ յորժամ դնէր անէծս Խարայելի, ասէր. Եւրարից ՚ի վերայ քո զերկինս պղնձի: Եւ զինչ իցեն միտք բանին, եթէ ոչ՝ ամենեւին երաշտութիւն. զի յօրինուածոյ պաղոյ

երկրի պատճառ՝ օղոյն խոնաւութիւնն է, որ անուանեցաւ երկինք, որպէս ասելով՝ ՚ի ցօղոյ երկնից՝ զխոնաւութիւն ջուրցն յայտ առնէ զոր ունի օղն ՚ի վեր, որպէս ցանէ զաշխարհաւ ՚ի պարզ ժամանակի. զայս Վարսեղ ասէ: Վայց զնիւթոյ բուն երկնից բաղումք բաղում ինչ ասացին, որ յեկեղեցւոջ ոմանք վկայեն նոցա, և ոմանք այլ ինչ ասեն, հանդոյն Վիլոնի՝ եթէ միտք են, և ոչ նիւթական ինչ: Աւ վասն երրորդ երկնի արտաքինք ոչ հաւանին, և ոչ բնադիրք ինչ ոչ յայտնեցին մեզ. բայց վասն ՚ի Պօղոսէ կոչելոյ, ես այսպէս հաւանիմ թէ զերկրէս ասիցէ¹⁾. զի ուր Աստուած է՝ երկինք կոչի. և փրկչին մերոյ Վրիստոսի Աստուծոյ ՚ի վերայ երկրի շրջելով՝ երկին ասեմ կոչիլ ՚ի Պօղոսէ. մանաւանդ զի դրախտն յերկրիս, և ոչ յերկինս իմանի:

բ. յազգս Արկրի.

Օ երկիր ոմանք ՚ի բարեաց փիլիսոփայիցն ասացին թէ ձեալցեալ է իբրև սկուտեղ, և ոմանք ասացին իբրև զգունտ, և ոմանք իբրև զքուէս երկեռակ (երկերրեակ?), և ՚ի միջոցին երկնի կառուցեալ՝ սաստիկութիւն հողմոյ ՚ի ներքոյ մտեալ՝ ամբարձեալ ունի զերկինս ՚ի վեր. և ընդ անգայտութիւն ցան և ցիր հողմոց երկրի խառնեալ մանրասիք խոնաւութիւն ջուրց, և հողմոյն սաստիկութեամբ ՚ի վեր փչելով և երկրիս թանձրութեամբ հողոյն ՚ի վայր զալով՝ կափչի հողն յիրեարս և ճնշի իբրև ՚ի մամուլս մանրասիք խոնաւութիւն ջուրցն ՚ի վեր կոյս, և խտանայ երկրային մարմինն ՚ի ներքոյ ջուրցն, և լինի սալայատակ հաստատրամ, անպախելի և անպայթելի նեցուկ անվթար, զբազում ջուրս յինքեան ունելով, զոր և ծով անուանեմք: Աւ քանզի երկիր չորեքկուսի ՚ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թոյլ տայ սմա երկին իւրով երազութեամբն ՚ի ներքին կիսազունտն խոնարհել. քանզի երկիր իւրով ծանրութեամբն հակէ ՚ի վայր իջանել, և հողմ իւրով ուժգնութեամբն ջանայ ՚ի վեր բերել զնա. և ոչ ծանրութիւն երկրիս թողացուցանէ ՚ի վեր բերել, և ոչ ուժգնութիւն հողմոյն թոյլ տայ ՚ի վայր

¹⁾ յօր. ՚ի լս. զգրախտէն.

իջանել: Աւ այսպէս զհասարակակշիռ կէտն կալեալ կայ. և յերկոցունց հակառակացն զտրամագիծն ունի: Իսկ կայան սորա ՚ի տրամագծի անդ զուղիդ անկիւնս չորեսեսն աս միմեանս հայեցուցանէ. և ՚ի հայել ուղիդ անկեանցն առ տրամագիծսն միջին, զամենայն հարթարտակ զուղամասն զլեռնային և զղաշտային և զծովային յարմարեալ անվնաս պահէ. զի որք ՚ի սայս են՝ անկասկած առցեն զլինելութիւն հրամանաւ արարչին: Աւ եթէ ոք կամեսցի՝ օրինակ տեսական զարտաքնոցն լսել, իբր թէ զկայս երկրի նմանեցուցանել ինձ ՚ի դէպ թուի ասացեալն իբրև զձու. որպէս նորա դեղինն ՚ի միջին գնտաձև կառուցեալ կայ. և սպիտակն շուրջ զնովաւ, և խեճեպն պատ առեալ զամենայնիւ, նոյնպէս և երկիրս ՚ի միջոցին կառուցեալ կայ, և ապա շուրջ զնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ: Գարձեալ թէ առցէ ոք աման խեցեղէն, և արկցէ անդ ջուր և ձէթ և աւազ, և ահա յայտնի երևեցաւ. աւազն կալաւ զներքին կողմն ամանոյն և ձէթն զվերինն, և ջուրն հարկաւորեալ ՚ի միջոցին կառուցաւ. և ամանոյն մարմինն՝ պատ առեալ զամենայնիւ: Իսկ եթէ տարերքս այսպիսի ունին նմանութիւն ցուցական արարածոցս, որչափ ևս առաւել արարիչն ամենայնի կամի զի արարածքս այսպէս յօրինեալ կազմեսցին բնական բերմամբ: Իսկ որ ինչ չարաց փիլիսոսփայիցն եղեալ է օրինակ յազագս երկնի և երկրի՝ առելի է ինձ ՚ի նոցա ասիցն ճառել զբովանդակն բաց ՚ի սակաւուց: Օրինակ ասեն զյարկ աղամանդեայ գմբեթին որ ՚ի Արեւոէս, և զանդրին երկաթի որ ՚ի մէջ օդոյն կառուցեալ կայ՝ ոչ յոք հասանելով. զի ծանրութիւն երկաթոյն ՚ի վայր հակէ, և զօրութիւն աղամանդին ՚ի վեր քարշէ. և այնպէս կախեալ կայ հնարագիտութեամբ ճարտարին, զոր առաջինքն Արեւտացուց զլուխ մեհենաց ունէին: Արդ թէպէտև արտաքինքն յազագս երկրի այսպէս ասացին, եթէ չարքն և եթէ բարիքն հանդոյն նոցին, թէպէտ և սակաւիկ ինչ մաքրագոյն, բայց ես ոչ հաւանիմ նոցա, յիշելով զաստուածայինն բան որ առ Յովբն ասէ. Յէր վերայ հաստատեղան աղիք դորա: Աս արդարև անգիտելի վարկանիմ զայն ՚ի մարդկանէ, զի թէպէտև լսեմ ՚ի Սաղմոսարանին թէ ՚ի վերայ ծովու հիմունս արկ երկրի, կարծեմ թէ վասն զի խառն բնդ սանդարամետսն է ջուրն, զայնմանէ ասիցէ ջրոյ ՚ի վեր

ունել զերկիր, տարակուսին միտքս թէ զխորդ ՚ի վերայ անչափ բնութեան ջուրցն կայցէ անչափ ծանրութիւն երկրի, և ոչ ընկղմի և ոչ գերծեալ փրծանի յամենայն կողմանց երկրէ, սորեալ անկանի ՚ի ջուրսն: Արդ ես հաւատամ միւսում Սաղմոսին որ ասէ. Լա հաստատեցի զսիւնս նորա. իբր թէ հրամանն աստուածային կարող է ունել զարարածս յիւրաքանչիւր կարգի, և ՚ի մարդկանէ անդիտելի է:

Ասեն արտաքինքն զբնակութիւն կենդանեաց աստի և անտի, եթէ զոն ՚ի ներքոյ երկրի մարդիկ, և այլ կենդանիք որք ընդդիմոտունք են մեզ. որպէս ճանճք զննձորով պատեալ, նոյնպէս մարդիկ զերկրաւ. և յամառեալ պնդին՝ ասելով. Եթէ ոչ էին ընդդիմոտունք, ում արդեօք արեգակն տայր լոյս զկէս օրն, յորժամ ստուերան զմեզ զիշերացուցանէ: Օ՛ի անօգուտ արեգականն զընթացս իւր ծախել անհնար է: Այս են անմտութիւնք մեծ, և աւելի թուին ինձ ՚ի սոցանէ ասացեալքն. թողում ասել զյանդիմանութիւնն որ յաստուածային զրոյց: Բայց յորժամ մարդկային իմաստիւք հայիցիս, յայտնապէս երևի անմտութիւն նոցա ճառիցն. զի թէ աստէն իսկ յաշխարհի բազում այն է որ անբնակաց և անկենդանեաց տայ արեգակն զլոյս, քան որ բնակաւորքն են տեղեօք, և յորում զոն կենդանիք, որպէս հիւսիսայինն ՚ի սառնամանեացն է անկենդանի, և կամ հարաւայինն երկիր յաւելորդ ջերմութենէն, զոր այրեցական գօտին կոչեն, կամ անապատն արևելից, որ և ոչ ՚ի զեօնոց անգամ գտանի: Բայց պարտ է մեզ զերկբայանալ խորհրդոց իմոց սլատմել ձեզ որ ինչ յաղագս այսր եղև. թէպէտև լսէի ՚ի մարդարէից և յամենայն աստուածային զրոյց, և ՚ի վարդապետաց եկեղեցւոյ, թէ ոչ զոն այլ ներքնաբնակ կենդանիք, սակայն ես հաւանեալ էի ընդդիմոտունս մեզ լինել, և ըստ իմոց խորհրդոց զաստուածային զբանն ձևանալ համարէի: Եւ արդ մի զիս եպեղէք սիրելիք, զիտէ ծածկագէտն զի ոչ ստեմ մինչդեռ էի առաւօտին յաղթսն ՚ի վկայարանին Սբբոյն Ազիւնայ, և միտքս յայս խորհուրդս ծփէին, քուն էառ զիս, և տեսանէի որպէս թէ արեգակն ՚ի ծագելն խոնարհէր յերկիր իջանել, և ես յառաջս ընթանայի, և ՚ի զիրկս ընդունէի զնա, և նա էր պատանի անմօրուս ոսկեդիտակ, և շրթունք բերանոյ նորա որ

պէս թէ ոսկուով լինէր օծեալ, և ինքն սպիտակս և փայլունս ունէր
հանդերձս: և լոյս սաստիկ ելանէր ՚ի բերանոյ նորա: Աւ ես ասացի
ցնա թէ ՚ի վաղըն ջուց ցանկացեալ էի ՚ի քէն լսել բան, արդ աղէ
պատեան եթէ յորժամ ծածկիս ՚ի մէնջ, ում տաս լոյս, զոն այլ
կենդանիք ՚ի ներքոյ երկրիս, թէ ոչ, և նա ասէ, Ոչ, այլ լերանց
և անփայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյս: Աւ
իմ պատեալ զայս վարդապետին իմոյ, և նա ասէ, Օխ բնդէր՝
ոչ հարցանէիր զայդ, և նա եցոյց ինձ զձառս երանելոյն Միփիլո-
քոսի որ մեկնէր զգիրսն Յովբայ ՚ի խօսսն Տեառն որ ասէ այսպէս.
Օխնչ վայրք իցեն ուր ծածկեմ ես զարեգակն ՚ի գիշերի յերեսաց
ամենայն կենդանեաց: Արդ պարտիմք հաւատալ մեծի վարդապե-
տին, և նորուն նմանեաց արանց աստուածայնոց, և ոչ արտաքնոց,
և զշարժմանց երկրիս ես հաւատամ Սաղմոսին որ ասէ, Ո՛ հայի
յերկիր և տայ զողալ սմա, և կամ որպէս ՚ի Յովբն պատմի, եթէ՝
Ով շարժէ զառ ՚ի ներքոյս երկնից ՚ի հիմանց, և սիւնք նորա
զողան:

Գ. յաղագս Ծովու.

Օծովէ ասեն խելագարեալ փիլիսոփայքն հեթանոսաց, թէ
պնտ առեալ զերկրաւ, և ՚ի միջի ծովու է երկիր իբրև կղզի մի,
և ջուր ՚ի վերայ օդոյ և ՚ի կողմանէ, իսկ որ ՚ի վերայ երկրիս են
ծովք՝ ընդ որս շրջին մարդիկ՝ գոյ նոցա եզերս, սպառուածն և
բաւանդակածն, և ՚ի սմա են ձկունք, և այլ կենդանիք բազումք:
Իսկ ՚ի ծովուն, որ շուրջ պատին զերկրաւ, ոչ գոն ՚ի նմա կեն-
դանիք, և ոչ եզր սպառուածի, քանզի ոչ երկիր, և ոչ այլ ինչ
կայ զնովաւ, և ոչ արեգակն անցանէ զնովաւ, այլ ընդ եզր նորա
առ երկրաւ մտանէ և ելանէ: Փիլիսոփայքն բարիք ասացին
զծովէ թէ այս իսկ է որ ՚ի վերայ երկրի է, և ՚ի մէջ ընդ որ
շրջին մարդիկ, և ոչ գոյ այլ ծով արտաքոյ երկրի, և այս ծով
թէպէտ սահմանաւ զտեալ են ՚ի միմեանց, այլ մի են, զի ծակք
են ՚ի միմեանս ներքոյ երկրիս, և յատակք ամենեցունց ՚ի միմեանս
հային, թէպէտ և յոյժ հեռի են ՚ի միմեանց վերին սահմանօքս,
և ես հաւանիմ այսմ, զի աստուածային դիրն հանդոյն սոցա ասէ.

Ժողովեցին ջուրքն որ ՚ի ներքոյ երկնից՝ ՚ի ժողով մի. յորմէ
 մարթի իմանալ թէ խառնին ՚ի միմեանս, և զուգեալ լինին ՚ի մի.
 և դարձեալ ասէ. **Օ** ժողովս ջուրցն կոչեաց ծովս. և ահա յայտ
 է թէ որոշեալ սահմանօք եցոյց զխորշս գոգոցն որ են յամենայն
 կողմանս երկրի. և ունին իւրաքանչիւր խորշքն առանձին կեր-
 պարանս, եթէ ծովն հարաւոյ, եթէ ծովն արեւելից, եթէ ծովն
 հիւսիսոյ, եթէ ծովն արեւմտից. և անուանս ունին իւրաքանչիւր
 գոգքն բազում ծովուց. զի մին անուանեալ կոչի Պոնտոս և Լւբ-
 սինոս, և միւսն Պրոպոնտոս և Հելլեսպոնտոս, և միւսն Լագէոս
 և Յուսիոս, և միւս ծովն Սարգոնիկեաց աշխարհին, և միւսն
Սիկիլիաց աշխարհին, և միւսն ՚ի **Տիւրսի**, հանդերձ այլ ևս բա-
 զում անուամբք, որ անցանն զթիւ և զհամար. և են այլ ևս բա-
 զում ծովակք որք ոչ են յաշխարհածովէն՝ թէպէտև զդառն և
 զաղի ճաշակս ունիցին, և աւազով սահմանեալ գտանիցին ըստ
 օրինակի կերպարանաց մեծաց ծովուցն: Սակայն ոչ է պարտ
 զծովական ծովս կոչել. ոչ զ**Ասփալդէս**¹⁾ ծովակ որ մօտ յաշխարհն
 Հրէաստանի է, և ոչ զ**Սերբինիդիս**²⁾ ծովակ որ է ընդ Լագիպոսս
 և ընդ Պաղեստինէ ՚ի միջի, և զայ հասանէ յաշխարհն Ըրարա-
 ցւոց: Լւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչեմք **Բզնունեաց**, և
 ոչ այլք որ յարևելս են որ կոչին նոյնանմանք. զի սոքա զոր
 ասացաք՝ ծովակք են և ոչ ծովք: **Թէպէտ** և ասեն ամանք զծո-
 վէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկերէ որ
 կոչի **Լուպիս**³⁾, եթէ զատեալ մեկնեալ են ՚ի բուն ծովէն, այլ որ
 փոյթ յանձին կալան զաշխարհ ամենայն ՚ի գիր առնուլ, որպէս
 յառաջն ասացի, ասեն թէ ծակք են ՚ի միմեանս ծովքն, և երթան
 կցին ՚ի միմեանս ներքոյ երկրի. որպէս զի լինի ըստ աստուածային
 դրոցն ժողով ջուրցն մի: Բայց վասն միակշիռ կալոյ ծովու, և ոչ
 լնլոյ ՚ի գետոց և յուղից ըստ բանին Սաղոմովնի, որ ասէն թէ՛
Լմենայն ուղիք ՚ի ծով գնան, և ծով ոչ է լցեալ, փիլիսոփայքն
 բարիք ասացին վասն միակշիռ կալոյ ծովու, թէ՛ ջերմութիւն

1) Ασφαλίτης, Strab. p. 763.
 2) Σερβωνίς, Σερβωνίδος λίμνη, Strab., 50, 763.
 3) ἡ Κασπίς? Dionys. 748.

արեգականն ծծէ քաղէ զքաղցունսն և զնուրբսն և զթեթևսն գոլորշեաւն հանէ յօդսն. և թանձունքն և ծանունքն անդէն մնան, այսինքն պղտորեալքն և մրրկեալք, և որ անդէն մնան են աղի և դառինք. վասն այնր է ծով միակշիւ և ժահահամ, զի գոլորշին որ ձգեցաւ ջերմութեամբ արեգականն, պակասեցոյց զյաւելուածն, և տարաւ զքաղցրութիւնն: Աւ օրինակ տան զկաթնայս և զսանս լի ջրով եռացուցեալ ՚ի հրատի: Միտ դիր թէ զիւրդ ելանէ թերութիւն ջրոյն գոլորշեաւն որ ելանէ ՚ի նմանէ, զի թէ յերկար թողցես ՚ի բորբոքեալ հրատին, և ոչ յաւելցես ածել ՚ի նա ջուր՝ ամենևին սպառի. նոյնպէս ծով զուգեալ կայ յաւելոյց դետոց և ուղիւից և պակասելոյ գոլորշոյն զոր ձգէ արեգակն տասրովն իւրով և հանէ յօդս: Ասեն օրինակ ՚ի նաւալարաց որոց թէ պակասէ ջուրն, ասեն, ՚ի ծովու՝ առնուն ջուր զաղին և զգառն, և արկանեն ՚ի կաթոս և եռացուցանեն ՚ի հրատի, և դնեն սպունգս մեծամեծս խփունս կաթնայիցն և ՚ի խոնաւութենէն զոր առնուն սպունգքն ՚ի գոլորշոյն՝ ջուրս քաղցունս ժողովեն քամելով: Աւ այսպէս հնարագիտութեամբ առնեն դարմանս կենաց իւրեանց ՚ի նեղութեան ջուրցն նուազութեան, յոր ժամ նուաղի ՚ի ծովու: Արդ թէպէտև օրինակս հաւանականս տան արտաքինքն, սակայն ինձ ոչ է հաճոյ. քանզի հաւատացեալ եմ թէ հրաման աստուածային է որ ունի զծով միակշիւ արգելեալ, բոտ բանի Սաղմոսին որ ասէ. Սահման եզ որ ոչ անցանէ, և ոչ ևս դառնան ծածկել զերկիր որպէս զառաջինն. քանզի ինքն ասէ Տէր. փակեցի զծով զրամբք, եզի նմա սահման, ասացի՝ ցայդ վայր եկեսցես և այլ մի անցանիցես, այլ այդրէն ՚ի քեզ խորտակեսցին ախբքս: Արդ եթէ զնալոյ ջուրցն յերեսաց ծովու ոչ արեգակն եզև պատճառ, այլ հրամանն աստուածային. զի յառաջ քան զլինել իսկ արեգական ժողովեցան ջուրքն ՚ի ժողովս իւրեանց, և ցամաքեցաւ երկիր, ասպա յայտ է թէ ՚ի հրամանէ Աստուծոյ արգելեալ կան ծովք միակշիւ, զի մի դարձցին ՚ի ծածկել զերկիր:

Դ. յաղագս Արկնային զարդուց:

Որ ինչ յաղագս երկնային զարդուց ՚ի մէջ Քաղղէսացւոցն

պատմին բանք բաջաղանաց, աշխատութիւն անշահ համարիմ
զստութիւնս նոցա: Յառաջ ժամանակաւ մարդք իմաստասէրք
որք զանձինս իւրեանց ՚ի սկզբանէ մանկութեան իւրեանց ետուն
՚ի դեղերումն երկնային տեսութեանն, և զբնութիւն իմաստու
թեան ՚ի վար արկին, հասու եղեալ ամենայնի գեր ՚ի վերոյ երկնա
ձեմք երևեցան, և պսակս և աշխարհս և գոհութիւն ՚ի մեծամեծ
թագաւորաց ընկալան: Իսկ վարդապետք եկեղեցւոյ կարգի ու
սումնասիրութեան զանձինս տուեալ՝ անցին ընդ ամենայն ճրգ
նութիւնս, պահելով զաստուածային հաւատս մկրտեցան ՚ի խորս
գիտութեան. քանզի դրաւոր օրէնք ոչ ընդդիմանան բնական
գիտութեանն: Ապա թէ միաբանութիւն է, դաստիարակ եղեն մեզ
առաջին իմաստասէրքն, զի նոցա տեսակ քննութեամբք յորոց
ճշմարիտքն ասացան. և մերոց հարցն առաջնոց ընկալեալ ՚ի
նոցանէն զտրամագիծան ասացեալս, զի յերկրոցունց՝ յարմատոցն
և ՚ի ծայրէն պահելով մեզ զաստուածային հաւատսն, պողով ծայ
րին առլցեալք, և հաստատուն արմատովն միշտ դալարաբե
րեալ՝ պողաբերք լիցուք ՚ի գիտութեան:

Արդ ահա եօթն պարունակք ասեն հարկաւոր շրջագայց ընդ
հրային կամարին երկնի, ընդ որ շրջին աստեղքն ՚ի նոսա, եղեալ
դիզեալ զմիմեամբք ՚ի մէջ միմեանց աստիճանեալք: Աւ այսպէս
յամենեսեան զնան աստեղքն հակառակ ընդդէմ ՚ի ներքնումս:
Առսին բերի յիւրում գօտւոջն, և ՚ի վերայ նորա հինգ աստեղք
մոլորակքն բերին յիւրում գօտւոջն, և ՚ի վերայ նոցա արեգակն
բերի յիւրում գօտւոջն, և են ամենեցուն ցրտութիւն և միջնորդեն
արեգական և արփւոյն. և զանշէջ տոչորումն արփւոյն՝ իւրեանց
բնական ցրտովն սաստիկ բարեխառնութիւն առնելով, արեգա
կանն մատուցանէ օգնութիւն: Իսկ արեգականն առեալ հեղու ՚ի
ներքին գօտիսն, և ՚ի ձեռն մոլորականացն սփռեալ տարածանէ
ընդ երկիր օդով և լուսով. զի օգն ունիցի զհովութիւն, և լոյսն
զարեգակնային մասն հրոյն, և ՚ի ձեռն երկուցս այս նուրբ և անօսր
տարերցս կենդանածնեալ լինի երկիր, օգնականութեամբ ծովային
ջրով: Բոյսք խոտոց և պտուղք ծառոց և շարժուն կենդանի շնչաւ
որ, և ամենայն սողուն, հետեակ և թռչուն, և սեռականք՝ գա
զանք և անասուն, և նուազութիւնք և աճմունք, ապականութիւն

մարմնոյն, լրմունք և սրկասութիւնք ուղղոց և անասնոց և մարդկան: Մշտնպէս արեանց և շնչոց, առ ՚ի լինելութիւն և ապականութիւն. զի լինելութիւն սկիզբն է ապականութեան և ապականութիւնն դարձեալ՝ սկիզբն է լինելութեան: Օչի յայսմ անվնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ գտեողութիւն:

Է. յաղագս որ ՚ի մէջ երկնի և երկրի շարժմունք:

Ամենայն արարածքս առ ՚ի յօգուտ մարդկան եղեն ըստ բարերարութեան և մարդասիրութեանն Աստուծոյ. զի որպէս պատճառք ճշմարիտ արարչութեանն, նոյնպէս և անսխալ մատակարարութեանն: Արդ է բնութիւն մի՝ հողմ: և ամպ և ձիւն և եղեամն և օդ և ծիածան և ձայն որոտման, նոցին սակի են և շանդիք և ցոլմունք: Առ ՚ի սոցանէ որ սեռական է և պատճառ առ ՚ի սկստս աշխարհի կելոյ. և են ՚ի սոցանէ որ հետեանք են սեռից. և գոյնք առ ՚ի տեսութիւն և երևմունք նշուելոց: Արդ հողմոց սեռ՝ ցրտութիւն. իսկ մատունքն ՚ի բաժանմունս բազում: Թանձրութիւն գործի՝ համբառնալով զծովային ջուրս, և լեռնայնոյն և դաշտայնոյն առ ՚ի հասարակութիւն մատակարարելով: Իսկ առ յոյժ ցրտութիւն ձմեռնային ժամանակին ինքն ամպն կոտորատի հանդերձ խոնաւութեամբն, բաժանի, բրդի, լնանի, դիզու ՚ի բարձրավանդակ վայրսն, զոր ձիւն անուանեմք: Իսկ նոյն ցրտութեանն ՚ի պարզ ժամանակին յորժամ ջինջ երկինն լինիցի՝ ՚ի խոնաւութենէ վերնոյն ձիւնակերպ իջեալ սիռամմբ անօսրութեան հողմոյն, զոր սիրդ¹⁾ կոչեմք: զնի ՚ի վերայ երկրի զոր եղեամն անուանեմք: Իսկ ՚ի պարզութեան անուշութեան հողմոյն ՚ի ձեռն հրային մասինն սիռի տարածանի առ երկրաւս առ ՚ի ծծումն կենդանեաց աճմանց և նուազութեանց, զոր և օդ սովորեցաք ասել: Իսկ ՚ի գարնանային ժամանակին յորովք լինին անձրևք, և արեգակն ՚ի հարաւային միջօրեայն մերձեալ, և ջերմութիւն և խոնաւութիւն յիրեարս խառնեալ և փարատեալ անձրևին, յօդէն ՚ի ներքուսդ ՚ի վեր գոլորշիք խոնաւութեանն ընդդէմ

1) سار?

ձգման արեգակնային նշուլիցն սփումամբ անօրութեամբ օդոյն և զգեճու զգոյնս ազգի ազգի. և ըստ երկնային գնդին երևի կամաւրաձև, ողորկակալ¹⁾ զոր և մարդիկ աստուածակամար կարգացին. և է նշանակ դադարման և փարատելոյ յորդ անձրևաց. բայց թէ կրկին երևեսցի՝ երփն երփն գունօք զգաւազանսն ձգելով, զսաստիկ անձրևաց և զդողացուցիչ յորդութեանց յայտ առնէ: Իսկ մեկինն զդադարումն և զփարատումն: Քանզի էր սա ՚ի սկզբանէ ընդ երկնի, զի հետևանք են տարերց. որպէս մղտութիւն ծխոյ՝ առ ՚ի պարզիլ քամիլ գէջ խոնաւութեանն հրային կերակրոյն. և ապա յստակիլ սրբիլ լուսատեսիլ բոցոյն: Արդ ՚ի սկզբանէ լինելութեան երկնի և երկրի, և ՚ի սկսմանէ անձրևացն էր տեսիլ նշանիս պսորիկ, որով մարդիկ նշանակիցեն զդադարումն յորդ անձրևաց. սոյն զսա յառուրսն յառաջինս արկածից անչափ անձրևացն՝ որով դատեցաւ զգարն առաջին, դնելով ուխտ ընդ արդարոյն, թէ պսպիսի հեղեղ բարկութեան այլ մի եկեսցէ յերկիր: Իսկ սովորական անձրևն որ յառաջ քան զըրհեղեղն էր, և ձգումնն երևմանն որ էր յառաջ քան զըրհեղեղն, լիցի և զկնի ջրհեղեղն, և անձրևք և նշոյլք, յորմէ բաղկանայ ձև կամարին իբրև բազմատեսիլ երանգոց: Աւ մարդիկ հայեցեալք ընդ այս, ականկալութիւն յուսոյ լինի ըստ առաջին յարմարական արարածին: Իսկ որոտումնոր որ լինի յանկարծակի ՚ի յեղանակս երկից ժամանակաց, և ձմերանի ոչ երբէք լինի, այլ ՚ի գարնայնի յաճախ և սաստկագոյն, ասացից որպէս են, և վասն էր են: Քանզի ձմերանի ստերջանան ամպք. և որ բերինն ՚ի խոնարհ՝ ինքեանք են այնք հանգերձ ջրային խոնաւութեամբ, վասն որոյ և ոչ ձայն կարեն հանել: Իսկ գարնանային ժամանակին օդն պարարի խոնաւութեամբ. և յարեգակնային ջերմութենէն ջլանայ զհարստութիւն. և առ ՚ի յոյժ փոթորկելն խոնարհի ՚ի ծով, և բերանացեալ համբառնայ զջուրն ՚ի վեր. և ՚ի սաստիկ արբմանէն ծանրութեամբ յառաջ խաղայ. իսկ այլ հողմք շուրջ պատեալ զնովաւ զօրէն կառավարի, զերասանակս ՚ի ձեռն առեալ ստիպելով անցանէ յերկնային ասպարիսին. իբր առաջին և միջին և վերջին բախ.

¹⁾ ողորկակող?

մունս, և ճայթմունս գործեն, չկարացեալ ընդ դայտուծիւն մար-
մնոյն միանգամայն հոսել զբազմութիւն ջուրցն ծովային, զօրէն
դժուարածին կանանց բարձրածիւ ձայնս արձակեն, զոր որոտմունս
անուանեմք: Եւ այս ոչ դուզնաքեայ և դատարկ իրօք. քանզի
ի կենդանածննդոց մարդկան յորժամ որք յոյժն դժուարին՝ շիկնելն
և շառագունելն և մեծաձայն աղաղակելն ոչ այլ ինչ է, այլ որչափ
զհոգին յինքն քաղէ և զձայնն ՚ի վեր բարձրացուցանէ, շնչե-
րակքն ՚ի խոնարհ կոյս զմարմինն ճնշէ. զի որ ՚ի ներքս իցէ՝
բռնադատեալ ուժով ՚ի վայր բերցի. իսկ որ թէ առ ոմանս այս
պիսի բնական հնարիւք վարիցիմք, նրչափ ևս առաւել մեծ մար-
մին ամպոց որ է պատճառ երկրային մարմնոյն թանձրախտ, քան
զձմեռնային ժամանակին որ պաղեաց, ձուլեաց, սառեաւ, բնդար-
մացոյց զբերրի հող արգաւանդահող տեղեացն, սոյնպէս և զամե-
նայն առապարս: Երդ ոչ միայն սա կարօտ է ջերմութեան և խո-
նաւութեան, այլ և ձայնի արձակման յերկնուստ. զի ՚ի սաստիկ
ճայթմանէ օդոյն շարժմամբ խտացեալ թանձրութիւն հողոյս թու-
լացի, և ՚ի դալարաբեր արմատոյն բոյսք խոտոցն վերբնծիւ-
ղէցին: Սոյնպէս և պտուկք ծայրիցն ծառոց բացեալ փթթիցին,
և այլքն բոտ իւրաքանչիւր կարգի՝ զձմեռնային ծանրատաղտուկ
թախժութիւնս ՚ի բաց ընկենուցուն, զարթուցեալք և զուարճա-
ցեալք յոյժ պայծառութեամբ երկիր առնուցու զվայելչութիւնս:
Ետա թէ լինիցի ինչ հետեանք վնասուց ՚ի սաստիկ որոտալոյ,
իբր թէ կարկուտք և հրաձգութիւնք, այս ՚ի վրէժխնդրութիւն
անդգամաց, և ՚ի խրատ այնոցիկ որ զահ և զերկիւզ արարչին չու-
նիցին յանձինս իւրեանց: Քանզի մարդկան իշխանաց գործիք են
տանջանաց գաւաղանք, չարիք, շղթայք, պէսպէս մենքենայք,
և մարդիկ սպասաւորք և ստրուկք: Ոչ զի մարդատեացք իցեն
թագաւորք, այլ յառաջահոգակք, շինիչք և խաղաղասէրք, կար-
գիչք և յօրինիչք գեղեցկադիր օրինաց: Իսկ վերին թագաւորն
արարչական զօրութեամբն բարերար և մատակարար և մարդա-
սէր: Իսկ դատողականաւն խրատիչ և կազմիչ, և լսեն ամենայն
տարերքս, և ահաւորութեամբ կան ՚ի սպասու: Ենչափութիւն
անձրևաց ողորանեն, և երաշտութիւնք զերկիր դալարաբեր ցա-
մաքեցուցանեն, և ժանտախտք, սուր, հիւանդութիւնս, մինչև

Հարկանել մարդ և անասուն առհասարակ: Իսկ յորժամ յանհնա-
րին ցասունն ումեք բրդիցի, որպէս երբեմն ուրեմն ՚ի վերայ
Սողոմոնացոցն ՚ի յերկնէ ՚ի հրեղէն մարմնոյն կոտորատեալ ՚ի վայր
հոսեցուցանէր: Օ, որ և այսօր ՚ի նմին մարմնոյն անկեալ յերկիր՝
շանդի անուանեմք: Աւ հասեալ իբրև կենդանի մտաւոր՝ զբար-
կութեան հրամանն կատարէր, և չգաղարելով ծակէ զթանձրու-
թիւն երկրի: Թափ անցանէ ՚ի ներքին կիսազունդն, զի ուստի
հատուան՝ անդէն զտեղի առցէ: Սորին հրոյ սակի է զոր ցլմունք
աստեղաց անուանեմք. քանզի առ ՚ի յոյժ բախմանց շրջագայ
պարունակացդ շարժելով զյարմարական գնացս՝ երևումն լինի
վերին լուսոյն, իբրև ընդ անօր փառարս ինչ օղեղէնս. և ՚ի
յաղամողել լուսոյն էառ փայլատակիւն՝ առ ՚ի ցրբուել ուժգնու-
թեան օղոյն: և վաղվաղակի ժողովումն ծածկութի անդրէն լինի:
Աւ մեք հայեցեալք ՚ի հեռաստանէ, չկարացեալ ճշմարտութեան
իրացն ՚ի վերայ հասանել հաստատութեամբ, աստեղ թափելոյ
նշան առնեմք զայն, և ոչ լուսոյն վերնոյ, որ է ճշմարիտ: Բայց
ոմանք ՚ի փիլիսոփայիցն որ յեկեղեցւոջ ասացին թէ է հողմ
սառնային և թանձր, որ և զնա եթեր կոչեմք, նա խոնարհի յա-
մպն, և զուրն իբր ոլոռն ոլոռն սառոյց գնդէ, և այն է կարկուտ:
Աւ ասեն թէ զորոտումնդ այն հողմն առնէ, և զփայլատակմունս,
զի ամենայն արարածք բնութեամբ ունին յինքեանս հուր, եթէ
ցամաքայինք և եթէ խոնաւայինք, և ՚ի բախել հողմոյն զամպն՝
հուր ելանէ յամպոյն, և ձայն ձայթմանց բախմամբ հողմոյն: Աթէ
սակաւ բախէ, սակաւ և հուրն ելանէ, և ձայնն, և անդէն ընդ
ամպն անցանի, ՚ի վեր բերելով օղոյն: Աւ եթէ ուժգին բախէ
հողմն, ուժգին և ձայնն և հուրն ելանէ, և չգորէ օղն՝ ՚ի վեր
ցանել զնա ընդ ամպն, ՚ի խոնարհ անկանի, և ՚ի տեղին յոր ան-
կանի՝ խաղաղութեան ակն ոչ ունիմք: Բայց մեք որ զհուրն
յառաջ տեսանեմք և ապա զորոտն լտեմք՝ այն է պատճառ զի
թէպէտ յամպոյն զոյգ ելանէ ձայնն և հուրն, այլ մեզ հուրն
առաջոյ երևի, քանզի ակն երանգ է քան զուենին. և ակն փոյթ
կարէ տեսանել հեռագոյն զհուրն՝ յորժամ յամպոյն ելանէ: Իսկ
զձայնն ունին ոչ կարէ լսել մինչև ՚ի մօտ հասանէ: Աւ զցոլմանէ աս-
տեղացդ ասեն թէ հողմն այն ՚ի պարզ ժամանակի բախէ անդէն ինքն

զինքն, և հուր ելանէ, որպէս յամպոյ. բայց անօտր ելանէ ՚ի հողմոյն,
և ոչ որպէս յամպոյն. և օղովն վերաբերեալ անդէն ամփոփի :

դ. յաղագս կաթին ծրոյ.

Կաթին ծիր որ անուանեցին՝ ոչ այնպէս է որ չար փիլիսո-
փայքն առասպելաբանեցին բազում բանիւք : Քանզի ոմանք
ասացին զդմանէ թէ ճանապարհ է հին, արեգական հետ. իսկ
այլք տգիտագոյնք քան զնոսա՝ առադաստ ասեն Պերսեփոնայ,
զոր սպիտակ սուգ կոչեցին Աթենացիք : Այլք ՚ի նոցանէ՝ Հե-
րակղէս ասեն՝ զանդէս Պէրիոնի ընդ շաւիղ վարեաց : Նա և այլք
ևս ըստ նոցին արուեստի՝ տարածումն է ասեն ստեանցն Հե-
րայ՝ կնոջն Արամազդայ : Վարձեալ ոմանք յառաջնոցն Հայոց
ասացին՝ թէ խիստ ձմերանի Վահագն՝ նախնին Հայոց՝ գողացաւ
զյարդն (հաղասամայ¹⁾) Ասորոց նախնոյն. զոր և մեք սովորեցաք
բնախօսութեամբ՝ Յարդգողի հետ անուանել : Թողէք ՚ի բաց
զայդ, ո՛վ աստուածասէր լսողք, և մի զայդպիսի բան լսէք. քանզի
փիլիսոփայքն բարիք ասացին զդմանէ թէ խիտ աստեղք են բա-
զումք, յոյժ ընդ աղօտ երևմանէն՝ միաւոր լոյսն տեսանի : Իսկ
մեք որ եմք աշակերտք վարդապետաց եկեղեցւոյ, ասեմք՝ թէ
ամենայն զգայութիւնքս վերինք և ներքինք ունին խառնուած
միաբանութեան առ իրեարս. և է զա անգայտութիւն գօտեացն
վերնոց, զթաղիեալ հրոյն նշոյլս հեղով ՚ի վայր՝ երևումն գործէ
տեսողացն : Այս է նորա պատճառն ճշմարիտ :

է. յաղագս հիւսիսային աստեղաց

Աստեղացդ՝ զոր կոչեն բևեռս երկնից՝ որ ՚ի տեղն զան շուրջ
և ոչ ծագեն յարևելից և զան ՚ի մուտս. և այլք աստեղացդ՝ որք
դէմ ընդ դէմ զօրէն անուոյ հոլովին, և այլ խումբքն՝ որ շուրջ
զնոքօք են, մշտագայ երևմամբ շրջադայանան՝ ոչ երկրորդեցից
զանհամոցն ճառս. զի յորվս ասել զսուտն՝ ձանձրոյթ ձեզ լինի :

¹⁾ գուցէ հարսամայ նպ դրի առ օտարս Barsam. ևս. Սիւլէ.

Այլ ասացուք որում հաւատացեալ եմք: Ան զոքա նշանակ տեսական, զի երևակի են և իմացական զանտեսին զարիւոյ բերեն նմանութիւն, շրջապայութեամբ ծառայական հասարակութիւն գործելով. բաժանեալ երից հատածաց ուղեգնացութեամբ ծովային ճանապարհաւն. միաբանութիւն առնել ցամաքայնոցս: Քանզի եթէ ոչ էր տուեալ՝ և ոչ առնոյր, և կարի զեղեցիկ. քանզի ՚ի բաժանեցելոյն կարօտութիւն գործեցաւ. իսկ ՚ի ձեռն նաւավարութեանն զիւրաքանչիւր պիտոյսն զիւրամտոյցս մերձեցոյց. որում որք տեղեակն են, և սովորութիւն է անսուտ բանիւք զճշմարիտն ասել: Օգտերեկ ասէ յաճեալ մոլորի նաւն, և ՚ի զիշերի ՚ի ձեռն երկնային արջոյդ երթայ ելանէ յուղորդ ճանապարհն: Այս այս ոչ զոյզն նախախնամութիւն է արարողին բոլորեցունց. զի ՚ի ձեռն սայլիցդ ոչ միայն սպրի նաւն և նաւավարքն՝ այլ և բազում բիւրք ՚ի նաւահանգիստն զիւրաքանչիւր կարօտութիւնս բարձեալ տանին ՚ի տունս իւրեանց: Ապա թէ այդ այդպէս իցէ, ոչինչ է յէսդ երկնից վայրապար և դուզնաքեայ, այլ առ ՚ի մեծ օգտութիւն մարդկան, և ՚ի փառս արարչին, ամէն:

Ը. յաղագս լուսնի:

Օ երկրորդ լուսաւորեցդ բիւր բանք են ճառեալք և յարտաքնոց և յեկեղեցականաց. բայց մեզ որ ինչ միաւորեալ է յերկոցունց, յայնց հաճոյ թուեցաւ ասել: Այլ թ ամանոյն լուսնի նմա միայնոյ է գիտելի որ արարն զնա: Բայց առաջինքն որ ջանացան հասու լինել նմա, այսպէս ասացին, եթէ լուսինն տարր է սեղմ: խիտ¹⁾, մաքուր, զնզաձեւ և ոչ ունի զլոյսն բնութեամբ՝ այլ հաղորդութեամբ յարեգականէ առեալ. որպէս հայելի ընդդէմ արեգական ունելով, և նա ճառագայթս բազումս արձակէ յիւրմէ, նոյնպէս և լուսինդ ասեն: Բայց երկուք ոմանք յեկեղեցոյ ասացին, եթէ առանձինն ունի լուսինն զլոյսն, և ոչ յարեգականէ. զի որպէս ամանն լուսնի այլ իմն է, նոյնպէս և լոյս նորա այլ իմն է. և ասեն եթէ չէ ծանր Աստուծոյ զլոյսն բաժանել ՚ի բազում

¹⁾ յոր, ՚ի լս. խիտ.

կերպս. զի լոյս արեգականն այլ ունի կերպ, և լուսնի այլ, օտար
ի նմանէ. և հրոյ ևս առաւել օտար ՚ի նոցանէ յերկուց: Կաև
ՃՃի մի որ անուանեալ կոչի փոսուռա¹⁾, ունի լուսաւորութիւն
ի տաանն, որ և զգիրս մարթ է ընթեռնուլ նովաւ ՚ի վերայ կարգի
զրոցն տանելով: Արդ եթէ ՚ի գեռունն յայն արհամարհ՝ եղ
Աստուած զլուսաւորութիւն յատուկ, որ ոչ յումեքէ առնու այլ
հաստատեալ կայ յիւրում մարմինն՝ օտար յամենայն լուսոյ, զի ոչ
սպիտակ է և ոչ լուրջ և ոչ դեղին և ոչ կարմիր, այլ կանաչ իմն
զոյն է լուսիկն՝ մեզմ ըստ իւրում տկարութեանն, համայն յատուկ
է: Արդ որչափ ևս առաւել պարտիմք հաւանել՝ եթէ լուսնի ետ
Աստուած լոյս առանձնական, և ոչ յոք արար կարօտ ապաստանի:
Իսկ որ սեաւ նշանն երևի ՚ի լուսնի, որպէս գիծ իմն գրոշմի,
ասացին արտաքինքն թէ ելք են խոռոչաց՝ որպէս յական յակնթի:
Աւ վասնզի ոչ անգէզ ունի զթուրութիւնն՝ այնր աղաղաւ ոչ կարէ
տալ լոյս որպէս զարեգակն: Օչ և գունդ բիւրեղ՝ որ գէզ կամ
սպի ունի, ոչ կարէ հեղուլ բորբ շող լուսոյ: Իսկ եկեղեցականքն
ասացին, եթէ որ երևին ՚ի լուսնի՝ երկիր է և ծով. զի որպէս
հայելի զամենայն ընդդէմ կացոյց իւր, ցուցանէ յինքեան զնմա
նութիւն, նոյնպէս և լուսինդ ցուցանէ յինքեան զերկիր և զծով,
ըստ բանին որ ասէ, թէ լուսինդ հայելի է երկրի. զի մեծ իսկ է
միանձնութեամբ որպէս զերկիր. և ես ցուցից քեզ ՚ի սակաւ նմա
նութեանց առնուլ օրինակ: Ուսիր ՚ի քաղաքաց որ ընդ ամենայն
տիեզերս շինեալ են ՚ի միմեանց հեռիք. հայեաց ընդ հրապա
րակս և ընդ փողոցս որ ուղղորդ ընդ արևելս նայիցին, զիւրդ
միանգամայն լուսաւորին, և միօք կերպարանօք տեսանես զի լու
սաւորէ զամենայն նուրբ փողոցս. և զիւրդ է այս, եթէ ոչ՝ զի առ
ամենեսեան է մեծութեամբ, և կշիռ յերեսս ամենեցուն արձակէ
զլոյսն: Աւ արդ ՚ի տկարութենէ լուսոյ ճրագի ուսիր զմեծութիւն
լուսնի. զի ՚ի լուսոյն իւրմէ ոչ կարէ, վասն այնորիկ միակերպ
ստուերս ամենայն բազմութեանն որ ՚ի տանն իցեն. զի որ մօտն
կայցեն ՚ի լոյս ճրագին՝ զնորայն մեծացուցանիցէ զստուեր. և որ
հեռագոյնն է՝ զնորայն փոքրկացուցանէ: Արդ եթէ ոչ մեծ էր

¹⁾ յօր. լս. ֆօս, յունարէն լոյս սսի. φασσαρα. Ժու. Մեմե.

լուսինն՝ ոչ կարէր հաւասար ծագել, և միակերպ տալ ստուեր
ամենեցուն որ բնակեալ են ՚ի հարաւ և ՚ի հիւսիսի, այլ վասն զի մեծ
է միանձնութեամբ ըստ աստուածային զրոյց որ ասաց, թէ արար
լուսաւորս մեծամեծս ՚ի նշանս, ՚ի ժամանակս, յաւուրս և ՚ի տա-
րիս. յոյժ պիտոյ են մարդկան նշանք որ լինին ՚ի լուսաւորացոյ
եթէ ոք ըստ կէտ սահմանին ոչ ելանիցէ օտարոտի քննութեամբ.
զի որ միտ եղեալ ընտրեսցէ զգեղեցիկ փորձ նոցա, և ոչ խառնիցէ
՚ի ներքս ամպարշտութիւն ազգի ազգի հնարագիտութեան, գտա-
նեն ՚ի նշանաց անտի, զի վասն խոնաւոյ զժամանակն ցուցանէ,
բազում անգամ վարդապետք լինին մեզ օրոյն պղտորութեան, և
դառնաշունչ սառնամանեաց. զի յերեկօրեայ ժամանակի յորժամ
վճիտ երևիցի, զյստակ պարզոյ յայտ առնէ. և յորժամ ՚ի մահիկ
եղջիւրսն զնշան կարմրութեան կամ զմթութեան ունիցի՝ ջուրք
բազումք յամպոց յերկիր հեղուն, և հարաւ յորդաշունչ բռնու-
թեամբ յօդս բարբառի. և յորժամ շուրջ բակ ունիցի յամպոց՝
ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին, կամ զարամուր բքոց
և զդառնացուցիչ հողմոց ամբոխելոյ յայտ առնեն: Օ՛խ յընծայ-
մանն լուսնի բազում անգամ յորժամ յստակ և խաղաղ իցէ օդն,
յանկարծակի սաստիկ օրոց յայտնին ՚ի նմա մերկեալ, և ամպք ՚ի
վերայ ամպոց դիզանին յաճ և յերկիւղ մեծի տագնապի: Աւ-
այտու ամենայնիւ յայտ է եթէ նշանք որ լինին ՚ի լուսաւորացոյ՝
՚ի շահ օգտութեան են երկրի: Աւաւարն զգուշացի և մի
խառնիցէ զնաւն ՚ի ծովն՝ այլ անդէն զետղ առեալ՝ պահիցէ ՚ի
նաւահանգստի. զի մի պաշարեալ գտանիցին ՚ի ծովուն ՚ի շքն-
չելոյ հողմոյն ամբոխելոյ: Աւ ճանապարհորդն զգուշացի, զի մի
ելանիցէ ՚ի տանէն, և երթեալ աշխատեալ ՚ի բքայոյզ և յան-
ձրեաց ժամանակի, զի ՚ի փոփոխմունսն որ լինին ՚ի լուսնին՝ անա-
սունք զլիութիւն առնուն, և տունկք օգնականութիւն գտանեն
աճման անդեանն իւրեանց: Օ՛խ ՚ի մաշելն լուծութիւն և ապա-
կանութիւն գտանի ՚ի նոսա. և յաճելն լիութիւն և պնդութիւն
առաւելու ՚ի նոսա: Քանզի լուսին ՚ի ջերմութենէ և ՚ի խոնաւու-
թենէ ունի խառնուած: Աւ այս լիցի քեզ նշան. զի որք ՚ի լուս-
նակային ննջեն՝ խոնաւութիւն լինի ՚ի գլուխս նոցա: Աւ զմիտ
դալար եթէ ՚ի լուսնակի կախիցեն, հոտի և ապականի. և ՚ի ջրա-

յինս պակասութիւն և լիութիւն գտանի, սապէս և ՚ի սիրտս ծաւոց: Աւ գնացք իմն են ասեն յերկրին Աւրոպացոց յովկիանոս, որ երբեմն ցուցանէ զյաւելուած լիութեան, և երբեմն զիջանին ՚ի լիութենէ անտի. և այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխի: Իսկ զսկիզբն ծննդեանն լուսնի՝ անշարժական ասեն գնաց խաղացիցն. և յաճելն լուսնի՝ սկսանին շարժել և զեռալ: Աւ դարձեալ յայնմ ծովու որ անուանեալ կոչի Արեկորեայ՝ նմանութիւն սրուակաց է ասեն ՚ի միջին, իբր թէ ձգեն և ծծեն, խոնարհին և պակասին ընդ պակասելն լուսնի. և բղետն, յորդեն, և վերանան ընդ ընուլ լուսնի: Այս են նշանք և զօրութիւն նորա յերկրի և ծովու. իսկ զժամանակս և զաւուրս և զտարիս որոշէ և սա հանգոյն արեգական. յաւուր՝ քսան և չորս ժամս ընթանալով ընդ տիւ և ընդ գիշեր, ամիս՝ յընծայմանէ յընծայումն, և երիցս կատարելով առնէ տարի, ըստ թուոյ Աբրայեցոց, որ կատարեն զընթացս տարւոյն ՚ի հին կտակարանաց: Իսկ յիշխանութիւն գիշերոյ՝ ցուցանելով ՚ի նմա զըյսն իւր. քանզի կարակնահատ բոլորութիւնք երկոցունց տարեցդ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսոյն. իսկ առ միւսն առ նոյն հանդիպի ընդունելով մասն գիշերային լուսոյն. և նա՝ հանապազ անխափան գնացիւքն առ սակաւ սակաւ մատուցանէ զմասունս երեակի լուսոյն աճմամբ և նուազութեամբ: Քանզի ոչ եթէ հանապազ ընդ մի շաւիղ ընթանայ արեգակն յորժամ ՚ի հարաւ կոյս նհանջիցի, և կամ այսրէն ՚ի միջօրեայդ: Սոյնայէս և լուսին ՚ի ձեռն այս երկու փոփոխմանցս տալոյ և առնլոյ լինի փոփոխումն աճման և մաշելոյ. վասն զի լուսին բերի ՚ի ներքնում պարունակիս¹⁾, և արեգակն ՚ի վերոյ նորա ՚ի հինգերորդ պարունակին. և ՚ի շրջագայնալն երկոցունց հանապազ տեսանեն զմիմեանս, և յորժամ երթայ մօտի լուսին յարեգակն՝ լինի նուազութիւն լուսոյն լուսնի, զի վերին կողմն նորա ունի զբոլորութիւն լուսոյն որ ընդդէմ հայի արեգականն, զի վերև նորա է. և կէս գնդի լուսնին որ ՚ի խոնարհ յերկիր կոյս հայի՝ անըյս բոլոր ներքին կոյս գնդի լուսնին երևի՝ ծածկեալ յիւրում ստուերի. և յորժամ հեռանայ լուսին յարեգակնէ՝ մեծանայ ընու

¹⁾ յօր. պարունիս:

լոյսն լուսնի. վասն զի հեռանալով յարեգականէ լուսաւորի ներ-
քին կողմ գնդի երկնի. և ստուեր տարերն իւրոյ ՚ի միւս կողմ
հալածի ՚ի վեր փոխելով. քանզի այս է յայտնի պատճառ. վերին
և ներքին կիսագունդքն առ հինգ պարունակացո գեր ՚ի վերոյ
երկրիս յերկուս բաժանեալ տուրնջեան և զիշերոյ, չորրեակ
վեցեկօք. և երբեմն հասանելով յարեմուտս ՚ի ներքին կիսա-
գունդն, զերկուս վեցեակսն արեգակն ունիցի զիշերային մասամբքն
զառ ՚ի ներքոյս շրջագայութեանն. իսկ ընդդէմ նմին զերկուս
վեցեակսն լուսին ունիցի ՚ի վերայ երկրի. և ընդ կողմն հիւսիսոյ
մատուցանէ արեգակն լրումն լուսոյ ունակութեան լուսնի. ոչ հա-
նապազորդ լիով մատուցանէ, այլ ըստ մօտելոյ և հեռանալոյ արե-
գական. երբեմն կատարեալ լի ՚ի բոլորն բոլորական երևի լոյսն
իւր. և երբեմն մաշեալ և պակասեալ ՚ի լուսոյն՝ զպակասութիւն
իւր նախ ցուցանէ լուսին ՚ի վերայ միոյ միոյ կողմանց իւրոց : Օ՛ ի
յորժամ աճէ մի կողմն, միւսն զնշանակ աղջամղջին ցուցանէ. և
դարձեալ յորժամ սկսանի պակասիլ միւս կողմն ամիսփի ինքն
լինքն՝ զի ծածկեսցի միւս կողմն : Այլ յորժամ սկսանի երևել
յարեմուտից յարեւելս կոյս ցուցանէ զհայեցուածն բոլորն բոլորա-
կին. և յորժամ յարեւելից սկսանի մաշել՝ յարեմուտս կոյս ցու-
ցանէ զմահիկն եղջիւրս : Այլ այնպէս լուսաւորի կողմն գնդին լու-
սնի՝ որ յարեգական կուսէն լինի, և որ ՚ի միւս կողմանէն լինի
կէս գնդին լուսնի՝ առանց լուսոյ երևի՝ ծածկեալ ՚ի ծոց իւրոյ հո-
վանոյն. զի պակասումն լուսոյն լուսնի՝ ստուեր տարերն իւրոյ է,
ինքն ինքեան ունելով հովանի : Իսկ յորժամ համօրէն զայն
որ ետն ՚ի բաց հանցէ զլոյսն, սուղ ծածկութիւն լինին : մինչև ան-
դէն ծնցի զնա նովին լուսովն : Արձեալ եթէ զիպեսցի ժամա-
նակ լուսնի ՚ի լրման կամ ՚ի միջոցի, կամ մերձ ՚ի հինս, և լուսին
իցէ ՚ի վերին կիսագնդին, և երկաքին զիպեսցին հասարակու-
թեամբ ՚ի միջնում տրամագծին, և ՚ի միում ժամու ոչ բաւէ արե-
գակն մատուցանել ընդ հիւսիսային կողմնն զսովորական ձգումն
լուսոյն մասին, լոկ մնացեալ զիշերային անիւն ՚ի լուսոյ՝ կորնչել
լուսնի կարգացաք : Այլ կարի քաջ կորուստ լուսոյն ասացաք, և
ոչ տարերն. զի ամենեցուն յայտնի երևի բոլորածիրն ՚ի տեղուջն,
և առ երազ շարժմունս վերնոյն և ներքնոյն անցանել զսովորական

ընդունի լոյս լուսին, վասն զի անցանէ զնովաւ ստուերն որ խաւարեցոյցն զնա: Արդ ամենայն եղեալքս անկեալ են ընդ յարմարական մասամբք, և ընդ ազականագործովք հետեանօք: Աւայս ոչ գուզնաքեայ նախախնամութիւն արարողին է՝ զի մի ոք զարարածս տեսեալ առանց ազականութեան՝ զնոսին իսկ արարիչս կարծիցէ. այլ զի հանապաղ յերևելի տարերս վայելեսցէ զերկրաւոր սպասաւորութիւն. և զարարիչն ամենայն զոյիցս զերի վերոյ գիտացէ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Թ. յաղագս արեգական:

Յոյժ սիրելի է ինձ՝ ՚ի միաւորութեանց նոցա բանից՝ յիմում ճառի առնել զառատութիւնս որ ինչ յաղագս առաջնոյ և մեծի լուսաւորիդ է բան: Աւ արդ ասացից նոյնպէս, եթէ նիւթ ամանոյն արեգական արարչին միայն է գիտելի. իսկ պատուականք յարարածս մարդիկ՝ այնչափ միայն գիտացին զնա՝ թէ է տարր սեղմ, մաքուր, գնդաձև, բոլոր, ամենևին անգէղ և անսպի. ինքն է ցուրտ բնութիւն. և զլերմութիւն և զլուսաւորութիւն առեալ յարփւոյն՝ հեղու յօդս, որով լուսաւորի և ջեռնու երկիր: Աւ հաւանեցուցէ զքեզ օրինակն. գունդ բիւրեղ յորժամ յարևուունիցիս, տես զի ինքն ցուրտ է ամենևին, իսկ որ շողն կաթէ ՚ի նմանէ՝ պայծառ է առաւել քան զլոյսն արեգական. և ուրանօր կաթէ՝ լուցանի. քանզի կաթուած շողոյն նորա հուր ծնանի, թէ պէտև ինքն ցուրտ է բնութեամբ. նոյնպէս և զարեգակնդ իմն: Բայց երկու ոմանք յեկեղեցւոյ ոչ այդպէս, այլ ասացին թէ ինքն իսկ արեգակն ունի զլոյսն իւր բնութեամբ յինքեան բնակեալ, և ոչ յարփւոյն, և ոչ յայլ ումեքէ առեալ, այլ ասեն թէ լոյս արեգական՝ այն լոյս է որ յառաջ քան զեղանիլ լուսաւորացդ էր. վասն զի լուսաւորքդ են արարած աւուրն չորրորդի. իսկ երկն աւուրցն նախագունից ցիր բնութիւն էր. և արեգակնդ աման եղև այնր լուսոյ, և ժողովեաց Աստուած զլոյսն զայն և արկ ՚ի դա՛ զորմէ ասացի թէ ցիր բնութիւն էր. և ժողովեալ զնա ունի արեգակն՝ որպէս ճրագ զհուր: Սոյնպէս և լուսոյն առաջնոյ կազմեցան լինել աման լուսաւորքդ: Արդ թէպէտ հոգևորք են և սօքս,

սակայն ես հաւանեալ եմ սրբոց հարցն բազմաց միաբանելոց, որում և բարի փիլիսոփայք արտաքնոցն համաձայնին, յարփոյն ասեն ունել զլուսաւորութիւն և զգերմութիւն, և վասն ընթացից լուսաւորացոյ ՚ի մտից յետկոյս ընդդէմ երկնի՝ մի ումեք անհաւատ թուեցեալ՝ ասիցէ, թէ մեք տեսանեմք զլուսաւորսդ ելեալ յարևելից և եկեալ մինչև յարևմուտս, այլ գիտասցէ զի յերկնէ է այն որ հասնէ զնա յելիցն, և բերէ ՚ի մուտս, քանզի անչափ է երազութիւն շրջագայութեան երկնից: Արդ որք միտս ունիցին՝ է ՚ի տեսութեանցդ իսկ ուսանել՝ թէ յարևելս զնան արեգակն և լուսին, և բազումք յաստեղաց որք ոչ խմբիւք կցեալ ունին զետեղակալութիւնս, քանզի ասեն արտաքինքն՝ թէ մըջիւն լիցի քեզ օրինակ, առեալ զիցես՝ ՚ի վերայ երկանի, և տես զիւրոյ ընթանայ ընդդէմ երկանին եկիցն, վասն զի ոչ կարէ ընթանալ ՚ի կողմն, և ոչ զոյգ երկանի ընթացիցն, քանզի երազութիւն երկանին գլէ զնա, և նա հարկաւորեալ ընդդէմ ընթանայ: Իսկ երկանն իւրով արագութեամբն ընդ իւր բերէ զնա՝ յոր կոյս ինքն զայ շուրջ, սապէս և զլուսաւորսդ իմա: Աւ ուշիմ մտօք թէ հայիցիս՝ դիւրին է ուսանել ՚ի լուսնոյ, տես յընծայման նորա՝ զիւրոյ ընդ մտանել արեգականն երևի լուսինն մօտ ՚ի մուտս, և յամենայն աւուր հայեան ընդ նա ՚ի նոյն ժամու, և տես զիւրոյ օր ըստ օրէ ընդ մտանելն զարևելօք երևի, և զիտեան թէ որչափ տեսեր գտեղին՝ ուր ժամէ ՚ի ժամ փոխեցաւ, այնչափ է նորա ընթացք աւուրն, և ուսիր թէ երազութիւն երկնին է այն որ ամէ զնա յաւուր պատել զերկրաւ, և ոչ թէ իւր ընթացքն: Աւ զարեգակն թէպէտև ոչ կարես տեսանել, այլ իմացիր ՚ի կենդանատեսակացն անուանեցելոց աստեղատանց, տեսանէս զիւրոյ կարգեալ կան՝ կցեալ զմիմեանց և ծագեն յելից զհետ իւրեանց¹⁾, նախ խոյն, և ապա ցուլն, և զհետ նոցա եկաւորին և այլք ՚ի կարգի: Աւ արեգակն կատարեալ զնոյն՝ փոփոխի ՚ի ցուլն, և ՚ի նմանէ յայլսն, ընդդէմ երկնի ընթանալով յարևելս կոյս: Արթիցուք յաստուածային գրոց ճառս որ ասեն, Աղիցին ՚ի նշանս և ՚ի ժամանակս, յաւուրս և ՚ի տարիս: Բազում նշանս ունիմք ուսանել յարեգակնէ, եթէ ոչ առնու

1) յօր. ՚ի լս. իրերաց.

ցումք զխելագարեալ խորհուրդս աստեղաբաշխիցն, որ ինչ պատահան վիճակաց վասն և ծննդաբաշխութեան. քանզի մի ինչ իրս որ լինի յարեգակնէ, փրկիչն մեր յայտնեաց յաւետարանին, յասելն թէ՛ Յորժամ տեսանիցէք զի գայ ամպ յարեւելից՝ ասէք թէ անձրև լինի, և լինի, և յորժամ հարաւ շնչէ՝ ասէք թէ խորշակ ընթանայ՝ և լինի այնպէս. ըստ նմին օրինակի այլ ևս բազումս, կերպարանօք փորձի՝ յայտ լինի: Օ՛ր յորժամ ընդ ծագել արեգականն մթազոյն ելանիցէ և արեան և կայծական նշանակ ունիցին ճառագայթքն, ըստ փոփոխման խտտաշունչ օդոյն. եթէ ՚ի նոյն կերպարանս կայցէ, և օդն պզտորեալ և յուզեալ՝ ոչ յտակիցի, և գոյնն մթազոյն՝ ոչ լրթացի, և հողմք ևս խտտագոյնք յուզեսցին, և ամպն ևս քան զևս յաւելցէ, գերկար խոնաւայուզից և զսաստիկ անձրևաց յայտ առնէ: Եւ յորժամ յամպոյ յամպ մտանիցէ արեգակն, զչերմակիծ շող ամպոյն յերկիր առաքելով՝ զխոնաւութենէ օդոյ յայտ առնէ: Եւ յորժամ ելանիցէ ծագումնն զառաջինսն խանձելով՝ զառօրեայ անձրևածումն նշանակելով, և յորժամ ՚ի մուտս զյետոյսն խանձիցէ գերկինս կարմրացուցանելով: զառօրեայ պարզոյ յայտ առնէ: Մեկնութիւն նշանաց եղև առաջին բանիւքդ:

Եւսացուք վասն ժամանակաց որք են փոփոխմունք օդոյ, և գնացք ժամուց և երեւել սառնամանեաց ձմերայնոյ, և քաղցրախառն շնչելոյ օդոյ դարնայնոյ, և բոցախառն հրատ տապոյ ժամանակաց ամարանոյ, և մեղմախառն ցրտութեան ժամանակաց աշնանոյ. զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աշտիճանաց՝ արդար գնացիւք արեգականն շրջանին անցանէն ՚ի վերայ մեր, կարգ ըստ կարգի յօրինեալ յարդարմամբք՝ ըստ ակնարկելոյ զօրութեանն որ պատշաճեաց զնոսա յիւրաքանչիւր կարգս և ՚ի ժամանակս: Օ՛ր ձմեռն այնպէս լինի՝ յորժամ հեռանայ մերժի՝ յիջանել արեգականն ՚ի հարաւ, և անդէն մշտնջենաւորեալ ըզգնացս իւր, յորժամ յաճախեալ բազմանայ աստ ՚ի մերում կողմանս երկայնութիւնք ստուերաց գիշերոյ, որ է խաւար: Եւ յիջանել արեգականն ՚ի հարաւկոյս կողմանս՝ շնչեն ցրտային սառամանիք ընդդէմ՝ օդոյ՝ որ տարածեալ կայ սո. երկրաւս, և ՚ի պատճառս խոնաւութեանն որ զարթնու ՚ի վերայ երկրի՝ յառնեն անձրևայոյզք

և թօնընկէցք՝ և բալաձիգք և ձիւնաբերք: Աւ դարձեալ յորժամ սկսանի արեգակն աշտիճանել ՚ի հարաւակողմանց՝ գալ հասանել ՚ի հասարակածն երկնից՝ զհաւասարութիւն տուրնջեան և գիշերոյ կատարէ: Մեծ սքանչելեօք կատարին կարգք ժամանակաց. որ չափ վերասցի ելցէ արեգակն՝ փոփոխելով զգնացս իւր ՚ի ծագելն յերկիր: և ՚ի նոսին զետղ առեալ դադարեացէ: Աւ այս ամենայն . . . քաղցրախառն խառնուածօք յարդարի գարունն՝ իւրով մեծագեղ վայելչութեամբք. զի ՚ի նմա արմատք արձակեն զրոյսս, և մարգք զուարճանան, և ծաղիկք պայծառանան, և տունկք ցցուին և ծառք արձակեն զրոզրջն, և անասունք հանդերձ թռչնովք և ծովային ջրածնունդ զեռնովք. և ամենեքեան բատ իւրաքանչիւր ազգի գան ՚ի ծնունդ, ՚ի սեր և ՚ի սնունդ: Աւ յետ այսորիկ սկսանի մօտել արեգակն ՚ի փոփոխմունս ամառայնոյ և երևեցուցանէ զգնացս իւր ՚ի կողմանս հիւսիսոյ, ձգել և երկայնացուցանել զտիւս: Աւ քանզի յամրագնաց ժամօք անցանէ զօրովք երկարաձիգ գնացիւք, ջեռուցանէ ՚ի վերայ երկրի զօդս, և ծծէ ՚ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, և առնի գործակից և վաստակակից սերմանց՝ ՚ի պաշտել զպէտս նոցա, պարարեալ պնդէ զի հասցեն ՚ի չափ սննդեան իւրեանց. նոյնպէս և զպտուղս ծառոց: Աւ յորժամ ՚ի վերին բարձանցն ծագիցէ արեգակն՝ փոքրկանան ստուերք տարերց երկրի, և կարծին շուքք հասակաց ՚ի միջօրեայ ժամանակի, տիւքն երկայն լինին: Աւ յորժամ երկային ստուերքն՝ աւուրքն փոքունք լինին: Աւ աստ առ մեզ որ ՚ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք՝ այլազգ անկանին ՚ի մէնջ ստուերքն, և յայլում աշխարհի միոջ՝ այլազգ: Օ՛ի երկու աւուրս յամենայն տարւոջ առ միջօրեայ ժամանակի առանց ստուերի լինին, քանզի կշիռ ՚ի վերայ ամենեցուն զլիսոյ կան ճառագայթք արեգականն, և հասարակ յամենայն կողմանց արկանէ զնշոյլս պայծառութեանն ՚ի վերուստ և ցներքին խորս ջրհորոց, բնդ նեղ և բնդ նուրբ բերանս մտանէ շող և լուսաւորէ: Աւ անուանեն զաւուրան անստուեր միջօրեայ: Աւ այլք որք ՚ի հեռաւոր աշխարհին Հնդկաց բնակեալ են՝ անդր և սքան զԱրնդ և Սմրզան՝ ստուերք հասակաց մարդկան յերկուց կողմանց երևի, և կոչեն իսկ երկստուերեան զաւուրան, և այս ամենայն ՚ի փոփոխելոյ գնացից արեգականն լինի:

Աւ իբրև հասուցանէ զսերմանս և զմիրզան ՚ի կատարեալ չափսն, ապա սկսանի սահաւ սահաւ մեղմանալ ՚ի բոցաճաճանջ տապոյն : Սկսանի այնուհետև մերձենալ աշունն, ցուցանել ՚ի նմա զմեղմախառն գնացս իւր. և զայ հասանէ քաղցրախառն խառնուածն որ ունի զմիջնորդութիւն. և ըստ աշտիճանելոյ՝ սկսանի երևել նշանակ ցրտոյ կարգին մտանելոյ սառնամանիք ձմերայնոյ՝ ՚ի շրջելոյն արեգական՝ որ իջանէ մեղմով ՚ի կողմանց հիւսիսոյ, երթալ երևել ցուցանել զգնացս իւր ՚ի կողմանս հարաւոյ : Աւ այսպիսի փոփոխէ արեգակն զգնացս իւր, և կատարէ զժամանակս յեղանակաց, և եղիցին յաւուրս որպէս և Սաղմոսն վկայեաց թէ իշխանական տուրնջեան : Աւ իւ՛ իցէ իշխանական տուրնջեան, թէ ոչ գնացիւքն ցուցանել ՚ի նմա զլոյս իւր՝ յորժամ ՚ի վեր քան զկէս գրնդին առնիցէ զգնացս իւր, հալածելով զխաւարն, և լուսաւորելով զօդս՝ կոչեցաւ տիւ : Աւ արդ յայտ է թէ տիւ ՚ի լուսոյ արեգական իցէ, իսկ գեշերն ոչ յուժեքէ, այլ ուր ո՛չ գոյ լոյս անդ խաւար է. գիշեր է՝ ստուեր օդոյս՝ որ անկանի ՚ի տարերէ երկրիս. զի ամենայն ինչ որ ընդդէմ կայ լուսոյ՝ նա է պատճառ երևելոյ խաւարի, որպէս ստուեր երկրի պատճառ է գիշերոյ : Աւ հաւանել ցուցէ զքեզ օրինակն. որպէս թէ հարկանիցես տաղաւար ՚ի սաստիկ լուսաւորութեան միջօրեայ ժամանակի և պատիցես պնդիցես ամենեւին արտաքուստ՝ զի մի մտցեն ՚ի նա նշոյլք լուսոյ. և հայեան և տես, որպիսի խաւար թանձրատարած գտանի ՚ի նա. և գիտես թէ դու ես արարող խաւարին, և տաղաւարն է պատճառ. զի որպէս վայրք որ առանց լուսոյ են՝ խաւար մածեալ գտանի ՚ի նոսա, նոյնպէս և գիշեր՝ յորժամ ՚ի ներքին կիսագունդն խոնարհեսցի արեգակն, և պակասեսցէ յօդոյս լոյս, և անկանիցի զսովաւ ստուեր երկրի : Քանզի ստուերս զոր տեսանեմք՝ նա է խաւարն գիշերոյ ՚ի փոփոխելոյ ճառագայթից արեգական : Օ՛ի յորժամ յարևելից երևեսցի լոյսն՝ ստուերն յարևմուտս ձգի. և յորժամ ՚ի հարաւանցանէ լոյսն՝ ստուերն ՚ի հիւսիսակողմ փոխի. և յորժամ յարևմուտս փոխի լոյսն՝ ստուերն յարևելս անկանի. և ՚ի մտանել արեգականն՝ ստուեր երկրի յօդդ վերանայ. և այնպէս մտանէ խաւար փրել երկրի՝ որ անուանեցաւ գիշեր : Կարձեալ և ՚ի տարիս եղաւ իննել արեգակն՝ ըստ օրինակի թուոցն Հռոմաց, որ յաւան

դուժենէ և ՚ի հարցն իւրեանց՝ համարին գտարի արեգականն ՚ի հաստատեալ կիտէն մինչև ցմիւս կէտն նշանակեալ և ըստ ընթացից շարժմանցն զոր ունի արեգակն՝ նոյնպէս առնէ կատարումն տարւոյն իւրոյ։ Եւ արար, ասէ, Աստուած երկուս լուսաւորս մեծամեծս։ և զնովիմբ ածեալ ասէ, Օ լուսաւորն մեծ։ Միտք բանիս այսպիսի են, իբրու թէ ինչ մի միանձնութեամբ մեծ է, ըստ միանձնութեան երկնի և երկրի և ծովու, իսկ այլքն որ կոչին մեծ՝ ըստ օրինակի բնութեան իւրեանց որ գտանին առ մեզ՝ ո՞նի մեծ քան զընկեր իւր, որպէս զի մեծ է ձի քան զձի և եզն քան զեզն, ոչ եթէ ըստ մեծութեանդ այլ ինչ տարր, այլ ըստ համեմատութեան իւրոյ ընկերին ասի մեծութիւն նորա։ Արդ ո՞չ է այսպէս մեծութիւն լուսաւորացդ, որպէս ասի ասող քան զասող, այլ այնպիսի մեծատարած մեծ լուսաւորութիւն ունին, որ բաւական են լուսաւորել զամենայն, ծագել ծաւալել համասփիւռ յերկինս և յերկրի, ՚ի ծովու և ՚ի շրջանակի յամենայն ծագս երկրի։ Եւ քանզի զամենայն բոլորակն երկնից տարածիւ ունի լուսաւորդ ՚ի ծագել և ՚ի մտանելն իւրում, և զամենայն միջավայրս վայրացն իբրու զմի ինչ ունի զամենայն միանգամայն, վասն այնորիկ միապէս միով կերպարանօք երևի ամենայն մարդկան որ բնակեալ են յամենայն ծագս երկրի։ Եւ գիտեա՞ թէ ամենայն մեծ իրք ՚ի հեռաստանէ փոքունք երևին, և որչափ երթաս մօտիս, ապա երևի մեծութիւն նորա։ Իսկ առ արեգակն չէ ոք որ մօտ իցէ, կամ հեռի, այլ միով հաւասարութեամբ յամենայն մասանց երկրիս տեսանի, և այս է օրինակ ճշմարիտ, զի որ բնակեալ են անգր ՚ի Հնդկաց երկրին, և կամ անգր ՚ի Տիւրքիտոնիա երկրին, միով հաւասարութեամբ տեսանեն զծագելն և զմտանելն արեգական, զի ոչ յորժամ մտանէ առ արևմտեայսն՝ նուազի ինչ ՚ի մեծութենէ անտի առ արևելեայսն։ Եւ ոչ յորժամ ծագէ առ բնակչացն արևելեայց, և ոչ յորժամ զայ հասանէ ՚ի հասարակածն երկնից, փոխի ինչ ՚ի կերպարանացն զորունէր։ Արդ մի խաբեսցէ զքեզ ¹⁾ սակաւ տեսիլ նորա։ Որ չափ կանգնոյ միոյ երևի, և կարծիցես թէ այնչափ իցէ, քանզի մեծամեծք յիրաց որ ՚ի բացեայ ՚ի հեռուստ տեսա-

¹⁾ յօր. զ... սակաւ։

նես՝ իբր փոքունք երևին. քանզի քայքայի սակաւ տեսիլ ական
ի տկարութենէ լուսոյն զոր ունի. վասնզի չլինի բաւական ՚ի հե-
ռաձիգ վայրս հասուցանել զհայեցուածն՝ այլայլի տեսիլն, և զլոյսն
իբրև զմուսլ տեսանէ. և զմեծ ինչ իրս իբրև զփոքունս: Աւ-
գարձեալ յայտ՝ օրինակէ ՚ի միտ առ զանբաւ մեծութիւն արե-
գականն. տես որչափ բազմութիւնք աստեղաց են յերկինս, և ընդ
ամենեսեան ոչ են բաւական լուսաւորել զմթութիւն գիշերւոյն.
և արեգակն միայն միով անձամբ յորժամ երևիցի զամենայն սահ-
մանս աշխարհի լուսաւորէ. նա և մինչքէն եկեալ իսկ՝ քաղցրա-
հայեաց ճառագայթիւքն՝ ցրուէ մաշէ զխաւարն, և հետակորոյս
առնէ զաղջամուղջն. բառնայ զտխրութիւն, և ՚ի տարածանել մե-
ծապայծառ լուսոյն՝ ծածկէ զլուսաւորութիւն աստեղաց, և զթան-
ձրամած օդոյս ստուերս մերկանայ յերկրէ. և ընդ նմին օդ քաղց-
րաշունչ շնչէ յերկրի և ընդ արևածայրսն լուսաւորին արկանէ
ցօղ մանրացօղ ՚ի ժամանակս ամարայնոյ ընդ ամենայն երեսս երկրի.
միովն երևելով յանկարծածին՝ ժամու լուսաւորել, եթէ ոչ զի
անչափ մեծութեամբն յանբաւ բարձրութենէն զանչափ ճառա-
գայթս լուսոյն արձակէր: Աւ յայտ՝ ամենայնէ յայտ է թէ մեծ
է արեգակն, ըստ աստուածային գրոց վկայութեան. որում և ար-
տաքնոցն բարեաց ՚ի ճահ պատահեն վկայութիւնք: Քանզի ասեն
թէ մեծութիւն լուսնոյ է ըստ չափոյ երկրի. և արեգականն առա-
ւել է քան զնա՝ ըստ աստուածային գրոց. զի թէպէտ և ասաց
երկոցունց մեծամեծս, և սակայն ՚ի համեմատութենէն ասէ. լու-
սաւոր մեծ. և լուսաւորն²⁾ քանզի ՚ի պակասել լուսոյն արե-
գական՝ զոր խաւարելն կոչեմք, յայտնի միջոց արեգականն խա-
ւարեալ բոլոր. և լոյս արեգականն սակաւիկ իբր ժապաւէն երևի
շուրջ զբոլոր խաւարովն. և այն է լուսին, որ կացեալ ընդդէմ
արեգականն՝ արդել ՚ի մէնջ զլոյսն: Բայց ոչ որպէս ինքն ամե-
նեին, քանզի փոքր է քան զնա, և ոչ է բաւական զամենայն
անիւն ծածկել, վասն այնորիկ իբր ժապաւէն երևեցաւ լոյս արե-
գականն շուրջ զլուսնովն: Աւ յորժամ սակաւիկ միտ դիցես,

¹⁾ յօր. յանկարծակին:

²⁾ յօր. տող մի անկեալ է:

յառաջէ որոշէ լուսինն, և սկսանի մերկանալ մեծացուցանել զլոյս արեգականն. և տեսանես զարեգականն կէսն թերի, որպէս զլուսին եղջիւրաւոր, մինչև մեկնի ՚ի նմանէ լուսինն. զի լուսինն է պատճառ խաւարման արեգականն, որպէս արեգակն լուսնի. ՚ի թաքուցանել զճառագայթս իւր ընդ երկրաւ, որով ծածկեալ ՚ի ստուերէ երկրի՝ լուսին առանց լուսոյ երևի: Իսկ ՚ի սորին հակառակէ նոյնն անցանէ և ընդ արեգակն, ոչ միջակաւն որ անջրպետեացն, այլ յորժամ եղիցին ՚ի վերնում կիսագնդին. քանզի արեգակն դեր ՚ի վերոյ լուսնին է, և լուսինն դիպեալ ՚ի ներքոյ արեգականն: Եւ յորժամ հաւասարազոյգ լինին, մինչ զի իցէ մին ՚ի վերոյ և միւսն ՚ի ներքոյ կշիռ նմին, և արեգակն բերանացեալ հոսէ հեղ լով զթլորութիւն լուսոյն հանդէպ ուղիղ կշռութեամբ, միջոց լուսնին ոչ թողու անցանել ՚ի ներքին անօրութիւն օդոյս, որ սփռեալ տարածեալ է ընդ ծով և ընդ ցամաք: Եւ զայս տեսանելով բազումք՝ յանուսումնութենէ՝ արեգական կորուստ կարծեն: Իսկ իմաստնոցն յայտնի է իրացն եղելութիւն, որպէս բազում անգամ ասացաք. և է նա նախախնամութիւն Մատթոյ, ոչ միայն զի վայելիցեմք ՚ի լուսոյ արեգականդ, այլ զի և ճանաչիցեմք զմեծ սէր արարչին առ երկիրս. զի ահա ոմանք զարեգակն աստուած կարծեցեալ մատուցին երկրպագութիւն իբրև մտաւորի, և բանաւորի, և արարչի աստուծոյ: Եւ եթէ զոյր նորա բարբառ՝ մեծաւ աղաղակաւ ձայն արձակէր յերկիր, ասելով. Օ իս վասն քո արարեալ է, դու ինձ երկիրպագանես. ոչ տեսանես զ՚ի անգաղար ասպարէզ տունջեանն գործառութիւնս, և ՚ի վայելս ամենայն կենդանեաց տեղի տուեալ, գիշերային մասամբն հանդէպ ձեզ ՚ի բազում աշխատութեանցդ. հայեցարուք և յիմ յեզափոխութիւնս, ձմերանի ցրտանամ, գարնանի ծածկիմ ընդ թանձրախիտ ամպովք, և ամառանի ես ինքն հրակէզ լինիմ. և յիմ տեղողութիւն և յերկրի օգտութիւն յորժամ կատարեմ զգիշերային ընթացս իմ ՚ի ստորև երկրիս յարևմտից յարևելս: Եւ ՚ի բերին իմ ՚ի վեր՝ բազմութիւն ջուրց ցանեմ զաշխարհաւ, զոր դուք ցօղ անուանէք: Այ ահա տեսանէք զնհանջմունս երկիցս ՚ի տարւոջն և զուզաւորութիւն հանգոյն նմին. նա և երբեմն պակասիմ ՚ի լուսոյ՝ զոր կորուստ անուանէք. և որչափ ընդ խանգարմամբք եմ

և ընդ բազում փոփոխմամբք, ոչ միայն աստուած ջանուանել՝ այլ և ոչ կենդանի բանաւոր, այլ քաջ գործ Աստուծոյ, որ վարիմ հրամանաւ Աստուծոյ: Եւ արդարև ճշմարիտ խնամէ Աստուծոյ ՚ի վերայ երկրի, որ զմարմին դարմանէ սննդականաւ, և զհոգի առլցուցանէ կատարեալ գիտութեամբ. քննելով և ՚ի վերայ հասանելով ամենայն արարածոցս՝ որ ոչ ունին յինքեանց զգայութիւն, այլ յանեղէ ումեմնէ որ էած ՚ի լինելութիւն, ճանաչել զարարիչն ամենայնի որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Ժ. յաղագս կենդանատեսակաց:

Խումբք աստեղատանցդ որ անուանեալ կոչին կենդանատեսակք, եթէ յորոց և զինչ իւրաքանչիւր պատճառք անուանցդ՝ գործ աւելի համարիմ պատմել. բայց վասն զի ոչ այլազգ գործոշմունս նոցա կարեմ առնել և զյայտարարութիւնս, հարկաւորիմ զնոյն անուանս յիշել՝ զոր յետ Քաղղէացոց կոչեն Յոյնք, Հայք, Պարսք: Յոյնք կոիոս, Հայք խոյ, Պարսք վարբակ: Յոյնք տաւրոս, Հայք ցուլ, Պարսք գաւ: Յոյնք դիդիմոս: Հայք երկաւորի, Պարսք գուպաքար. սոքա երեքեան յեղանակ գարնանային: Եւ դարձեալ Յոյնք կարկինոս, Հայք խեցգետի, Պարսք գողընտ: Յոյնք լէօնոս, Հայք առիւծ, Պարսք շեր: Պառթնոս, կոյս, գօսիճդ. սոքա ամսոնային: Օլիւզոս, կշիռ, արագուկ: Սկորպիոս, կարիճ, գրեշգոմ: Պօկսուտիաս, աղեղնաւոր, նեմասպ. սոքա երեքեան յեղանակ աշնանային: Արկերոս, այծեղջիւր, բզասար: Իւդեոիքոս, ջրհոս, դոլ: Իւքթիւս, ձուկն, մահիկ. սոքա երեքեան յեղանակ ձմերային¹⁾: Երկոտասանեքեան

¹⁾ Օրինակս լի էր վրիպանք գրչի, զորս պարտ է ուղղել այսու օրինակաւ (ըստ Բուեղեհեշի գլ. ք բնագրին և Աբիրունեայ, եր. 192, 1 էյպ. 1876.):

Յոյնք՝ կոիոս (χρίος), Հայք՝ խոյ, Պարսք՝ վարակ (𐭥𐭲𐭩): Յոյնք՝ տաւրոս (ταύρος), Հայք՝ ցուլ, Պարսք՝ գաւ (گاو): Յոյնք՝ դիդիմոս (διδύμοι), Հայք՝ երկաւորի, Պարսք՝ գուպաքար՝ (گوباد): Սոքա երեքեան յեղանակ գարնանային: Եւ դարձեալ

տոքա շարժին չորիւք տարբերութեամբ՝ առ ՚ի լինել միոյ տա-
 րևոր ժամանակի. քանզի տարածեալ ունին զերկինս ամենայն
 կցեալ զմիմեանց, պատեալ փորուածիւ և են դոքա ճանապարհ
 արեգական և լուսնի և եօթանց մոլորակացոյ, բերեն յինքեանս
 բարձրացուցանելով և խոնարհեցուցանելով, մօտեցուցանեն ՚ի մեզ
 և հեռացուցանեն, կատարեն զիշերաւ զտիւս փոքրկացուցանելով
 և մեծացուցանելով, և առնեն ջերմութիւն և ցրտութիւն. խո-
 նաւութիւն և երաշտութիւն. և իշխեն փոփոխմանց օդոց և ժա-
 մանակաց, բայց եթէ աստուածային ինչ հասանէ հրաման, վասն
 որոյ փոփոխին տարերց բնութիւնք՝ թէ արդեօք յողորմութիւն
 կամ ՚ի խրատ. որպէս զի լինել ՚ի ձմեռնային ժամանակի ջերմու-
 թիւն, կամ յամառայինն ցրտութիւն, կամ ձիւնաբերութիւն, և
 շնչումն սառամանեաց՝ որ է արտաքոյ բնութեան ժամանակի. և
 զիտելի նմա միայնոյ: Արդ մեզ ՚ի գիտել զոր սահմանեաց Աս-
 տուած զյեզանակս չորից ժամանակաց, որպէս տայր քաջալերս
 արդարոյն յորժամ ել ՚ի տապանէն, յայտ հետէ գարուն և ամառն
 մի՛ գաղարեցեն՝ որպէս դաղարեցին յամի ջուրցն սաստկութեան
 յակնարկելոյ արարչին խանգարումն օդոյն լեալ՝ վասն անբաւ խո-
 նաւայուզից: Արդ՝ այն նորա աստուածութեանն են ծանօթք, և
 անգէտք ՚ի մարդկանէ. իսկ որ բնական բերմամբք հրամայեցաւ
 լինել: այնմ կարօղ եմք հասու լինել՝ որպէս ուսաք ՚ի բազմա-
 փորձութեանց, գիտութեամբ զարդուդ. ո՛չ միայն զյեզանակս չո-
 րից ժամանակաց, այլ և զանցնիւր աստեղատանցոյ զամսական

Յոյնք՝ կարկինոս (καρχίνος), Հայք՝ խեցղետի, Պարսք՝ գարզանկ
 (کرزنگ): Յոյնք՝ լեոնոս (λέων), Հայք՝ առիւծ, Պարսք՝ շեր
 (شیر): Պարթնոս (παρθένος), կոյս, դուսիճա (دوشیزا) կամ խոշաք
 (خوشک): Սոքա ամառնային: Օլիգոս (ὀλιγός), կշիռ, տարադուկ
 (ترازو): Սիորպիոս (σχορπίος), կարիճ, գեղղոմ (گژدم): Տոկու-
 տիաս (τοξύτης), աղեղնաւր, նեմասս (نیماس): Սոքա երեքեան
 յեզանակ աշնային: Ալոգիերոս (αίγόχερος), այծեղջիւր, նահաճիկ
 (نواجیک): Իւդրիքոս (υδεριχούς), ջրհոս, դոլ (دول): Իքթիւէս
 (ιχθύες), ձուկն, մահիկ (Μηλο): Սոքա երեքեան յեզանակ ձմեռ-
 նային:

իշխանութիւն, և բաւանդակութիւն առանձնական ընթացից յամս բազումս, ըստ յորովութեան տարեաց բոլորակին, իւրաքանչիւր շրջագայից, նոյնպէս և զեթանեցունց մոլորակացդ անուանելոց, ոչ միայն յամս և յամիսս, այլ և յաւուրս շաբաթու՝ զանցնիւր աստեղ օր յայտնելով. զոր և ես ձեզ նկատեմ գրել զիւրինս, և ոչ զժողահասանելիս՝ որպէս զարտաքնոցն:

Արդ կոչեցեալն ՚ի նոցանէ յընթացողաց աստղ եթաներեակն է, և գրեալ զաւուրս շաբաթուց՝ հան յօրէն յարեգակն, սյսինքն միաշաբաթուց, որպէս և ձօնեալ իսկ է հեթանոսաց զաւուրս շաբաթու՝ արեգական և լուսնի: և եթանց մոլորակացդ, զոր կոչեն Յոյնք, Հայք և Պարսք: Միաշաբաթ, էլէօս, արեգակն, խորշետ: Երկշաբաթ, սելինոս, լուսին, մանգ: Երեքշաբաթ, առէս, հրատ, նարգ: Չորեքշաբաթ, երմէս, փայլածու, կոճ: Հինգշաբաթ, դաս, լուսնթագ, տէրընջ: Ուրբաթ, ափրողիտ, լուսաբեր, անհետբա: Շաբաթ, կոռնոս, երևակ, զրուան¹⁾: Ասեն հեթանոսք ՚ի սոցանէ զրոմանս բարերարս և զրոմանս թշուառացուցիչս, որպէս խնդրեն տանուտէրութիւնս, առէս աստեղ՝ որ է երեքշաբաթ, զոր ասեն ոչ բարւոք ճանապարհորդէին, կամ առնիցէ սկիզբն գործոյ: Նմանապէս զտանուտէրութիւն կոռնոս աստեղ որ է շաբաթ, զոր ասեն ամենայն թշուառութեան պատճառ: Ըստ մեզ քաւ և մի լիցի զաւուրս խորել, վասնզի ՚ի բարիս ստեղծ Աստուած. և ս՛ր օր բարի իցէ քան զերեքշաբաթն, որ է ըստ թուոյ Երրորդութեանն, և երկիցս ՚ի Տեառնէ լսեաց յարարչութեանն թէ բարի է: կամ զինչ քան զօրն շաբաթու բարի է, զոր Աստուած սրբեաց և օրհնեաց, և հրամայեաց ՚ի նմա հան:

¹⁾ Օչ այս ևս հատուած փորցեսցուք սարգաբանել ըստ նոյն մատենագրութեանց, որ յեր. 62. Միաշաբաթ՝ էլէօս (ήλιος), արեգակն, խորշետ (خورشيد): Երկշաբաթ՝ սելինոս (σελήνη), լուսին: մանգ (Μανγκ, Vull.): Երեքշաբաթ՝ առէս (Αρης), հրատ, վահրամ (Αβραμ): Չորեքշաբաթ՝ երմէս (Ερμης), փայլածու, տեր (Τειρ): Հինգշաբաթ՝ դիոս (Διος) լուսնթագ, հորմուզ (Հορμυζ): Ուրբաթ՝ ափրողիտ (Αφροδιτη), լուսաբեր, անահիտ (Αναहित): Շաբաթ՝ կոռնոս (Κρόνος), երևակ, զրուան (Ζρwan) կամ կիվան (Κιβwan):

գիտս և թողութիւն: Քանզի բոլոր ինչ մատակարարելոց է արե-
գակն և լուսին. և ոչ ինչ յորոց յերկրի են առանց ընթակացս
այսոցիկ են. կարևոր է ուսուցանել զարեգակնայինն և զլուսնային
առանձնաւորութիւնն: որ և զինչ վիճակեալ է: Քանզի արեգակն
վիճակեցաւ զտիւն և զարական կենդանատեսական և զարևելեաց
ձագումնն: Եւ ընծայարբերս ունի զերևակին և զլուսնթագին
աստղ: Եւ լուսին հաւասար գիշերոյ և իգական կենդանատեսա-
կացս և արևմտական ձագմանն, և ընծայարբերս ունի զհրատին և
զլուսաբերին աստղ: Փայլածուն հրաւիրակաց բնութեամբ գոլով,
ընդ արեգական յարևելական ձագմանն կոյս հրձուելով: Իսկ
լուսին ՚ի յարևմտականն կոյս, նա և հասարակ իսկ բնութեամբ
վիճակել և ընդ բարերարսն բարերար և ընդ խարդախսն խար-
դախ: Իսկ բարերար աստղքն են լուսնթագ, լուսաբեր, և խար-
դախք՝ երևակ, հրատ, վասն երևակին առաւել ցրտութիւն ունե-
լոյ, և հրատին առաւել ջերմութիւն. իսկ փայլածուն հասարակաց
բնութիւն. բայց խնդիրսն ընդ տունջենային ծնելութիւնն: Երե-
գակն, Եւ լուսնթագ և Երևակ՝ յարևելեաց ձագմանն գոլով: Իսկ
՚ի գիշերային ծնելութիւնսն լուսին, հրատ, լուսաբեր՝ արևմտական
ձագմանն. զիգական կենդանատեսական ունելով լուսնի վասն
ծննդարբերութեան ասացեալ երկուց աստեղացս այսոցիկ:

Ը.

յազագս Աստեղաբաշխութեան:

Երկինք եօթն պարունակք են, որ կոչին գօտիք սառնե-
ղեալք. գօտին որ կոչի իբրից տարերնակ. այրեցանօզ գօտին՝ որ
կոչի շարահիւսակ. մեծատիր գօտին՝ որ կոչին անգոն կոռոնաւոր.
խառնարան գօտին որ կոչի որ եթերն բնակեալ է և արեգակն. և
նա ունի զհոյլս ընթացից իւրոց, զի ՚ի հինգերորդ գօտուջն է
արեգակն. զեղեցկական գօտին որ կոչին՝ այս է յորում է մոլորա-
կացն առկայումն. և խոնարհ գօտին որ կոչի մերձ առ միւս գօտին,
որ միայն եթերն բնակեալ է, ուստի հրացանութիւն և փայլատա-
կմունք լինին. իւրտումունք ամպոց: խոնարհմունք խոնաւաց,

իջմունք անձրևաց, և սնուցիչ բուսոց: Քանզի առաջին հարքն զլուսին դայեակ և սնուցիչ բուսոց անուանեցին: Այս եօթն գօտիքս են հակառակ միմեանց. առաջին գօտին հաստատութիւն ունի նովաւ որ կոչի ութերբեակ, որ կոչի երկնից: Յրտաբնակ, և զլերինս զովացուցանէ մեծ ցրտոջն. և ՚ի նմա են եօթն մոլար աստեղքն, որք են բնութեամբ ցուրտ. ուստի զսաստկութիւն ցրտոյն ՚ի բարձր կատարս լերանց իջուցանեն. և վասն այսորիկ խոնարհ տեղիք ջերմ և գոլաւորք են: զի ոչ զոյ ՚ի նոսա սաստկութիւն ցրտոյն, ՚ի բարձր կատարս լերանց իջուցանել ցրտակ անուանին, և զլերինս զովացուցանեն մեծ ցրտոջն. նաև թաղկեալ հրոյն անկմունս շիջուցանի որ կոչի անկումն արփոյն: զոր ոմանք կարթ ծիրանագոլ ասացին. և կէսք՝ հին արեգական ճանապարհ, և այլք կառս երկնից. կէսք՝ պատառումն, կէսք՝ սպի տարեալ և կէսք յարդագողս զհետ աստուածոցն. իսկ ոմանք մնուր և կայան օդոյն անուանեցին: Այլ ոչ է այդ ամենայն, այլ թաղկեալ հուր է, և մանր աստեղացն ցոլումն լուսոյ. զի շարժեալ եօթն գօտեացն յաղամողել հրոյն անգայտութիւն ունի զլերին հուրն, արգելով զցոլումն դնացից վերին հրոյն թաղկեցելոյ. և հասեալ ՚ի կիմիրական գօտին՝ շիջանի այրեցանողն, ունի զարփին թուղցեալ և զմանրաստեղս. ուստի յայսմ լուսաւորի արեգակն, գնալով երեք տասան աւուրս ընդ նա, և ապա ամենայն լուսաւորքն յարեգականէն առողանին: Ի մեր գօտւոջ են ոգիք մարդկան ըստ հարցն իմաստնոց, ՚ի նմին ժողովին կողմանաւորք մերոցն: Արդ այս գօտիս զգունդ կիսագնդին հանապազ ՚ի գիշերի տեսանէ, և ոչ փոփոխի ՚ի գիշերի. և վեցն առաւօտուն ընդ արեգականն ելանեն և գնան մինչև ՚ի մուտս արևու: Բայց է խոյն և ցուլն և եկաւորին ընդ մի տեղւոջ. և ընդ մէջն արփի: Աշիւ, կարիճ, աղեղնաւոր, և ընդ մէջն արփի: Այծեղջիւր, ջրհոս, ձուկն և ընդ մէջն արփի: Ի սրական գօտւոջն են երկոտասան փնտարքն որ կոչին կենդանակերպք: Ի խոսնարան գօտւոջն՝ արեգակն և եթերն երկրորդ, և երկու աստեղքն ընդ արեգական, որ կոչին արեգակնաբերք: Ի գեղեցկական գօտւոջն՝ լուսինն և հինգ մոլար աստեղքն, որ կոչին առիս և կռինիս: Ի խոսնարան գօտւոջն՝ եթերն երկրորդ: Այս եօթն գօտիքս են հակառակ միմեանց.

արդ այս գօտիքս են բաժինք գօտեաց, խոյն ունի զիշխանականն,
զգեղեցկականն, զգանգրական հերսն: Յուլն ունի զուժեղնականն.
Երկաւորեակն՝ զմիջասահմանականն. խեցգետինն կողմանաւոր է
և գէջ: Առիւծն՝ բըջօղ է և հողմին, մեծակն է, խնգարական և
գոռօզ: Աոյսն զարդասիրական է, գէջ և գեղեցիկ: Աշիւն հա-
րաւական է և զարդարական. կարիճն ծնելական և խոժոռակն:
Աղեղնաւորն պատերազմողական է և զօրաւոր: Այծեղջիւրն զան-
գիտական է և անբանական: Զըհոսն զիջական է և խառնական:
Չուկն բարեխառնական է, և ընդդէմ հարկանէ: Խոյն, ցուլն և
Եկաւորին՝ Պարսք և Բարեւոյն՝ որ կոչին տուն տէրունական:
Խեցգետին, առիւծ, կոյս՝ Հայք և Արդիակք և Յոյնք՝ որ կոչին
գիշերականք և կողմանացիկք: Աշիւն, կարիճն, աղեղնաւորն,
այծեղջիւր, ջրհոս, ձուկն՝ տուն որ մէջ է ընդ ամենայն երկիր:
Օ՛րի երկրօտասան մասն երկին է, և մի մասն ցամաք, մետասան
մասն ծով է, և այս տունն ՚ի վեց մասինն երկնից է, հինգ ծովու
է, և մի մասն ցամաքի:

Թ.

Պօղոսի Աղեքսանդրացւոյ նախերգան ՚ի ներքսածութենէ յոյժ:

Վեղեցկաբար ո՛վ որդի սիրելի Արօնամովն, ստապրօզս զմեզ
գրեալ յոմանց յառաջ քան զայս արտադրութիւն ներքսածակա-
նացն, յորդորեցեր միւս շարագասել նուագեալ ոչ իւրք յայնցանէ
որք ՚ի նոյն նախադրութեան պատշաճ ՚ի տեսութեան համանգա-
մայն և հարկեցուցանելով զՊօղոսեան վերաբերութիւնսն համե-
մատելով առն յանդան՝ արտագրել իբրև զայնոսիկ պիտանեզոյն
հասանելով մեր: Նա և նորին իսկ Պօղոսեայ յազազս ամանակաց
կենաց՝ նոքօք զիրազործութիւնն առնելով, և Ապողինարի հրա-
ման տալով առ ՚ի յարձակչին և տանուտեառն, և ՚ի բացբարձու-
թեան: Այսօրիւկ վառին ՚ի վերայ այսոցիկ, և Ապողոնի լա-
ւողիկեցւոյ յինքեան յառաջին իւր հնգամատեանսն գարովելով
զեգիպտացիսն, որպէս թէ բազում մոլորութիւն լեալ իցէ նոցա
՚ի կենդանատեսակացն վերբերութիւն:

ւ. յաղագս կենդանատեսակ բոլորատեսութեան :

Կենդանատեսակ բոլորակութիւն շարժի առշեղագէս՝ բաժանեալ ՚ի հատածս երկրասան, որ կոչին կենդանատեսակք. և ունի կենդանատեսակն պարունակս երիս, մասունս երեսուն, և մասնն ունի մասունս վաթսուն և մանրերկրորդակս վաթսուն :

բ. յաղագս Խոյին.

Արդ է սկիզբն կենդանատեսակ բոլորակութեան Խոյն, արական, հասարակօրեայ՝ յեղանակ գարնանային, տուն հրատի, բարձրութիւն արեգական. իննետասն նուաստութիւն երեւակի մասանց. քսան եռանգիւնի ՚ի տուրնջեան արեգական, իսկ ՚ի գիշերի լուսնթագի : Չօնեալ է նահանգին Պարսից. բաժանօղ հողմոյն արևելականի, և օրեալ գլխոյ և բոլոր երեսացն : Աւելանէ կենդանատեսակ ըստ եգիպտացւոցն և աղեքսանդրացւոցն նահանգին, որ է երկրորդ յաներևութէն յերևելի երկիրն, ՚ի ժամու միում հասարակօրոյ. յեռանգիւնի իննեակս է ամանակացն քսան և մի, և երկուց մասանց. և է յայսմիկ կենդանատեսակի երկնամիջոցակէտն երկրական տրամադրութեանց :

գ. յաղագս Յլուն :

Արկրորդ կենդանատեսակ է Յուն ՚իգական՝ հաստատուն գարնանային, տուն լուսաբերի, բարձրութիւն լուսնոյ. ունի մասունս երիս. նուաստութիւն ոչ ուրեք, եռանգիւնի, ՚ի տուրնջեան լուսաբերի, իսկ ՚ի գիշերի լուսնոյ : Չօնեալ է նահանգին Բարիլացւոց, բաժանօղ հողմոյն հարաւոյ, և օրեալ է ուլանն և պարանոցին : Աւելանէ կենդանատեսակ յաներևութէն յերևոյթն, ՚ի ժամու միօջ, և երկուց մասանց, և ամանակաց քսան և հնգից առաջիկայ նահանգին :

դ. սակս Ափաւորոյն :

Արբր կենդանատեսակ է Ափաւորին, արական, երկտարրական,

մարդակերպ, տուն փայլածուն՝ երմու բարձրութեան՝ ոչ ուրուք նուազութեան, ոչ ուրուք եռանդիւնի. և ձօնեալ է նաճանգին Պամրաց, բաժանեալ հողմոյն լիբէացւոց. և տիրեալ է ուսոց և ձեռաց և մատանց: Ալանէ կենդանատեսակն յաներևութէն յերևոյթն ՚ի ժամու միում և երկուց մասանց, և եօթն մասին. և քառասնևհինգեր մասին յիշեցե լում նաճանգին, և ամանակաց և քսան և մի երիր մասին: Աւ յայսմ կենդանատեսակի աւարտի զարնանային ժամուն յեղանակ, որ կոչի օգ:

Է. յազազս Խեցգետուացն:

Չորիր կենդանատեսակ է Խեցգետին իգական՝ յեղանակ ամառնային, տուն լուսնոյ, բարձրութիւն լուսնթագի, ՚ի մասունս եօթնևտասն. նուաստութիւն հրատի արէս, առ ՚ի մասունս քսան և ութ. ՚ի տունջեան լուսաբերի փրոդիտէս, իսկ ՚ի զեշերի հրատի: Աւ ձօնեալ է նաճանգին Հայոց, բաժանեալ հողմոյն հիւսիսոյ, և տիրեալ է լանջաց: Աւ ելանէ կենդանատեսակն յաներևութէն յերևելի երկիրս ՚ի ժամս երկուս և իններ մասին, և ամանակաց երեսուն և մի. և յայսմ կենդանատեսակի աշխարհային ժամադէտն:

Դ. յազազս Առիծուն:

Հինգերորդ կենդանատեսակ է Առիծն արական՝ հաստատուն, ամառնային, տուն արեգական. բարձրութիւն ոչ ուրուք՝ եռանդիւնի, ՚ի տուրնջեան արեգական, իսկ ՚ի զիշերի լուսնթագի: Աւ ձօնեալ է նաճանգին ասիացւոց. բաժանեալ է հողմոյն արևելից. և տիրեալ է կողից. և ելանէ յաներևութէն յերևոյթն ՚ի ժամս երկուս և երեք մասունս և ամանակս երեսուն և հինգ:

Ե. յազազս Կուսանակին:

Վեցերորդ կենդանատեսակ է Կուսանակն իգական, ամառնային, երկտարրական, տուն և բարձրութիւն փայլածուի, ՚ի մասունս հնգետասան, նուաստութիւն լուսաբերի առ ՚ի մասունս

քաննեօթն, եռանգիւնի, ՚ի տուրնջեան լուսաբերի, և զիշերի լուսնոյ: Աւ ձօնեալ է նահանգին Քաղղէացւոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ, և տիրեալ է կշտից և ստորին որովայնին, և ամենայն փորոտւոյն: Աւ ելանէ յաներևութէն յերևոյթ երկիրս ՚ի ժամս երկու և երիբ մասին, և յայտ կենդանատեսակի աւարտի ամառնային ժամուն յեղանակն, որ կոչի հուր:

Ը. յաղագս Աշոոյն:

Աթներորդ կենդանատեսակ է Աշիւն, արական, հասարակորեայ, յեղանակ աշնանային, տուն լուսաբերի, բարձրութիւն առ ՚ի մասունս երևակի. ՚ի նուաստութիւն արեգական առ ՚ի մասունս իննետասն, եռանգիւնի, ՚ի տուրնջեան երևակի, ՚ի զիշերի փայլածուի: Աւ ձօնեալ է նահանգին լիբէացւոց և Աիւրենացւոց. բաժանեալ հողմոյն լիբէացւոց, և տիրեալ է կաթանցն: Աւ ելանէ կենդանատեսակն յաներևութէն յերևոյթն ՚ի ժամս երկու և երեք մասին և քառասուն մասին, և ամանակայ երեսուն և ինն և եօթն մասանց և է երկրական տրամագրութեանն կէտ եթերական:

Թ. յաղագս Աորին:

Աթերորդ կենդանատեսակ է Աորն՝ հաստատուն, աշնանային, տուն հրատի: Բարձրութիւն ոչ ուրուք, նուաստութիւն լուսնի առ ՚ի մասունս երեք, եռանգիւնի, ՚ի տուրնջեան լուսաբերին, ՚ի զիշերի հրատին: Աւ ձօնեալ է նահանգին Խտալացւոց, բաժանեալ հողմոյն հիւսիսոյ, և տիրեալ է առնացի անդամոցն և գանձակի և ցայլիցն: Աւ ելանէ կենդանատեսակն յաներևութէն յերևոյթն ՚ի ժամս երկու և երեք մասունս և ամանակս երեսուն և եօթն:

Ճ. յաղագս Աղեղնաւորին:

Իններորդ կենդանատեսակ է Աղեղնաւորն, երկտարրական, աշնանային, տուն լուսնթագի, և ձօնեալ է նահանգին Արիլիեցւոց և Արետացւոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ, և տիրեալ է երանացն: Աւ ելանէ յաներևութէն յերևոյթն ՚ի ժամս երկու և

իններ մասին, և յամանակս երեսուն և մի, և երեք մասին: Այս յայտման կենդանատեսակի աւարտի աշնանային ժամուն յեղանակ, որ կոչի երկիր:

ժն. յաղագս Աճեղջերն:

Տասներորդ կենդանատեսակ է Աճեղջերն, իգական, յեղանակ ձմեռնային, տուն երևակի, բարձրութիւն հրատի առ ՚ի մասունս հնգետասան, եռանդիւնի, ՚ի տուրնջեան լուսաբերի և ՚ի գիշերի լուսնոյ: Այս ձօնեալ է նահանգին Ասորոց. բաժանեալ հողմոյն հարաւոյ, և ելանէ յաներևութէն յերևոյթն ՚ի ժամութում և երկու մասին և եօթն մասին և քառասուն և հինգեր մասին, և ժամանակաց քսան և ութ և երից մասանց: Այս երկրական տրամագրութեանն կէտ սուղական:

ժբ. յաղագս Ջրահեղին:

Մետասաներորդ կենդանատեսակ է Ջրահեղին, արական, հաստատուն, ձմեռային, տուն երևակի, բարձրութիւն ոչ ուրուք, նուաստութիւն ոչ ուրուք, եռանդիւնի, ՚ի տուրնջեան երևակի, ՚ի գիշերի փայլածուի, բաժանեալ հողմոյն լիբէացոց: Այս ձօնեալ է նահանգին Ազիպտացոց, և տիրեալ է սրանցն, և ելանէ յաներևութէն յերևոյթն ՚ի ժամութում և երկուց մասանց և ամանակաց քսան և հինգ:

ժգ. յաղագս Չկանցն.

Արկոտասան կենդանատեսակ է Չկանք, իգական, երկտարրական, ձմեռնային, տուն լուսնիմագի, բարձրութիւն լուսաբերի, առ մասունս քսան և հինգ, նուաստութիւն փայլածուի առ մասունս հնգետասան, եռանդիւնի, ՚ի տուրնջեան լուսաբերի, ՚ի գիշերի հրատի: Չօնեալ է նահանգին Կարմիր ծովուն և Հնդկաց երկրին, բաժանեալ հողմոյն հիւսիսոյ, և տիրեալ է թաթից ոտիցն և կոչեցելում ծայրից մասանցն, և իններ մասին: Այլանէ յաներևութէն յերևոյթն ՚ի ժամ մի, և երից մասանց, և ամանակաց

քան և հինգ և երկուց մասանց : Լը յայսմ կենդանատեսակի
աւարտի ձմեռնային յեղանակ, որ է ջուր :

ժդ. Վերագլխութիւն :

Երկոտասան կենդանատեսակացն ըստ իւրաքանչիւր տարբե-
րութեանց երկոտասան կենդանատեսակացն այսպէս ինչ ասաց :
Բայց առ միահամուռ զնոսա իմանալ՝ այսպէս արտադրիցի : Եւրա-
կանք են այսօքիկ. Խոյ, Լիաւոր, Լուիւծ, Կշիռ, Լղեղնաւորն,
Ջրահեղն. իսկ իգականք՝ սոցա մնացուածքն. Յուլն, Խեցգետին,
Կուսանակն, Կորն, Լոժեղջիւրն, Չկունքն. և համանգամայն իսկ
ասել որքան աւելորդութիւն ուենլով սոցա՝ յառաջնմէն հաւելով
ի Խոյէն՝ այսօքիկ քեզ արականք իմացեալ լիցին. իսկ որքան
հաւասարք՝ իգականք. իսկ յեղանականք Խոյ, Խեցգետի, Կշիռ,
Լոժեղջիւր : Իսկ հասարակաւորքն Խոյ, Կշիռն : Իսկ զուգա-
թիւքն սոցա՝ են հաստատունք՝ Յուլն և Լուիւծն, Կարիձն,
Ջրահեղն : Երկտարրական սոցայց զօրութիւն գօլով են այսօքիկ.
Երկաւորեակն և Կուսանակն, Լղեղնաւորն. և շարառոցելով
ասել որքան քառիւքն բաղկացեալ այսօքիկ, զնոյն կենդանա-
տեսակաց բնութիւն : Լը բնակարանք են Խոյի և Կարձի՝ հրատ-
արէս. Յուլն՝ լուսաբերի ափրօդիտեայ. Երկաւորեակն և Կուսա-
նակն՝ փայլածուի, երմու. Խեցգետինն՝ լուսնոյ. Լուիւծն՝ արեգա-
կան. Լղեղնաւորն և Չկունքն՝ լուսնթագի, դիոս. Լոժեղջիւրն
և Ջրահեղն՝ երևակի, կրօնոս : Լը բարձրութիւն են Խոյն՝ արե-
գական, Յուլն՝ լուսնոյ, Խեցգետինն՝ լուսնթագի, Կուսանակն՝ փայ-
լածուի, Կշիռն՝ երևակի, Լոժեղջիւրն՝ հրատի, Չկունքն՝ լու-
սաբերի : Լը որքան զայս հեռի տեսակով տրոհեալք են՝ այսօքիկ
նուաստութիւնք են : Իսկ եռանգիւնիքն՝ Խոյն, Լուիւծն, և
Լղեղնաւորն՝ ՚ի տուրնջեան արեգական. իսկ ՚ի գիշերի լուսըն-
թագի. Յուլն, և Կուսանակն և Լոժեղջիւրն, ՚ի տուրնջեան լու-
սաբերի, իսկ ՚ի գիշերի՝ լուսնոյ : Իսկ Երկաւորեակն և Կշիռն և
Ջրահեղն՝ ՚ի տուրնջեան՝ երևակի, իսկ ՚ի գիշերի՝ փայլածուի :
Խեցգետինն և Կորն և Չկունքն՝ ՚ի տուրնջեան լուսաբերի, իսկ
ի գիշերի հրատի : Լը բնտանացեալ է առաջին եռանկիւնին

արևելից, երկրորդն հարաւոյ, երրորդն լիբէացւոց, չորրորդն հիւսիսոյ: Նաև ցաւակից լինին գաւառացն կենդանատեսակքն. Խոյն՝ Պարսից, Յուլն՝ Տաբելացւոց, Ակաւորն՝ Վամրաց, Խեցգետին՝ Հայոց, Առիւծն՝ Ասիացւոց, Կուսանակն՝ Ալլադացւոց և Յունաց, Կշիռն՝ Իբէացւոց, Կարիձն՝ Իտալացւոց, Աղեղնաւորն՝ Կիլիկեցւոց, Այծեղջիւրն՝ Ատրւոց, Զարհոսն՝ Ագիպտացւոց, Չկունքն՝ Հրնդկաց աշխարհին:

ԺԵ. յազազս խառնարան աստեղաց:

Հնաստղն, Խողովակն, Վաքն, Ծիծառն, Արջն, Վիշապն, Բագմոտանին, Բուեռքն երկնից, Խիփակն, Սայլն, միւս Սայլն, Մարդոն, Կձնդիաց¹⁾, Ղոկանոտնն, Զարբաշին, Խողն, Անդիակն, Արկողն. այս աստեղք են որ ցուցանեն զանձրևաց սաստկութիւն և որ ՚ի ծովու գնան սոքիմք՝ մանաւանդ Սայլք յայտնի ցուցանէ զնաւաղնացաց զհետ. զի հիւսիսական աստեղքդ ոչ են գնացականք, այլ կացականք. և շարժեալք ՚ի վերին եօթն գօտեացն՝ որպէս ՚ի ծովու ալեկոծին: Այս են նշանացոյց աստեղք: Տխմարք եպերեն որք ոչ գիտեն զգիրս. այլ Մովսէս գրէ թէ՛ եդ զնոսա Աստուած ՚ի նշանս և ՚ի ժամանակս, և յաւուրս և ՚ի տարիս: Կատարէ եօթներբեակ գօտին, այս են աստեղք որք են եւթն մոլարք. զի զարեգակն և զլուսին ընդ եօթն մոլորակացն եդեալ հարցն իմաստնոց, եթէ ՚ի տէրունականն խաւարումն դիպիցի, մեծ նեղութիւնք հասանեն երկրի և տագնապ, յոր և իցէ եօթն մոլորակացն. հրատ և լուսաբեր յորժամ ընդ կարձին պարանոցն անցանեն՝ արեան նշանակ է և վախճան նոցա՝ կորուստ երկրի: Աւ եթէ ՚ի կարձէն գալով լինի, որ բարկ աստղիկդ կայ ՚ի գլխոյն և ՚ի վերայ բարկի անդ գտանին, մեծ նեղութիւնք գան երկրի և տագնապ յոր և իցէ: Փայլածուն յորժամ զվարսն ցուցանէ, զոր ոմանք գիտաւոր կոչեն. և առնու զգէսսն իբրև զգալի զլոյսն յինքն առնու, մեծ պատերազմունք և արիւնահեղութիւնք

1) այսպէս յօրինակին:

զան յերկրի, և տազնապ ՚ի հարաւոյ կողմանն: Խոյն՝ յորում են աստեղք եօթն՝ եթէ հայիս և տեսանես զեօթն և զչորս այլ զիւզեալ առ իրեարս՝ զիտասջիւր թէ եկեալ հասեալ են թշնամիք և զքե պատեալ: և զիտասջիւր զի ՚ի խաղաղութեան մնաս: Յուլն՝ յորում են աստեղք երկոտասան՝ եթէ հայիս և տեսանես զնոսս յեղջիւրս հարեալ՝ զիտեան թէ վաղվաղակի լինին պատերազմունք և կռիւք. բայց տարին յօգոց և յանձրեաց լինի: Արկաւորին՝ յորում են աստեղք երկու՝ եթէ տեսանիցես զնա ՚ի լուծ ուղղորդ՝ զիտեան թէ մեծամեծաց կորուստ գայ, և տղայոց յախտից մահ. բայց տարին լի և պտղաբեր լինի: Խեցգետին՝ յորում են աստեղք երեքտասան, որ կոչին կողմանագնացիկք՝ եթէ տեսանիցես զնոսս ՚ի ճանապարհէն խոտորեալ: զիտեան թէ ապստամբութիւն լինի զօրաց, մեկնեսցին յիւրաքանչիւր տերանց, և թշնամիս բազումս ածեն ՚ի վերայ երկրի. բայց երկրի վնաս ինչ ոչ կարեն առնել: Առիւծն՝ յորում են աստեղք տասն՝ եթէ տեսանիցես զնոսս միաժողով, զիտեան թէ թագաւորք ելանեն, և մի ՚ի նոցանէն կորնչի: Աւ եթէ տեսանես զճանգն արիւնագոյն՝ զիտեան թէ ինքն կորնչի, և զօրքն ապրին. և արեգակն ՚ի տարւոջն երեք անգամ խաւարի: Կոյսն՝ յորում են աստեղք երեք, եթէ տեսանիցես զնոսս պայծառս և այլանմանս և մլմլոտս: զիտեան թէ ողորմութիւնն Աստուծոյ գթացեալ է ՚ի վերայ երկրի և խաղաղութիւն լինի և թշնամեաց կորուստ. երկրի լիութիւն, և պտղոց առատութիւն: Կշիռն յորում են աստեղք երեք, եթէ տեսանիցես զնոսս զհարաւային կողմամբքն, բարձր քան զմիւսն, եթէ ես ինչ ՚ի վերայ թշնամոյն՝ ՚ի բաց դարձիր, զի չես յաղթօղ. ապա եթէ զհիւսիսայինն տեսանես բարձր՝ երթ, զի յաղթես: Կարիճն՝ յորում են աստեղք երեսուն կարգք կարգք, եթէ տեսանիցես զկարգն խառնեալ առ կարգն, զիտեան թէ առաջին աւուրքն ձմերայնոյն քաղցր գան: Աղեղնաւորն՝ յորում են աստեղք վեց, եթէ տեսանիցես զնոսս ՚ի թռթռմանց, զիտասջիւր թէ առաքին ՚ի նոցանէ աստեղք հանգոյնք, ծովք խոռովին, և ամպք զուարճանան և թագաւորք զուարթանան: Այծեղջիւրն՝ յորում են աստեղք երեք մի քան զմի ձիգ, եթէ տեսանիցես զնոսս զկարճն և զերկայնն զուգեալ

առ իրեարս՝ գիտեան թէ քեզ զնալ պիտի յերկրէս, և բազում այլ սիրելեաց ընդ քեզ. ապա թէ այլ լուսով տեսանես, գիտեան թէ բազում ծնունդք ՚ի տան քո լինին: Զարհոսն՝ ասող վեց: Չուկն՝ ասող հինգ. մին՝ յորդ անձրեաց նշանակիչ, և միւսն՝ խոտվութեանց: Այս է յարեալ հմտութիւն ՚ի կենդանատեսակս¹⁾:

¹⁾ Յօրինակին ՚ի վախճան իջին կատարի բանս և յաւելու ՚ի լուսանցսն. «Յորոց թէ հրամանն Աստուծոյ յաղթահարելով զսոսա՝ յայլ իմն շրջեցէ զդիպուածքն, կշտամբեցիս դու ստաբան գոլ»:



und die von ihm selbst angeführte
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

Die Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist. Die
 Geschichte ist diejenige, welche
 in der That geschehen ist.

1871
1872
1873
1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

